

«Հայրենիք» մատենաշար, թիվ 34

*Նվիրվում է Հայկ Ասատրյանի ծննդյան 120-ամյակին*

**ՀԱՅԿ ԱՍԱՏՐԵԱՆ**

**ԱՐԹՆԱՑԻՐ, ՀԱՅ ՄԱՐԴ**

Հրատարակիչ «ՀԱՅԲԵՆԻՔ» ակումբ

ԵՐԵՎԱՆ 2020

*Հրատարակության պատրաստեց՝ Ավագ Հարությունյանը*

Ասատրյան Հայկ, Արթնացի՛ր, հա՛յ մարդ: Նվիրվում է Հայկ Ասատրյանի ծննդյան 120-ամյակին: «Հայրենիք» մատենաշար, թիվ 34: Հրատարակիչ՝ «Հայրենիք» ակումբ, Երևան, 2020, 145 էջ:

Ժողովածուի մեջ ամփոփված են Հայկ Ասատրյանի «Մտածումներ հայկական ճգնաժամի, հայ յեղափոխութեան եւ Մայիս 28-ի մասին» և «Ցեղանենգ շէթանը» գրքույկները («Հ. Ա.» ստորագրությամբ հրատարակվել են Սոֆիայում 1933թ. «Ռահվիրա» տպարանում, «Նայիրի» մատենաշարով), երեք հոդվածները, նրա մասին Կարո Գևորգյանի, Սոսյաց տղայի (Կարո Մեհյան), Ավոյի (Ավետիս Թումոյան) հուշ-հրապարակումները և ԽՍՀՄ ՊԱԿ-ի կողմից կատարված հարցաքննության պահպանված քաղվածքը:

© «Հայրենիք» ակումբ

## ՀԱՅԿ ԱՍՏՏՐՅԱՆ (Կենսագրական ակնարկ)<sup>1</sup>

Իբրև գիտության և տեսական խղճմտանքի մարդ՝  
[Հայկ Ասատրյանը] իր խոսքը ծառայեցրել է ճշմարտության,  
իսկ փրկարար ճշմարտությունը՝ իր անիրավված ժողովրդին:

**Գ. Նժդեհ**

Մեր դարի 30-ական թվականների Հայկական ցեղային շարժման գաղափարական գործիչների մեջ իր հզոր իմացականությամբ և վառ արտահայտված անհատականությամբ առանձնանում է Հայկ Ասատրյանը, «Նժդեհի գլխավոր՝ գուցե և միակ խորհրդատուն»<sup>2</sup>, որին Կարո Գևորգյանը բնորոշում է՝ «գիտական մտապաշարով հարուստ և իր փիլիսոփայատիպ խառնվածքով հանրածանոթ...»<sup>3</sup>:

Հայկ Ասատրյանը ծնվել է 1900թ. փետրվարի 5-ին Ալաշկերտի գավառի Երից գյուղում<sup>4</sup>: Արմատները Տարոնից են: 8 տարեկանում կորցնում է հորը (հայրը՝ Կիրակոսը, գյուղապետն էր), և քրոջ ու եղբոր հետ մնում է մոր խնամքին: Նախնական կրթությունը ստացել է տեղի վարժարանում, որն ավարտելուց հետո ընդունվում է Հ.Յ.Դ. Աշակերտական միություն: Այնուհետև, ուսումը շարունակում է

---

<sup>1</sup>Տեղեկությունների մի մասը քաղել ենք Ավոյի «Տոքթ. Հայկ Ասատրեան» հոդվածից («Հեղափոխական Ալբոմ», Բեյրութ, 1971, թ. 11):

<sup>2</sup> Ավո, Նժդեհ, Բեյրութ, 1968, էջ 457:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1957, օգոստոսի 11, էջ 3:

<sup>4</sup> Հ.Ասատրյանի հարցաքննության արձանագրության քաղվածքում իբրև ծննդավայր նշված է Թավրիզը (ՀՀ Ա.Ա.Ծ արխիվ, ԿԳՖ, գ. 11278, հտ. 3): Սակայն, նրա քննչական գործի հիման վրա գրված տեղեկանքում որպես ծննդավայր նշված է Ալաշկերտի շրջանի Երից գյուղը (В.Овсепян, Гарегин Нжде и КГБ, Ер., 2007, с. 106): Կարծում ենք, իբրև ծննդավայր Թավրիզի նշումը շփոթմունք է՝ կապված նրա պարսկահպատակ լինելու հետ: Հ. Ասատրյանի պարսկահպատակ լինելու մասին է վկայում նաև Կարո Մեհյանը («Հայրենիք», 1958, թ. 5, էջ 83):

Երևանի թեմական դպրոցում: Հայաստանի Հանրապետության օրենքին որպես Աշակերտական Միության պատգամավոր մասնակցում է Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովին: 1918-1919թթ. Երևանում խմբագրում է Հ.Յ.Դ. Աշակերտական միության օրգան «Շանթ» թերթը<sup>1</sup>:

Իր մասնակցությունն է բերում 1921թ. փետրվարյան ապստամբությանը, որի ճնշումից հետո՝ ձերբակալությունից խուսափելու համար, ստիպված հրաժեշտ տալով հարազատներին, անցնում է Թավրիզ (այստեղ ստանում է պարսկահայատակի անձնագիր): Շատ չանցած, Թավրիզ է գալիս նաև Գ. Նժդեհը և միասին անցնում են Եվրոպա: Եվրոպայում նա ուսանում է նախ Բեռլինի բարձրագույն քաղաքական դպրոցում, ապա՝ Պրագայի համալսարանի փիլիսոփայության բաժնում, որն ավարտում է 1930թ.՝ ստանալով դոկտորի աստիճան: Իր հետ ուսանած Անդրե Ամուրյանը հետագայում հիշում էր. «Հայկ մեծ եռանդով նվիրվեցավ փիլիսոփայության ճյուղին: Կարդալու և պարապելու հետաքրքրական և ինքնօրինակ կերպ մը ուներ: Նախ՝ վերարկուն երբեք չէր հագներ, այլ՝ կնետեր ուսերուն: Հաճախ կնստեր հատակին ու Նիցշեի և կամ Կանտի գիրքը առջև դրած՝ կկարդար եղանակով, ճիշտ դերվիշի տպաւորություն ձգելով: Արդեն կենցաղով ալ Հայկը դերվիշ էր, աննյութասեր, կյանքի հաճույքներուն վրա քամահրանքով նայող, կատեր սուտն ու կեղծիքը, շողոքոթությունն ու քծնանքը, մարդոց թերությունները կըսեր իրենց ճակտին»<sup>2</sup>:

Ուշագրավ են Ասատրյանին նվիրված հիշողություններում Բուդարիայի նրա կուսակիցներից Կարո Մեհյանի (որ հանդես է գալիս «Սօսեաց տղան» ծածկանունով)՝ իր իմացականությունը բնորոշող վկայությունները. «Մղված իր սերեն, ինչպես և նպաստավորված իր արտակարգ հիշողութենեն, ան (Հ. Ասատրյանը - Մ.Լ.) ուսումնասիրած էր Հայաստանի աշխարհագրությունը մանրամասնորեն: Հայե-

<sup>1</sup> Մեզ հայտնի են «Շանթ»-ի 1919թ. 1, 2, 4-7, 9 համարները:

<sup>2</sup> «Հեղափոխական այբում», 1971, թ. 11, էջ 286:

րեն թե օտար լեզուներով գրված բոլոր գործերը, որոնք կխոսին մեր երկրի մասին, ծանոթ էին անոր: Նաև մեր մատենագրության մեջ չկար տող մը, որուն վրա ան տքնած չըլլար: Նարեկացիեն երկար հատվածներ կարտասաներ գոց: Իսկ առհասարակ հայերեն լեզուն ան իրեն համար վերածած էր տեսակ մը մասնագիտության: Տևապես «կխուզարկեր» բառերը, կբաղդատեր օտար բառերու հետ ու չէր հանդարտեր, մինչև որ չլուծեր անոնց ծագման կամ արմատի հանգույցը: Մեղմ՝ իր մտածումներուն մեջ և ատկե՝ քիչ մը «թանձր» արտահայտվելու իր ձևով, Հ. Ասատրյան հարկադրվա՞ծ կըլլար, թե՞ կնախասիրեր նոր բառեր կերտել: Իր փոքրաթիվ գրքերուն և բազմաթիվ հոդվածներուն մեջ ունի մեծ թիվով բառեր, որոնք «իրն» են, և զորս կարժե «լույսին բերել», տրված ըլլալով, որ անոնցմէ շատերը արտահայտիչ են, հեշտալուր և մեր լեզվին օրենքներուն համապատասխան: Որովհետև այս «դերվիշը» ո՛չ միայն հասկացողություն և հմտություն, այլե՛ւ ճաշակ ունէր: Ճաշակ՝ ամեն բանի մեջ ու գեղեցկագիտական ըմբռնումով»<sup>1</sup>:

Այնուհետև, Հ. Ասատրյանը անցնում է Բուլղարիա, ուր մնում է Գ. Նժդեհի մոտ և գործում նրա հետ: Բուլղարիայի հետ է կապված նրա ազգային-քաղաքական գործունեության ամենաբեղուն և եռանդուն շրջանը: Հ. Ասատրյանը ուսուցչություն էր անում Մոֆիայի Գևորգ Մեսրոպ ձեմարանում և միաժամանակ Հ.Յ.Դ. տեղի ԿԿ-ի քարտուղարն էր:

Հ. Ասատրյանը եղավ Նժդեհի ամենամոտ գործակիցը 30-ական թվերի Հայկական ցեղային շարժումը ծավալելու և հիմնավորելու գործում: «Հայկը աջ բազուկն էր Նժդեհին, երբ «Ցեղակրոնություն» գաղափարաբանությունը կխմբագրեր»<sup>2</sup>: Նա խորապես ընկալեց Նժդեհի ուսմունքը և նրա գաղափարների մի տեսակ մեկնիչ (թերևս չգերազանցված) հանդիսացավ: Վերջինիս երկու մենագրությունների՝

---

<sup>1</sup> «Հայրենիք», 1958, թ. 5, էջ 81:

<sup>2</sup> «Հեղափոխական այլբում», 1971, թ. 11, էջ 291:

«Յեղի ոգու շարժը», «Ամերիկահայությունը-Յեղը և իր տականքը» վերաբերյալ Հ. Ասատրյանի մեկնաբանություններն ու խորհրդածությունները լավագույնս ա՛յդ են վկայում:

1932թ. Սոֆիայում Հ. Ասատրյանի նախաձեռնությամբ և խմբագրությամբ լույս է տեսնում «Խռովք» իմաստասիրական-գիտական ամսագիրը, որը սակայն Հ.Յ.Դ. կողմից զջակցություն չի ստանում և փակվում է: 1935թ.-ից Բուլղարիայի Հ.Յ.Դ. ԿԿ-ի ներսում ունեցած տարաձայնությունների պատճառով կուսակցության հետ իր կապերը փաստացիորեն խզում է: Դրանից հետո 1936թ. կրկին Սոֆիայում Ներսես Աստվածատուրյանի հետ լույս են ընծայում «Յեղ և Հայրենիք» կիսամյան, որը նույնպես երկար կյանք չի ունենում:

1937թ. Հ. Ասատրյանը պաշտոնապես Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից հեռացվել է կուսակցությունից<sup>1</sup>: Ի դեպ, Հ. Ասատրյանը Հ.Յ.Դ.-ից հեռացվել է մի փոքր շուտ, քան Նժդեհը, և ոչ առանց հիմքի: Այս կապակցությամբ «Ամրոց»-ը 1937թ. թ. 20-ի խմբագրականում նրան համարում էր քավության նոխազ Նժդեհի «մեղքերին»:

Մեզ հայտնի են 1933թ. Սոֆիայում հրատարակված նրա երկու գրքույկները՝ «Յեղանենգ շէթանը» և «Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ հեղափոխության և Մայիս 28-ի մասին»:

1937թ.-ից Գ.Նժդեհի հետ հիմնում և մինչև 1944թ. հրատարակում են «Ռազմիկ» հասարակական-քաղաքական կիսաշաբաթաթերթը, որը փաստորեն Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպության թերթն էր: Խմբագիրը որոշ ընդմիջումներով Հ. Ասատրյանն էր:

Եղել է Տարոնական շարժման հիմնադիրներից ու գաղափարախոսներից և 1938-1939թթ. Ն. Աստվածատուրյանի հետ խմբագրել է Սոֆիայում հրատարակվող «Տարոնի Արծիվ»-ը, որը Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական Միության պաշտոնաթերթն էր:

---

<sup>1</sup> ՀՀ ԱԱԾ արխիվ, ԿԳՖ, գ. 11278, հտ. 3: Կ. Գևորգյանը Հ. Ասատրյանի մահագրության մեջ ևս նրան հիշատակում է իբրև նախկին դաշնակցականի («Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1957, էջ 642):

1942թ. Ն. Ասատրյանն ավարտում է Հայկական հարցին և արժեքներին նվիրված «Հայաստան - Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում» գրքի Ա մասը (գրքի առաջաբանը գրել է Գ. Նժդեհը) և շտապ մեկնում Բեռլին՝ գերմաներեն թարգմանել տալու և անմիջապես հրատարակելու համար: Այդ գործի կարևորությունը պայմանավորված էր նրանով, որ մի շարք եվրոպացի գիտնականներ սխալ տեղեկություններ էին տվել Հայ ցեղի ծագման մասին (կասկածի տակ էր դրվում հայերի արիական ծագումը), և այս ապատեղեկատվության հիման վրա նացիստական կուսակցության մեջ ձևավորվել էր մի թև՝ Ռոզենբերգի ղեկավարությամբ, որն հայերին վերագրում էր սեմական ծագում: Վտանգի տակ էր գերմանական տիրապետության տարածքում բնակվող շուրջ 400 հազար հայերի գոյությունը: Հետևաբար, անհրաժեշտ էր գործնական ու գիտաքարոզչական միջոցներով վերացնել այդ վտանգը:

Ն. Ասատրյանի Բեռլին մեկնելու պատճառով 1943թ. սկզբին Գ. Նժդեհի կողմից Բուլղարիա է հրավիրվում Կարո Գևորգյանը (որը Սալունիկում 1928-1937թթ. խմբագրում էր «Հորիզոն» թերթը ու եղել է տեղի Ցեղակրոն Ուխտերի ղեկավարը), որն առժամանակ խմբագրում է «Ռազմիկ»-ը: 1943թ. վերջին Ն. Ասատրյանը վերադառնում է Բուլղարիա և կրկին անցնում «Ռազմիկ» թերթի խմբագրմանը, ինչպես նաև ավարտում գրքի Բ մասը, որը սակայն լույս չի տեսնում:

Երբ 1944թ. համայնավարները գրավեցին Բուլղարիան՝ իրար ետևից ձերբակալվեցին Գ. Նժդեհը, Ն. Ասատրյանը (ձերբակալվել է 1945թ. հունվարի 27-ին) և Ն. Աստվածատուրյանը: Ն. Ասատրյանը դատապարտվելով 10 տարվա ազատազրկման՝ նախ ուղարկվում է Քիշինևի, այնուհետև՝ Ուրալի բանտը, ուր գտնվում էր նաև Ն. Աստվածատուրյանը: Վերջինս որոշ ժամանակ անց մահանում է: Իր սիրելի ընկերոջ մահվան լուրը Ն. Ասատրյանն առնում է անկողնում ծանր հիվանդ պառկած և հազիվ կարողանում է տեսնել միայն նրա դիակը՝ բանտից դուրս հանելիս:

1952թ. Հ.Ասատրյանին Ուրալից փորձում են տեղափոխել Երևան (Գ. Նժդեհի մոտ)՝ Հ. Յ. Դ. և Թուրքիայի հետ կապված խնդիրներում օգտագործելու համար: Սակայն, առողջական ծանր վիճակի պատճառով դա տեղի չի ունենում:

Հ. Ասատրյանի ձերբակալումից հետո հալածվում են նաև նրա ընտանիքի անդամները: Կնոջն ու երկու աղջիկներին (Հեղինե և Արածանի) աքսորում են Պավլիկենի քաղաքը, ուր աքսորվել էր նաև Գ. Նժդեհի ընտանիքը: Նրանց ստիպում են ամեն առավոտ ու երեկո ստորագրություններ տալ ներկայության համար, իսկ տիկնոջը նույնիսկ արգելում են աշխատել: 1947թ. Հ. Ասատրյանի կինը (Սիրանուշ Խանջիկյան) Չեկայի կողմից ստանում է կեղծ երկտող՝ ամուսնու մահվան մասին, որից հետո նրան խրատում են ամուսնանալ, քանզի հակառակ դեպքում աշխատանքի իրավունք չի ունենա և կղիտվի որպես հակակառավարական անձ: 1951թ. տիկին Ասատրյանը ամուսնանում է մի բուլղարացու հետ՝ այդպես փորձելով պահել երկու աղջիկներին:

1955թ. ընդհանուր ներման շնորհիվ ազատվելով բանտից՝ Հ.Ասատրյանը ծանր հիվանդ վիճակում վերադառնում է Մոֆիա և ցավով իմանում ընտանիքի ու հատկապես կնոջ նկատմամբ Չեկայի խարդավանքների մասին: Սակայն, ստիպված է լինում հաշտվել իրականության հետ և մնում է մեծ աղջկա՝ Հեղինեի մոտ (ի դեպ, Հեղինեի կնքահայրը Գ. Նժդեհն էր):

Սարգիս Սարունու վկայությամբ բանտարկության տարիներին «թերթի լուսանցքներուն վրա Հայկ գրած էր ընդարձակ դյուցազներգություն մը, որով կուտար հայ ժողովուրդին ամբողջ պատմությունը, սկիզբէն մինչև մեր օրերը»<sup>1</sup>, որը ցավոք կորել է: Աքսորի վերջին տարիներին Ասատրյանի գրած անավարտ «հանավոր մեկ վեպի» մասին է վկայում նաև նրա բանտակից Կարո Մեհյանը<sup>2</sup>:

---

<sup>1</sup> «Հեղափոխական ալբոմ», 1971, թ. 11, էջ 291:

<sup>2</sup> «Հայրենիք», 1958, թ. 5, էջ 83:



1956թ. հունվարի 13-ին Հայկ Ասատրյանը վախճանվում է սրտի կաթվածից: Մահվան պահին երկինք նայելով երեք անգամ բացականչում է. «Ա՛խ, Հայաստա՛ն...»:

Այսպես է ընդհատվում ցեղադրոշմ կյանքը հայաշունչ մտավորականի, որի դեռևս քիչ հայտնի տեսական ժառանգությունը կգանշուշտ լրացնելու հայ, թերևս ոչ այնքան հարուստ, ազգային-իմաստասիրական միտքը:

Մուշեղ Լալայան

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ,

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՅԻՍ 28-Ի ՄԱՍԻՆ

## Ա.

### ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

**Հարց.** Ի՞նչպես կը խմբաւորուին այն պատճառները, որոնք ծնունդ տուին հայ յեղափոխական շարժման:

**Պատասխան.** Հայ յեղափոխական շարժման ծնունդ տուող պատճառները կը խմբաւորուին՝ ա) իբր *առարկայական-եղերական իրականութիւններ*, բ) իբր *ենթակայական-հերոսական ոգորումներ*: Առաջին կարգի իրականութիւնները հասունցուցին հայկական ճգնաժամը և ի վերջոյ, հայ ժողովրդի մեծագոյն զանգուածը ենթարկեցին օսմանեան բռնատիրութեան զարհուրելի նախաձիւրներուն: Երկրորդ կարգի ոգորումները ծայրայեղ յուսահատութեան մատնուած ժողովուրդը մղեցին ինքնափրկումի այլազան փորձերու և ի վերջոյ, բանաձևուեցան «ագատութի՛ն կամ մա՛հ» նշանաբանով:

#### Ա. Առարկայական-եղերական իրականութիւններ

**Հարց.** Ի՞նչ և որպիսի՞ պատճառներով հասունցաւ հայկական ճգնաժամը:

**Պատասխան.** Հայկական ճգնաժամը հասունցաւ բազմաթիւ և բազմապիսի պատճառներով, որոնց էութեան հանգամանօրէն ծանօթանալը անհրաժեշտ է մեր պատմական, քաղաքական և հասարակական կեանքի կնճիռը վերծանելու տեսակետէն: Այստեղ, սակայն, ստիպուած ենք գոհանալ անոնցմէ գլխաւորներու բնութագրմամբ, այն ալ՝ ամենահամառօտ կերպով:

Ահա, հայկական ճգնաժամը հասունցնող գլխաւոր պատճառները.

1. **Բնա-աշխարհագրական.** Առաջաւոր Ասիոյ հիւսիս-արևմտեան մարզը գրաւող, իրանական և փոքր-ասիական սարահարթերու և Միջագետքի ու կովկասեան հարթավայրերու միջև տարածուող Հայաստանը հսկայակարկառ բարձրաւանդակ մըն է: Շնորհիւ իր յիշատակելի բարձրադրութեան՝ հայոց աշխարհը բնօրէն, կլիմայապէս ու տնտեսապէս խստօրէն կը զատորոշուի շրջակայ երկիրներէն, որով՝ *արտաքուստ* ունի միացեալ և ինքնուրոյն նկարագիր մը: *Ներքուստ*, սակայն, Հայաստանի բնութիւնը տարանջատական

է: Արևելքէն արևմուտք երկարող չորս լեռնագօտիները (Հայկական Կովկաս, Հայկ. Պար, Ծաղկանց, Հայկ. Տաւրոս), ասոնց բազմաթիւ բազուկներու զուգահեռական ճիւղաւորումները և զիրար խաչաձևող կամ միմեանց հանգուցուող ենթաշղթաները, ինչպէս նաև առանձնակի կանգնած կամ այլևայլ շղթաներու նկատմամբ բաւիղներու դեր խաղող կոներն ու հանգոյցները (Արարատ, Արագած, Սիփան, Սուկաւ, Բիւրակն, Նեբրովթ, Թոնդրակ, Մարաթու և այլն և այլն) կազմելով լեռնագրական արտակարգօրէն բարդ սիստեմ մը՝ կ'ընծայեն բարձրաբերձ լեռներով իրարմէ կտրուած հարիւրաւոր հովիտներու, ձորերու և կիրճերու բնաշխարհ մը: Լեռնագրական արտաքուստ կեդրոնահակ, ներքուստ կեդրոնախոյս այս իրականութեանց և բարձրաւանդակի սեպաձև դիրքի շնորհիւ՝ գետերն ալ, մեծ մասամբ, հակահոս են (Արաքսն ու Կուրը կը հոսին դէպի արևելք, Արածանին՝ արևմուտք, Եփրատը՝ նախ դէպի հարաւ-արևմուտք, ապա՝ դէպի հարաւ, Ճորոխը իր մանուածապատ չուն ի վերջոյ կ'ուղղէ հիւսիսին, արևելեան Տիգրիսը՝ [Ջերմ, Բոհդան] արևմուտքին, արևմտեան Տիգրիսը՝ արևելքին): Այսպէս՝ ջրագրորէն երկիրը չի ներկայացներ կեդրոնացեալ դրութիւն մը և կը բաժնուի ջրաբաշխական շարք մը մարզերու (Արաքս-Կուրի, Արածանի-Եփրատի, Ճորոխի, արևել. և արևմտ. Տիգրիսներու սիստեմներ, ինչպէս նաև Վասպուրական [Վանայ լիճ] և Կապուտան [Ուրմիոյ լիճ] աւազաններ): Ջրագրական այս ցանցերը, որոնք երկիրը կը բաժնեն վեց մարզերու, շնորհիւ երկրի լեռնագրական արտակարգօրէն տրոհիչ ազդակներու, անգոր են՝ իրենց շրջաններն անգամ ներքուստ միացնելու: Մայր գետերը նաւարկելի չեն և ոռոգման տեսակէտէ կը խաղան, ընդհանրապէս, աննշան դեր: Ամէն հովիտ, կիրճ կամ ձոր ունի իր առանձին «գետ»-ը կամ գետակներու խումբը և իր ոռոգչական կարիքները կը բաւարարէ «տեղական» ջրային միջոցներով:

Լեռնաջրագրական խստօրէն տարանջատական այս իրականութիւնները պառակտելով Հայաստանի բնութիւնը՝ պառակտիչ կերպով պիտի անդրադառնային հայ ժողովրդի հոգեբանութեան, ինչպէս նաև երկրի տնտեսական և քաղաքական ճակատագրին:

2. **Ցեղաբանական-Ցեղագրական.**- Հայոց ցեղային բաղկացու-  
թեան կամ ծագման մասին կան երեք գլխավոր տեսակետներ.  
*աւանդա-առասպելական*, ըստ որոյ մեր նախահայր Հայկը կը սերի  
Նոյի որդիներէն Յաբեթի գծէն, որով՝ մենք, անոր յետնորդներս կը  
համարուինք յաբեթական-հայկագունք, *պատմա-լեզուաբանական*,  
ըստ որոյ փռիւզացոց ազգակից հայերը կը պատկանին հնդկա-  
եւրոպական ցեղախմբի արևմտեան կամ եւրոպական ճիւղին, *մար-  
դաբանական*, ըստ որոյ հայոց ցեղային բաղկացութեան հիմնական  
տարրը արմենօիդ, նախահայկական, կապադովկեան, հեթիտակա-  
ն, ալպեան-դինարեան և այլ յորջորջումներով ծանօթ մարդկային  
ցեղատիպն է, իսկ օժանդակ տարրերը՝ հիւսիսական (նորտիկ) ար-  
իներու և նախահայկական Հայաստանի բնիկներու (գլխաւորաբա-  
ր՝ ուրարտացիներու) ցեղային գծերը: Կասկածէ դուրս է, ուրեմն, որ  
հայ ժողովուրդը կը ներկայացնէ տարբեր ցեղերու (սակայն մի՛շտ  
սպիտակ) պատկանող մարդկային խմբակցութիւններու համախա-  
ռնում մը: Սակայն, շնորհիւ երկրի տարանջատական և դժուարա-  
հաղորդ բնութեան՝ այս համախառնումի առաջընթացը (պրոցէս)  
տեղի ունեցաւ չափազանց դանդաղ և մինչև վերջն ալ չյանգեցաւ  
կատարեալ միաձուլումի: Ցայսօր ալ «հայ» անուամբ ծանօթ մարդկ-  
ային խմբաւորումները ո՛չ մարմնապէս են նոյնատիպ, ո՛չ ալ՝ հոգե-  
բանօրէն: Կան «հայատիպ» կարճագլուխներ (ճնշող մեծամասնու-  
թիւն), կան «արիատիպ» երկարագլուխներ (նշանակալից փոքրա-  
մասնութիւն), կան մերթ կարճ - մերթ երկարագլուխ և ընդհանրա-  
պէս կարճահասակ թխատիպներ (աննշան փոքրամասնութիւն) և  
վերջապէս, այնպիսիք, որոնք շէկ ընչացքի հետ՝ ունին թուխ գլխա-  
մազ կամ թուխ երեսամորթ և սպիտակ մարմին կամ կը ներկայաց-  
նեն այլազան ցեղերու ժառանգական յատկութեանց խճանկար մը  
(մոզայիք): Այս համեմատութեամբ այժի կը զարնեն նաև հոգեբան-  
ական ներհակ գծերու, խառնուածքի, նկարագրի, հակումներու և  
այլն բնեռացումներ՝ ծայրայեղ գաղափարապաշտներ և այլանդակ-  
օրէն գծուծ նիւթապաշտներ, զմայլելի այլասերներ և ընչաքաղց  
եսասերներ, խաղաղաբարոյ, ստրկամիտ ու կրաւորական հլուներ և  
ըմբոստ, խռովայոյզ ու վճռաշունչ ոգիներ և այլն, և այլն:

Ցեղերու անելի սերտօրէն միաձուլուելու գործը դժուարացաւ մանաւանդ ա՛յն պատճառով, որ հայութեան ազգային բաղկացութեան տարրերը իրենց բնական ու տնտեսական միջավայրով, զբաղումով ու կենցաղաձևով տարբեր ճակատագիր ունեցան: Նախահայկական Հայաստանի բնիկները, տեղի տալով հայերու աստիճանական թափանցումին, անելի՛ և անելի՛ մղուեցան դէպի լեռնավայրերը և դարձան՝ դժգոհ խաշնապահներ: Հայերը, հաւանաբար Հոմերոսի Իլիականի մէջ աղօտօրէն յիշուած «արիմներ»-ը (որոնք 9-րդ դարուն Ն.Ք. արդէն հաստատուած պիտի ըլլային Եփրատի փերուն) գետեղուեցան մեծ գետերուն ընդերկար տարածուող արգաւանդ հովիտներուն մէջ և դարձան՝ խաղաղաբարոյ երկրագործներ: Անելի ուշ ներխուժած որսորդ և ռազմասէր արիները նախ՝ իրենց զինուորական իշխանութեան ենթարկեցին թէ՛ հովտաբնակ երկրագործ «արիմներ»-ը, թէ լեռնական խաշնապահ ուրարտական ցեղերը, ապա՝ համեմատաբար ընդարձակ հովիտներու մէջ ռստաններ հիմնելով, դարձան մշակութագործ ուժ և մեծ ճիգերով ու դժուարութիւններով, իրենց քաղաքակրթութիւնը պարտադրեցին երկրի արիմական և ուրարտական ցեղերուն: Այսպէս սկսաւ հայ կամ արմէն ժողովրդի ազգային կազմաւորումը և հետագային նաև՝ ազգային ամբողջացումը: Արիներու ազգակերտումի ճիգերը, սակայն, հանդիպեցան բնական արգելքներու (երկրի պառակտիչ իրականութիւններ և յատկապէս լեռնական ուրարտացիներու ընդդիմութիւն) և է. կամ Զ. դարուն Ն.Ք. սկսուած հայացման գործը վերջացաւ հազիւ Թ. դարուն Յ. Ք.- մէկ ու կէս հազարամեակ:

**3. Քաղաքական-Տնտեսական.** - Հայացումը, սակայն, չկրցաւ արմատախլել «ձուլուած» ցեղերու միջև գոյութիւն ունեցող հոգեբանական խորթութիւնը և հակամարտութիւնը, չկրցաւ յաղթահարել երկրի պառակտիչ բնութեան խոչընդոտ-ազդակները և ստեղծել տնտեսական սերտ գործակցութիւն կամ քաղաքական միանման, համազգային իդէալ: Մեծ հովիտներու համեմատաբար անելի՛ շուտ և անելի՛ սերտօրէն միմեանց ձուլուած տարրերը – հայ-արմէնները -

Այրարատի ղեկավարութեամբ ու Տարօնի մշտատև օժանդակութեամբ - հանդիսացան համահայկականութեան և Հայաստանի քաղաքական միութեան գաղափարի դրօշակակիրը, մինչ լեռնաբնակ զանգուածները շարունակեցին մնալ կեդրոնախոյս: Հայաստանի քաղաքական պատմութեան ողբերգութիւնն ամենէն առաջ պայմանաւորուեցաւ ա՛յն փաստով, որ բարձր մշակոյթ ստեղծելու կարելիութենէն զուրկ և սակաւաթիւ լեռնաբնակները կը բռնէին երկրի տարածութեան աւելի քան 2/3-ականը ընդգրկող լեռներն ու լեռնաստանները, մինչ մշակութագործ և ստուարաթիւ հովտականներուն կը մնար հողի հագիւ 1/3-ականը կազմող հովիտներու շարքը: Միսկողմէ, հովիտները, ինչպէս յիշուեցաւ, բաժան-բաժան էին և իրարմէ կտրուած բարձրաբերձ լեռներով, իսկ լեռներն անառիկ էին, դժուարամատչելի և ըստ ամենայնի յարմար՝ *քաղաքական անհատականացման*: Այս պատճառներով կեդրոնական իշխանութեան կապը շրջաններու հետ կրեց ո՛չ թէ *օրգանական*, այլ *իրաւախոհական* բնոյթ:

Տնտեսական պայմաններն ալ աւելի քան աննպաստ էին միաձոյլ պետական կառոյց մը ստեղծելու համար: Բարձրաւանդակի ներքին մասերուն մէջ ընդարձակ դաշտավայրերու, ջրաբաշխական կեդրոնացեալ և կեդրոնացուցիչ ցանցերու և հաղորդակցութեան նպաստաւոր ուղիներու – ցամաքային թէ ջրային – չգոյութեան պատճառաւ առաջ չեկան տնտեսական մեծ կեդրոններ – քաղաքներ: Ոստանները մնացին, գլխաւորաբար, իրենց հովիտներու «*մայրաքաղաք*»-ներ և չկրցան իրենց ձգել ամբողջ երկրի տնտեսական կեանքի երակները: Հովիտներն ալ շնորհիւ իրենց արգաւանդութեան տնտեսապէս ինքնաբար էին, որով՝ բարիքներու փոխանակութեան պահանջը սուր կերպով չզգացուեցաւ և ներքին առևտուրը չզարգացաւ: Ի հետևումն այս իրողութեան, յատկապէս եզերական նահանգներու տնտեսական շահագրգռութիւնը թափանցեց բարձրաւանդակի սահմաններէն դուրս և աւելի՛ բորբոքեց քաղաքական պառակտումի կիրքը: Ընդհանուր առմամբ, Հայաստանը տնտեսապէս մի՛շտ ալ մնաց մանրանկարային աշխարհ. հարստութիւնը չկեդրոնացաւ և հովիւներու

ու երկրագործներու ժողովուրդը՝ միշտ ալ հակամէտ գտնուեցաւ տնտեսական, որով նաև՝ քաղաքական անհատապաշտութեան:

**4. Համաշխարհային-ռազմա-հաղորդակցական.** - Բնօրէն Հայաստանը ե՛ր հանգոյց մըն է, ե՛ր պատնէշ մը Հին Աշխարհի երեք ցամաքամասերու միջև, որով՝ որքան ալ իր Բարձրաւանդակային բնութեան շնորհիւ դժուարահաճ՝ այնուամենայնիւ, ցամաքային կարճագոյն ուղին՝ Արևելքի և Արևմուտքի, Հիւսիսի և Հարաւի միջև:

Յեղագրօրէն Հայկ. Բարձրաւանդակը կը բաժնէր մոնզոններու և սեմական ժողովուրդներու հարթաշխարհները մէկ կողմէ, իրանական և արևմտեան արիներու (կամ միջերկրականեան և ալպեան ցեղերու) հայրենիքները միւս կողմէ, որով՝ ցեղերու շարժը տեղի պիտի ունենար նաև Հայաստանի վրայով:

Այն շրջանին, երբ հայ ժողովուրդը և Հայաստանի քաղաքական կեանքը կը կազմաւորուէին, աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային կեդրոնը Միջերկրականի աւազանն էր: Հայկ. Բարձրաւանդակը այս աւազանի շուրջը գտնուած բնական ամրութեանց ամենահուժկու կարկառումն է: Որով՝ յաչս աշխարհակալ ուժերու, որոնք ի խնդիր այս աւազանի, յարձակողական կամ պաշտպանողական կռուի մէջ էին, Հայաստանը կը ստանար ռազմագիտական ճակատագրական կէտի մը նշանակութիւնը: Հայաստանը հայրենիքն էր աշխարհի ամենաարագապլաց նժոյգներու, որով՝ ան ռազմագիտական եզակի դիրքի հետ՝ աշխարհակալ ժողովուրդներուն կը խոստանար նաև՝ ռազմական գուպարներու մէջ յաճախ բախտորոշ դեր խաղցող՝ սրընթաց ձին:

Տնտեսապէս ալ Հայաստանը նուազ գրաւիչ չէր: Մեծ մասամբ անտառագորկ և ալպեան փարթամ բուսականութեամբ ծածկուած լեռները կը շարժէին ամեն կողմ վիտացող բանակներու և գաղթային կարաւաններու, ինչպէս նաև բուսականութեամբ աղքատ մերձակայ աշխարհներու վաչկատուն և խաշնապահ ցեղերու նախանձը:

**Հարց.** - Ի՞նչպէս կերպարանաւորուեցաւ հայկական ճգնաժամը:

**Պատասխան.** - Տրոհական՝ ուժերը պառակտող ու ջլատող վերոհիշեալ գործօններու և արտաքին թշնամիներու յարատև յարձա-



կումներու շնորհիւ՝ Հայաստանը դարձաւ ներքին պայքարներու և աշխարհակալ ուժերու, ինչպէս նաև այլևայլ վաչկատուն ցեղերու խելայեղ բախումներու թատերավայր - ճշմարիտ կրկէս մը, ուր յաղթելով ու ոչնչացնելով կամ պարտուելով ու ոչնչանալով իրարու յաջորդեցին այլազան ազգերու բանակները կամ գաղթային կարաւանները:

Ամփոփենք այս ահարկու ու պարներու հետևանքները կամ հայկական ճգնաժամի աստիճանական զարգացման պարբերակները՝ հետևեալ կէտերու մէջ.

1. Միութեան նպատակով եղած ռազմական (օր. Տիգրան Մեծ), կրօնական (քրիստոնէացում) և մշակութային (գիր ու գրականութիւն) շարք մը փայլուն և խիզախ փորձերը չկրցան ներանջատական բնութիւն ունեցող Հայաստանի քաղաքական կեանքը տևականապէս կեդրոնացնել: Բնական նոյն գործօններու քմահաճոյքի և ամէն գնով բարձրաւանդակին տէր դառնալու մոլուցքի հետևանքով՝ բոլոր ժամանակներու աշխարհակալ ուժերն ալ ընդարմացան և ի վերջոյ, ստիպուեցան Հայաստանը բաժնել միմեանց միջև (պարսիկներ և Հռովմ, պարսիկներ և Բիւզանդիոն, արաբներ և Բիւզանդիոն, պարսիկներ և օսմանեան թուրքեր և վերջապէս՝ պարսիկներ, օսմանեան թուրքեր և ռուսներ): Այսպէս՝ անյաղթահարելի մնաց Հայկական Բարձրաւանդակի տարօրինակ քմահաճոյքը. *ո՛չ հայերը կրցան անոր տէր մնալ, ո՛չ ալ՝ արտաքին ուժերը յաջողեցան ամբողջովին և տևականօրէն զայն հպատակեցնել իրենց քաղաքական և ռազմական դրօշին:*

2. Բարձրաւանդակի քաղաքական բաժանումէն ծագում առաւ մեր կեանքի ամէնաաղիտաւոր պատմական չարիքը – *օրիէնտացիոններու հակամարտութիւնը*, որ զանազան փոփոխակներով հասաւ մինչև մեր օրերը և ջլատեց մեր ազգային ուժերն ու քաղաքական կամքը: Սկզբնական շրջանին և միջին դարերուն, երբ ի բնէ մարտաշունչ և քաջարի հայ ժողովրդի ռազմական կորովը տակաւին բարձր էր, օրիէնտացիան և օտարներուն հարկատու իշխանութեանց սիստեմը՝ հայերուն պատճառեցին ռազմական ուժի *արտա-*

*երկրային տարածում*, Հայաստանէն դուրս փառք նուաճելու արկածախնդրութիւն և քաղաքական ուշադրութեան ցրում:

Բիւզանդական գահի վրայ փայլեցան մեծատաղանդ հայ կայսրեր, արիատիպ հայ զօրավարներու հանճարը ի սպաս դրուեցաւ ուրիշ ժողովուրդներու հզօրութեան, և վերջապէս, այլևայլ դրօշներու տակ հայկական խորոխ լեռներէն իջաւ հայոց աշխարհասասան այրուծին (հեծելագօր) և իր երիվարի սմբակներուն տակ կոկիկրտեց բազմաթիւ ցեղեր՝ հիւսիսային Ափրիկէէն մինչև Դանուբի ափերը, Թուրքեստանէն մինչև Իտալիա: Այսպիսով, սակայն, սպառեցաւ ազգի ռազմական կորովը և բուն հայրենիքը զրկուեցաւ ո՛չ միայն քաղաքական միութեան իդէալը իրականացնելու, այլև ինքնապաշտպանուելու կարելիութենէն: Ռազմական ուժերու այս տարածումին, բնականօրէն, շուտով պիտի յաջորդէր սպառուող երկրի զաւակներու զանգուածային արտագաղթը: Հայաստանը նուաճող օտար ուժերը ամէնէն առաջ նպատակադիր եղան կողոպտել, նսեմացնել և կործանել արիաբնակ ոստանները: Ասոնց, յաճախ, միացաւ Հայաստանի բնութեան մէկ ուրիշ պատուհասը – երկրաշարժը: Զանազան ժամանակներու ընթացքին քաղաքական գործունէութեան և ռազմական ոգորումներու ընդունակ տարրերը կամ ինկան հայրենի ոստաններու փլատակներուն տակ կամ արտագաղթեցին (օրկ. Ռուբինեանք) կամ բարձրացան լեռները, ստեղծեցին ամրոցային սիստեմ մը և դարձան երկարատև ըմբոստութեան և հերոսական փոթորկումներու ազդակ մը: Այսպիսով, արիացեղ հայերու մէկ մասին հետ՝ հայոց քաղաքական իդէալի դրօշը բարձրացաւ լեռնային ամրոցներու վրայ, իսկ ոստաններէ զրկուած հովիտները վերածուեցան տկար գիւղախումբերու: Լեռնային ամրոցն ու հովտական գիւղը, սակայն, բաւական չէին քաղաքական լուրջ կառոյց մը ստեղծելու: Քաղաքներու պակասը աւելի զգալի դարձուց ազգային քաղաքական միութեան թելերու իսպառ կտրատումը: Ոստաններու կործանումին յաջորդեց լեռնային բերդերու և ամրոցներու անկումը և բնակչութեամբ նօսրացած, ռազմապէս հիմնովին սպառուած Հայաստանի հորիզոնին իջաւ ստրկութեան թանձր խաւարը:

3. Այս իրադարձութեանց շնորհիւ, տակաւին 10-րդ դարուն, սպարեզ բացուեցաւ դաշտաբնակ և լեռնական երկու վաչկատուն ժողովուրդներու – թաթարներու և քիւրդերու: Մոնգոլ թաթարները արևելքէն բախեցին Արաքսի ընդարձակ հովիտներու դուռը, արիացեղ քիւրդերը՝ հարաւէն իրենց հօտերը քշեցին դէպի հայկական լեռներու հարուստ արօտավայրերը: Հայաստանի ցեղագրական պատկերն սկսաւ փոխուիլ. թաթարները սկսան հայերը վտարել արևելեան Հայաստանի դաշտերէն, քիւրդերը՝ արևմտեան Հայաստանի լեռներէն: Այս տեսակէտէն, սակայն, ճակատագրական դարձաւ պատմական ա՛յն փաստը, որ ԺԶ. դարուն, Հայաստանի արևմտեան մասն անցաւ օսմանցի թուրքերուն, իսկ արևելեանը՝ շարունակեց մնալ պարսկական դրօշի տակ: Երկու ախոյեանները – Պարսկաստան և Թուրքիա - Հայկական Բարձրաւանդակում միմեանց դէմ ամուր կռուաններ ձեռք բերելու համար ուժ տուին հայութեան համար ճակատագրական և հետևանքներով ընդհանրապէս առեղծուածային քաղաքականութեան մը: «Արիական» պարսիկները առաջ քշեցին թուրք, դաւանօրէն շիա թաթարները, թաթարածին օսմանցիները՝ ցեղօրէն «արիական», դաւանօրէն սիւննի քիւրդերը: Միւս կողմէ, պարսիկներն իրենց երկրի տնտեսութիւնն ու մշակոյթը զարգացնելու, օսմանցիները Մարմարայի և Եգէական ծովու շուրջը յոյներու տնտեսական և մշակութային ազդեցութիւնը չէզոքացնելու համար՝ բռնագաղթով կամ Հայաստանի մէջ անտանելի պայմաններ ստեղծելով՝ քշեցին կամ հրապուրեցին հայ զանգուածները դէպի Պարսկաստանի խորքերը, արևմտեան Անատոլու, Կ.Պոլիս և Թրակիա: Ռուսաստանը, որ նախորդ դարուն արդէն հիւրընկալած էր հայկական գաղութ մը, 19-րդ դարու սկիզբներուն մօտեցաւ արևելեան Հայաստանին: Հայերը, որոնք շատ վայրերու մէջ (յատկապէս Արցախ-Սիւնիք) արդէն ոտքի ելած էին պարսկա-թաթար բռնութիւններու դէմ՝ ռուս-պարսկական պատերազմէն յետոյ՝ կեդրոնացան Ռուսիոյ անցած Այրարատեան աշխարհը, որու դաշտային մասը Շահ Աբբասի բռնագաղթէն ի վեր, գրեթէ, զուտ թաթարական հովիտ մը դարձած էր: Յետ այնու, ռուս-տաճկական յաջորդական պատե-

րագմներու հետևանքով արևելեան Հայաստանի հայութիւնը աւելի ստուարացաւ, սակայն, ի վնաս արևմտեան կամ թուրքաց Հայաստանի: Տասնևիններորդ դարու վերջերուն, երբ կը սկսէր հայ յեղափոխութիւնը, Հայաստանը ցեղագրօրէն կը ներկայացնէր ողբալի պատկեր մը:

*Պարսկական Հայաստանը*, գրեթէ ամբողջովին, վերածուած էր թաթարական շրջանի մը: *Ռուսական Հայաստանէն* Արաքսի և Կուրի միջին հոսանքներու ընդարձակ հովիտները՝ մեծ մասամբ, իսկ այս գետերու ստորին հոսանքի մարզը (դաշտային Արցախ և Փայտակարան) ամբողջովին՝ դարձած էին թաթարական երկիրներ: Հայկական Կովկաս լեռնագօտին ալ միատարր չէր. այստեղ, ընդհանրապէս կը գերակշռէին հայերը, սակայն թաթարներն ալ աչքառու թիւ մը կը ներկայացնէին: *Թուրքական Հայաստանի* երեք լեռնագօտիներէն Ծաղկանցը՝ զուտ քրդաբնակ էր: Հայկ. Պարի արևելեան մասը նոյնպէս քրդական նկարագիր ունէր, արևմտեան մասի հիւսիսային շղթաներու մարզը՝ հայ-թուրքական, հարաւայինը՝ հայ-քրդական: Հայկական Տարոսը կը ներկայացնէր հայ-քրդական խառն բնակչութիւն մը: Հրաբխային մեծ զանգուածներէն Արարատը և Միփանը ամբողջովին քրդաբնակ էին, մնացեալները՝ մեծ մասամբ Արածանիի զգալապէս հայկական հովիտները՝ վիճելի դարձուցած էին քիւրդերը, Եփրատի՝ թուրքերը: Տիգրիսէն հարաւ ընկած ընդարձակ դաշտերը բնակուած էին քիւրդ և այլ իսլամ ժողովուրդներով, հիւսիսային հովիտները ունէին մեծաւ մասամբ հայ-քրդական խառն բնակչութիւն: Այսպէս՝ թուրքաց Հայաստանի ռազմագիտական նշանակութիւն ունեցող գրեթէ բոլոր կետերը, անցած էին քիւրդերու ձեռքը. տնտեսապէս նշանակալից վայրերը վիճելի դարձած՝ հայերու, քիւրդերու և թուրքերու միջև: Չկայ իրականութեան մօտեցող ուէ վիճակագրութիւն, սակայն տարակոյսէ դուրս է, որ երկրի տարածութեան աւելի քան 2/5-ը անցած էր ազգաբնակչութեան հազիւ 30%-ը կազմող քիւրդերուն (դժբաշներն ու զազաներն ալ հաշուած), մինչև հայերը, որոնք կը կազմէին ընդհանուր ազգաբնակչութեան գրեթէ 40%-ը, իրենց ձեռքը կը պահէին հողի հազիւ

2/5-ը, մնացեալ 1/5-ը գրաւած էին ազգաբնակչութեան 26%-ը կազմող թուրքերն ու այլևայլ մանր ժողովուրդները, որոնք կը կազմէին բնակչութեան 4%-ը:

4.Ցեղագրական պատկերի այս փոփոխումը, որ տեղի ունեցած էր հողերու բռնագրաւմամբ, անգթութեանց մատնուած հայ զանգուածներու փախուստով, բռնագաղթով, բռնի իսլամացմամբ և այլազան նախճիրներով, յատկապէս 19-րդ դարուն թուրքաց Հայաստանը վերածեց դժոխքի մը: Հայերը, որոնք ենթակայ էին թուրք-քրդական կրկնակի լուծին և կարգ մը շրջաններու մէջ վաղուց ի վեր կը ճաշակէին «խաֆիբական» նողկալի դրութեան դառնութիւնները, ռուսական առաջխաղացման շնորհիւ քաղաքականապէս դարձան կասկածելի տարր: Այս պարագան աւելի՛ խորացուց տնտեսական կենցաղաձևերու տարբերութեամբ, ընդհանուր շահերու և կրօնական ու բարոյական ըմբռումներու ներհակութեամբ պայմանաւորուած վիճիւր: Հայոց ողբերգութիւնը կատարեալ դարձաւ շնորհիւ ա՛յն իրողութեան, որ թուրքաց Հայաստանը ռուսական վտանգի դէմ *ներքուստ ապահովելու* (իմա՛ հայերը մաքրելու) օսմանեան քաղաքականութիւնն ու երկրի իսլամ ցեղերու տնտեսական շահերը զուգահեռուեցան: Հայաստանի կտրծքին վրայ կը դեգերէին ռուս-թուրքական պատերազմներու հետևանքով Կովկասէն փախած կամ տաճիկներու ցանկութեամբ արտագաղթած իսլամ «մուհաճիր»-ներու խումբերը, որոնք հող կը փնտռէին և ապրելու միջոցներ: Բնականաբար և կառավարութեան դրդումով անոնց ուշադրութիւնը կը կեդրոնանար կամ կը կեդրոնացուէր հայ գիւղի և հայ գիւղացու տնտեսութեան վրայ: Կը սկսուէր բռնագրաւումի և կողոպուտի նոր շրջան մը: Միւս կողմէ քիւրդերը, որոնք արդէն նուաճած էին լեռնային շրջաններու մեծ մասը, հակում ունէին հովիտները իջնել, իսկ քաղաքներու մէջ կուտակուած անստեղծագործ և սեփական աշխատանքով ինքնապահ դառնալու անընդունակ թուրք տարրերը, որոնք շնորհիւ քաղքենի հայ առևտրականներու մրցման և օսմանեան պետական գանձարկղի սնանկութեան, ո՛չ փերեզակութեամբ կրնային ապրիլ, ոչ ալ՝ պետական պաշտօններով, ի վերջոյ, մեղկ

ու հեշտալից կեանքի մը կարիքներն ապահովելու միակ միջոցը կը համարէին հայ գիւղի ճորտացումը: Այսպիսով՝ ամէն կողմէ կը սեղմուէր հայաբնակ հովիտը և կը սրուէր *հողային հարցը*: Հայը, որ երեք ճակատի վրայ ալ ստիպուած էր ընդդիմանալ, յաչս յարձակողներու, դարձաւ ընդհանուր թշնամի, իսկ վերջիններու միջև ստեղծուեցաւ «տնտեսական շահերու նոյնութիւն». պարագայ մը, որ անխուսափելի դարձուց իսլամ ցեղերու *միասնական ճակատը*:

Այստեղ՝ գաղտնիքը ա՛յն իրողութեան, որ իսլամ ցեղերէն այլապէս թուրքին ամէնէն խորթ և ներհակ քիւրդը հանդիսացաւ տաճկօրէն ըմբռնուած համիսլամականութեան միակ հաւատարիմ զինակիցը՝ մինչև Թուրքիոյ հայոց ողբերգութեան աւարտումը: 19-րդ դարու վերջերուն այս զինակցութիւնը սրբագործուեցաւ «Համիդիէ»-ի զօրագունդերու կազմակերպումով և հայերը ոչնչացնելու տաճկական ծրագիրը որդեգրուեցաւ քիւրդերու կողմէ՝ իբր *կրօնական պարտականութիւն մը և քաղաքական իղէալ մը*: Յետ այնու աւելի՛ սիստեմատիկ կերպով շարունակուեցաւ ոչնչացումի գործը: Կողոպուտին, «խաֆիրական» չարագործութեանց, տուրքերու անտանելի բեռին՝ միացաւ մոլեռանդ խուժաններու *տնտեսական սադիզմը*՝ հրկիզում արտերու, կալերու, գիւղերու, շուկաներու (Կանայ շուկան հրկիզուեցաւ 1876-ին), անգամ գոմերու և փարախներու, քանդում առուններու՝ անջրդութեան դատապարտուած արտերու հունձքը փճացնելու նպատակով: Ասոր գուգահեռուեցաւ *վարչական սադիզմը*՝ տուրքերու գանձումը գանահարութեամբ, բանտարկութեամբ և մարմնական հրէշային խոշտանգումներով, անարգանքով ու պղծումով: Լայն ասպարէզ բացուեցաւ *ջարդարարական ու բարոյական սադիզմին*՝ ողջակիզում այրերու և մանուկներու, տարերային դարձած անհատական կամ խմբական սպանութիւններ, հայ օրիորդներու և կանանց բռնաբարութիւն և առևանգում: Սովորական դարձաւ *կրօնական զգացումներու անարգման և պատմական կոթողներու կործանման սադիզմը*՝ սրբավայրերու պղծում և քանդում, հոգևորականներու լլկում և խոշտանգում և վերջապէս՝ հանապազօրեայ հայիոյանքը... Ռազմապէս կորովաթափ եղած ժողովուրդը, որ բացի

կրաւորական ընդդիմութենէն այլ իրաւունք և հնարաւորութիւն չունէր, անձնատուր եղաւ յուսահատական աղօթքի մը «Տէ՛ր, ա՛ն մեր հոգին կամ փրկէ՛ մեզի», ապա՝ իր վիրաւոր սիրտը և աղերսող հայեացքը ուղղեց հօր Եւրոպային, որ Հայաստանի մէջ ամէն ժամ խաչուող, անարգուող, տկար ու անզօր «Տէր»-ը «կը պաշտէր»...

5.Տասնևիններորդ դարը ճակատագրական եղաւ նախ այն պատճառով, որ Պարսկաստանը դադրեցաւ աշխարհակալ ուժ մը ըլլալէ և կարելիութիւն ընծայեց թուրքերուն իսլամի մենատէրը դառնալու, ապա այն, որ սրունցաւ ռուս-թուրքական պայքարը: Ռուսաստանի ներկայութիւնը թուրքաց Հայաստանի սահմաններուն, որ հայերուն փրկութեան յոյս ներշնչեց, իսկ տաճիկներուն՝ քաղաքականապէս ոչնչանալու սարսափ, Եւրոպայի մէջ առաջ բերաւ Հայաստանի համար կործանարար բարդութիւններ: Արևմտեան պետութիւնները (Անգլիա և Ֆրանսիա), որոնք ռուսական առաջխաղացումը դէպի Կ. Պոլիս և Հայկական Բարձրաւանդակ իրենց աշխարհակալութեան հիմերը խախտող վտանգ մը կը համարէին՝ հիւսիսի յորձանքին դէմ թումբ մը կանգնեցնելու մտահոգութեամբ՝ Խրիմի պատերազմին զենքով միջամտեցին ի նպաստ Թուրքիոյ և 1856ին Փարիզի հաշտութեամբ դուրս հանեցին ռուսական բանակները թուրքաց Հայաստանի սահմաններէն: Նոյն չարաբաստիկ դերը խաղաց Անգլիա 1878ին Բերլինի Վեհաժողովին մէջ, սակայն այս անգամ Գերմանիոյ օժանդակութեամբ: Հայ զօրավարներու գլխաւորութեամբ Բարձր Հայք մտած ռուս զօրքերը կրկին ձեռնունայն վերադարձան, բայց ատով աշխարհակալ ուժերու շահերու բախումը աւելի սրունցաւ: Անգլիա, որ ի վարձատրութիւն Թուրքիոյ «ամբողջականութիւնը» երաշխաւորելու ճիգին՝ ոտք դրաւ Կիպրոսի վրայ, օր մըն ալ այստեղէն Եգիպտոս և ապա Իրաք թափանցելու հեռանկարով Հնդկաստանը և հետագային ուրուագծուած KKK (Կապ-Կահիրո-Կալկիտ) երկայթողագիծը ապահովելու համար ամէն կերպ շարունակեց ընդդիմանալ ռուսական նուաճումին: Միւս կողմէ արևելքի մէջ ամուր կռուան մը ձեռք բերելու առաջադրութեամբ և ապագային BBB (Բերլին-Բաղդադ-Բոմբէյ) երկայթողագծի երազը որոճալ կարենալու

համար՝ հրապարակ նետուեցաւ Գերմանիա՝ խաչաձևելով թե՛ անգլիական, թե՛ ռուսական հաշիւներն ու շահերը: Ռուսաստանը, որ իր աշխարհագրական դիրքի և ցամաքային պետութիւն մը ըլլալու հանգամանքին շնորհիւ առանձին յարմարութիւններ ունէր նուաճելու Հայկական Բարձրաւանդակը՝ կը հանդիպէր թե՛ անգլիական, թե՛ գերմանական ընդդիմութեան: Անգլիա, որ ծովային պետութիւն մըն է, ո՛չ յաւակնութիւն, ո՛չ ալ ցանկութիւն ունէր բազմիլ Հայկ. Բարձրաւանդակին վրայ: Գերմանիա, որ Թուրքիոյ մէջ ռազմա-քաղաքական նուաճումներ ընելու համար Աւստրիոյ և Բալկաններու վրայէն անցնելէ զատ՝ անգլիական, ֆրանսիական և ռուսական ընդդիմութիւնը պիտի յաղթահարէր՝ ի տես մեծամեծ դժուարութիւններու, հակեցաւ խաղաղ թափանցումի քաղաքականութեան՝ սիրաշահելով տաճիկները և յուսալով օգտագործել անգլոռուս հակամարտութիւնը: Շահերու այս ներհակութեանց շնորհիւ տաճիկները բարենորոգչական քանի մը ձախաւեր փորձերէ յետոյ, դիւրութիւն գտան կառչիլ *համիալամականութեան* գաղափարին: Վերջինս (համիալամականութիւնը), որ քաղաքական պատրանք մըն էր՝ ճիշտ է արձագանգ չգտաւ իսլամի բուն կեդրոնին՝ արաբական աշխարհին մէջ, սակայն «անձեռնմխելի գօտի» դարձած թուրքաց Հայաստանի հայութեան համար հանդիսացաւ կազմակերպուած չարիք մը: Եւրոպական դիւանագիտութիւնը, որ Բերլինի Վեհաժողովին մէջ արդէն հաստատագրած էր, թէ թուրքաց Հայաստանի հայ ժողովուրդը գուրկ է *«կեանքի»*, *«պատուի»* և *«գոյքի»* ապահովութենէ, այլապէս փարիսեցիական և անիմաստ 61-րդ յօդուածով զրգոեց տաճիկները հայերու դէմ և վերջիններս մատնեց իսլամական յաւելեալ մոլեռանդութեան: Նոյն այդ Բերլինի Վեհաժողովի շրջանին՝ մասամբ քաղաքական տհասութեան, մասամբ եւրոպական պետութեանց ներհակութեան շնորհիւ՝ հայերն ալ հետևեցան տարբեր օրիէնտացիոններու: Թուրքաց Հայաստանի բազմաչարչար ժողովուրդը և կովկասահայ զանգուածներն (ու առաջաւոր մտաւորականութիւնը՝ Գր. Արծրունիի զլխաւորութեամբ) ռուսական օրիէնտացիա ունէին: Պոլսահայ մտաւորականութեան մեծագոյն մասը, ինպէս նաև ժամանակի հայոց



կաթողիկոս Գեորգ Դ.-ը ռուսատեաց էին և ազգի փրկութեան յոյսը կը կապէին Անգլիոյ կամ կ'ակնկալէին անգլիւթուրք համագործակցութենէն: Զգացումներու այս բնեռացումը հայերը քաղաքականապէս կ'ասկածելի դարձուց թէ՛ Անգլիոյ, թէ՛ Ռուսիոյ աչքին: Անգլիական տեսակետով թուրքաց Հայաստանի հայութիւնը ռուսական դրօշի ծածանումը Տաւրոսի վրայ և Միջերկրականի ափերուն երագող տարր մըն էր: Մինչ պոլսահայ մտաւորականութեան ելոյթները ռուսերուն կ'ասկած կը ներշնչէին՝ հայ զանգուածներու ռուսասիրական զգացումներու անկեղծութեան մասին: Վրայ հասաւ նաև ռուսերու բարեարած բուլզարներու ցարական դիւանագիտութեան պատճառած հիասթափութիւնը, ինչպէս նաև «Պոլոժէնիէ»-ի դրութենէն ընդհանրապէս դժգոհ հայոց ծառայումը դպրոցներու փակման կարգադրութեան դէմ (1885-ին): Այնուհետև այլևս արգելք չկար, որ հայերու «*աւանդական պաշտպան*» Ռուսաստանը որդեգրէր «*Հայաստան՝ առանց հայոյ*» քաղաքական նշանաբանը: Այսպէս՝ հայկական մարտիրոսագրութեան հանդէպ պաշտօնական Եւրոպան եղաւ աւելի քան սառնասիրտ. պարագայ մը, որ քաջութիւն ներշնչեց տաճիկներուն՝ կրկնապատկելու իրենց անգթութիւնները, իսկ յուսահատութեան մատնուած հայերը մղեց ա'յն համոզումին, թէ չկայ օգնութիւն ո'չ երկինքէն, ո'չ ալ երկրէն, թէ խուլ է, անզգայ, եսապաշտ և նիւթակրօն եւրոպացիներուն պաշտած «*Տէր*»-ը, թէ «միայն զենքով կայ հայոց փրկութիւն»: Իրերու տրամաբանական զարգացումով ձև կը ստանար մեր կեանքի քառուրդ. պատմութեան երկաթեայ կրունկներուն տակ ճզմուած ժողովուրդի կուրծքէն տարերայնօրէն կը ժայթքէր *ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԵԱՆ ՀՐԱԲՈՒԽԸ...*

### **Բ. Ենթակայական-հերոսական ոգորումներ**

**Հարց.**- Ի՞նչ դեր խաղաց և որպիսի՞ արտայայտութիւններ ստացաւ ենթակայական տարրը՝ հայ յեղափոխական շարժման խմորումի մէջ:

**Պատասխան.**- Ո՛չ ճակատագրական, սակայն նշանակալից դեր մը, որ արտայայտուեցաւ տառապանքը ցեղօրէն ապրել տալու,

հոգեբանական բեկում առաջ բերելու, ժողովրդի մտաւոր մակարդակը բարձրացնելու, անոր բարոյական ու մարտական կորովը վերականգնելու, ընդվզումի ոգին հրահրելու, դժբախտաբար, մեծ մասամբ անկազմակերպ փորձերու և ճիգերու շարք մը:

1. **Մտաւորական շարժում.**- Այն ժամ, երբ երկրի մէջ ԺԲ. դարու վերջէն սկսած մտաւոր անկումը մշակութաստանային բռնակալութիւններու նիւթած յարաճուն նախճիրներու հետևանքով կատարեալ խաւարի կը յանգեր՝ արտասահման ապաստանած հայերը երկար խարխափումներէ, սրտառուչ ճիգերէ յետոյ՝ կը յաջողէին վերաբորբոքել մեր հոգևոր կեանքի կրակարանը: Միսիթարեան Ուխտի շարժումին յաջորդեց Մոսկուայի Լազարեան Ճեմարանի հիմնումը: Յետ այնու, հիւսիսէն Թիֆլիսի, արևմուտքէն Պոլսոյ վրայով՝ բացուեցան մշակութային թափանցումի ուղիներ: Սակայն, ի դժբախտութիւն Հայաստանի, վերոյիշեալ քաղաքները, որոնք հոծ հայ բնակչութիւն ունէին և Կովկասի ու Թուրքիոյ քաղաքական կեդրոններն էին, փոխանակ կամուրջի դէր խաղալու, դարձան արևելա և արևմտահայոց մշակութային կեանքի հանգրուաններ: Այնու ամենայնիւ, Արևելեան Հայաստանը օժտուեցաւ կրթական քանի մը նշանակալից կեդրոններով (Երևանի և Շուշիի թեմական դպրոցները, ապա՝ հայոց բարձրագոյն կրթական հիմնարկութիւնը – Էջմիածնի Գեորգեան Ճեմարան), մինչ թուրքաց Հայաստանը մնաց համեմատաբար աննախանձ պայմաններու մէջ (Փորթուգալեանի հիմնած Վանի «Վարժապետանոց»-ը զոհ գնաց հայ մատնիչներու սաղրանքին. աստոր փոխարէն լուսատու կանթեղ մը հանդիսացաւ Կարնոյ Մանասարեան վարժարանը): Պոլսահայ մտաւորական սերունդը, տակաւին 60-ական թուականներուն, երկնեց «Ազգային Մահմանադրութիւնը», որ ճիշտ է՝ քաղաքական «անօթ»-ի մը նշանակութիւնը չունէր, սակայն, իր հիմքին մէջ տեսակ մը «ընկերային» շարժում էր՝ ժողովրդական իրաւունքի գիտակցութեան և ազգային ինքնաճանաչումի նշանաբանով: «Ազգային Մահմանադրութիւն»-ը չկրցավ նաև հայ յեղափոխութեան «անօթ»-ը ըլլալու պատիւը վայելել, սակայն, անիկա զարկ տուաւ կրթական գործին - գործ մը, որ իր բնոյ-

թով արդեն *յեղափոխիչ էր*: Այս պարագան ճշտօրէն ըմբռնած էր և օսմանեան բռնապետութիւնը, որ 80-ական թթ. խափանեց նորածիլ «Միացեալ Ընկերութեան» դպրոցական ցանցը – միակ իրական բարիքը, որ Պոլիսը ուզեց պարզնել *հայկական գաւառին*: Այնու ամենայնիւ, մտաւորական այս ոգորումները ընդունայն չանցան: Անոնք հասցուցին զգայուն սերունդ մը, որ պիտի կարենար Ալիշան, Խրիմեան, Բաֆֆի կարդալ և իր սրտին մէջ բեղմնաւորել յեղափոխութեան սաղմերը:

Սակայն իր թափով ու խորքով աւելի՛ նշանակալից եղաւ «*Հիւսիսափայլ*»-ի շարժումը, որ կը ներկայացնէ հայ հասարակական մտքի զարգացման գլխաւոր պարբերակներէն (պերիոդ) մէկը: Մտքերը, որոնք արծարծեցին Նազարեանցն ու Նալբանդեանը, ստեղծեցին բուռն, անյաղթահարելի ձգտում՝ ազգը միութեան, քաղաքական «անօթ»-ի վերածելու *Հայրենիքը* և անոր տնտեսական և մշակութային «անկախութիւն»-ը ապահովելու: Շարժում մըն էր սա, առանց որոյ, թերևս պատմութիւնը ապերախտէր հայ յեղափոխութեան հոգևոր հայր և համահայկականութեան առաջնագոյն և մեծագոյն գաղափարախօս Բաֆֆիին:

**2.Պատմական գիտակցութիւն.**– Ստրկական ամենախայտառակ և ամօթալի վիճակին մատնուած ժողովուրդի նախահայրերը պատմական անցեալին մէջ հանդիսացած էին անհատապաշտ, ազատասէր և ռազմունակ ցեղ մը: Պատմական այս գիտակցութիւնը ինքնին հոյակապ ներշնչարան մըն էր աստիճանաբար մտքերու մէջ տեղ տեղ գտնող այն համոզումին, թէ հայութիւնը հոգեբանօրէն ներգործօն դարձնելով ու զինելով՝ կարելի պիտի ըլլար դիմագրաւել թշնամիին: 19-րդ դարու երկրորդ կէսին այս մտածումը որդեգրող հայ ընտիր մտաւորականները կը սկսէին հինը ոգեկոչելու շարժումը – հինը՝ ռազմեռանդ հայը, որու ահարկու կորովը պիտի ներարկուէր նո՛ր, պատմական անագորոյն իրադարձութեանց շնորհիւ յաղթահարուած, ստրկացած հայու երակներուն մէջ: Ալիշանի պատմական անցեալին նուիրուած ռազմաշունչ երգերը, արդէն, կ'արձագանգէին իբր քնարական հոգեփոխիչ քարոզներ: Կը մնար քայլ մը, որ Քա-

մառ-Քաթիպան հնչեցնէր գոռ մարտի շեփորը՝ ուղղակի Հայաստանի օրուայ ոսոխներուն դէմ: Այս տեսակէտէն, սակայն, վճռական դեր խաղաց պատմական վեպը, որու մէջ փայլեցաւ Օերենցը, մինչև որ հոյակապ հանճար մը – Բաֆֆին – իր վիթխարի սիրով, ահարկու ուժով և հուժկու խառնուածքով եկաւ բորբոքելու հայ ժողովրդի բոլոր խաւերու երևակայութիւնն ու սիրտը:

**Հարց.** Բնչո՞վ պայմանաւորուեցաւ, սակայն, հայ յեղափոխութեան ենթակայօրէն ամենավճռական գիծը կամ անոր հերոսականը:

**Պատասխան.** Թափով այնքա՞ն խոր, յուզումով այնքա՞ն հարուստ շարժում մը, որպիսին է հայ յեղափոխութիւնը, չէր կրնար միայն գիտակցական ոգորումներով պայմանաւորուիլ: Եթէ գիտակցական հաշիւներով ղեկավարուելու ըլլային, հազիւ թէ մէկը յանդգնէր դժոխային նման պայմաններու մէջ՝ յեղափոխութեան դրօշը բարձրացնել: Արդէն գիտակցութիւնը ո՛չ թէ հոսանք է, այլ՝ վարելու փորձ: Ճշմարիտ հերոսականը – անհատական թէ հաւաքական – ոգու բխումն է, իսկ ամէն բխում կ'արտայայտուի իբր *հոսանք*, իբր տարերային շարժում: Նման պարագային, սակայն, կ'ենթադրուի հերոսականը ստեղծող ենթակայի էութեան տարերքի խորագոյն խռովք մը: Այս կարգի խռովքները ո՛չ թէ բանական առաջընթացներ են, այլ ոչ-բանական, ենթագիտակցական: Հայ յեղափոխական շարժման օրհասական և տարերային բնոյթը մեզի կը դրդէ՝ անոր հերոսականը արձանացնող գիտակցական-անմիջական պատճառները ստորադասել ոչ-բանական-միջական գերապատճառի մը: Կը մնայ գտնել, թէ ո՞րն է գերապատճառային հանգամանք ունեցող իրրացիոնալ այն ուժը, որ կը շարժէ, կը փոթորկէ հայ էութան տարերքը: Այս հանելուկը լուծելու համար անհրաժեշտ է կրկին ճշմարտագրել, թէ հայ յեղափոխութիւնը հայոց ռազմական կորովի արձանացումն է: Հայոց ցեղաբանութիւնն ու պատմութիւնը կը վկայեն, որ այսորակ արձանացումը կը պայմանաւորուի *տառապանքով* կամ տառապանքի ներեսային խորագոյն ապրումով: Իբր օրինակ՝ յիշենք հայոց պատերազմական Աստուծոյ – Վահագնի – ծնունդը տիեզերական տանջանքէն և ա՛յն իրողութիւնը, որ հայ ստեղծագործութեան մէջ ողբի

բնական գիծ մը կայ. գիծ մը, որ թերևս բոլոր ժամանակներու երկու ամենատառապաշտ հայերու – Նարեկացիի և Րաֆֆիի – մօտ կը ստանայ ահարկու ուժականութեան և հոգևոր տիտանականութեան նկարագիր: Պատմական իրողութիւն է նաև, որ հայոց ռազմական կորովի ընտիր ներկայացուցիչները – Մամիկոնեան մեծ զօրավարները - զէնքի կը դիմէին աւելի տառապանքէն խթանուած, քան թէ փառքէն հրապուրուած: Հոգևոր նոյնանման դիմագիծ ունեցան նաև դաշնակցական հայդուկային փաղանգի ամէնաընտիր ներկայացուցիչները: Ըստ այսմ՝ հայ յեղափոխութիւնը սաղմնաւորուեցաւ այնժամ, երբ արտաքին ոտնիներու նիւթած չարիքը ապրուեցաւ իբր ներհոգևոր տառապանքի առաջընթաց մը: Ան հասունցաւ այնժամ, երբ հայութեան զգայուն զաւակները հոգևին խորասուզուեցան ցեղի ենթագիտակցականի օվկիանին մէջ, մտան անոր տառապանքի հնցը և վառուեցան անոր էութեան ողբերգութեամբ: Այս իրողութեամբ միայն կարելի է բացատրել հայ յեղափոխութեան առաքեալներու և մարտիկներու հերոսական, գրեթէ գերմարդկային նուիրումի այն գիծը, որ փառագարդեց մեր պատմութիւնը:

## Բ.

### **ՎԵՐԾԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԱԻՈՐՄԱՆ ԵՒ ԵԼՔԻ ՄԱՍԻՆ**

**Հարց.**- Ինչպէ՞ս կերպաւորուեցաւ հայ յեղափոխութիւնը:

**Պատասխան.**- Ընդհանուր գիծերով ան կերպաւորուեցաւ այնպէս, ինչպէս պատմութեան մարզին մէջ արձանացող հոգևոր կարգի ամէն եղելոյթ, այսինքն՝ ունեցաւ աստիճանական զարգացման պատմական ուղի մը. սկսաւ քառասային խռովքով, անցաւ անհատականացման առաջընթացէ մը (խմորումներ սերմանող առաքեալներու շրջան), որոշ նախնական ձևեր ստացաւ՝ խմբակցական ելոյթներու միջոցաւ (դաւադրական փոքրիկ կազմակերպութիւններ), վերածուեցաւ ընդլայնուելու ճիգի մը (արմենական-հնչակեան շարժում) և ի վերջոյ յանգեցաւ համադրական բարձր ձևի մը (Հ.Յ.Դաշնակցութիւն):

Զեյթունի 1877-ի ապստամբությունը թուրք պետությունը զենքով պատուհասելու նորատիպ ազդանշան մըն էր: Հայ ժողովրդի մէկ մասն օսմանեան բռնապետութեան ցոյց կուտար Խրիմեանի երազած «խեթիչ եղջիր»-ը: Նոյն Խրիմեանի հայրենիքին մէջ, տակաւին 50-60-ական թուականներուն կ'աճէին իր իսկ հայոց հետագայ Հայրիկի սերմանած սաղմերը: Վանի մէջ 1872-ին կազմուեցաւ «Միութիւն և Փրկութիւն» գաղտնի խմբակցութիւնը: Շուտով հոն պիտի մտնէր հայ յեղափոխութեան կարապետներէն Մկրտիչ Փորթուզալեանը՝ փոթորկելու հայ երիտասարդութեան սիրտը: Յետ այնու կը ստեղծուէր «Հայոց հայրենասիրական ընկերութիւն»-ը, որ ո'չ միայն քարոզիչներ, այլ և զինակիրներ կ'ուղարկէր գաւառները: Հայոց դաւադրական առաջին ամենամեծ ընկերութիւնը, սակայն, կազմուեցաւ Կարնոյ մէջ, 80-ական թթ. սկիզբները: Բնորոշ է, որ յեղափոխական նպատակ հետապնդող այս ուխտը կ'որդեգրէր ամենախիստ կարգապահութեան դրութիւնը: Խոռովքի մէջ էին նաև Փոքր Հայքը և Երիզան, ուր 80-ական թուականներու վերջերուն կը գործէին ո'չ միայն քարոզիչներ, այլ և հրոսախումբեր: Հայ յեղափոխութեան լեզենդար հերոսներէն Արաբօս խորհրդաւոր շրջագայութիւններ կ'ընէր Տարօնի մէջ: Գործի վրայ էին նաև Ժիրայրն ու Յունօս, և ուրիշ անյայտ կամ յայտնի Ժիրայրներ կամ Յունօսներ: Օրըստօրէ կ'աճէր նաև աստուածային ու մարդկային արդարադատութենէն յուսահատած և վայրենօրէն հուժկու կուրծքերու տակ ամենազգայուն սրտի մը քնքշանքները կրող «աւազակներ»-ութիւնը: 80-ական թ. վերջերուն, Վասպուրականի մէջ սկսաւ թափուիլ հայ յեղափոխական նահատակի արիւնը: Կովկասահայ զանգուածը լուռ հանդիսատեսի դերին մէջ չէր: Տակաւին 1882 թուականին, Մոսկուայի հայ ուսանողները, խթանուած «Հայաստանի բազմաշարժար ժողովրդի վշտից», հիմնեցին «Միութիւն Հայրենասէրների» դաւադրական ընկերութիւնը: Պետերբուրգի հայ ուսանողութիւնը ձայնակցեցաւ անոր: Քիչ յետոյ իր հետևանքներով ճակատագրական եռուզեռ մը կը սկսէր Կովկասի հայոց մտաւոր-

ական կեդրոն Թիֆլիսի մէջ: Կային բազմաթիւ և բազմանպատակ խմբաւորումներ (կոսմոպոլիտներ, համառուսական շարժման կողմնակից նարոդովոլէցներ, ազգայնական պահպանողականներ, ազատախոհ հայրենասէրներ), որոնցմէ «*Երիտասարդ Հայաստան*» խմբակցութիւնը հայ յեղափոխութեան պատմութեան մէջ կատարեց համադրիչ ազդակի մը դերը: Շուշիի մէջ կը գործէր «Ոյժ» ընկերութիւնը. Երևանի և Բագուի այլևայլ խմբակցութիւնները որոնումներու մէջ էին: Միասնաբար կամ առանձին առանձին այս ընկերութիւնները սահմանէն անդին կը դրկէին սուրհանդակներ, որոնք երկրի տառապանքի ճիշերն ու օրհասական ոգորումները իբր նուիրական յուշեր կը պատմէին խռովքի մատնուած երիտասարդութեան և անոր սրտին մէջ կը բարձրացնէին աննկարագրելի յուզումի ալիքը:

Անձանօթ արևելեան Հայաստանի և Կովկասի մէջ զգացումները փոթորկող, բախտորոշ խռովքին Եւրոպա հաստատուած կարգ մը հայ գործիչներ փորձեցին հիմք դնել կազմակերպուած կուսակցութեանց: Մարսէլյի հաստատուած Փորթուգալեանը, ի տես Վասպուրականի մէջ գործող իր աշակերտներու սրտառուչ ոգորումներուն, հայ քաղաքական դատի պրոպագանդը կազմակերպելու նպատակով 1885-ին հիմք դրաւ «Արմենիա» թերթին, որու շուրջը համախմբուած տարրերը կազմեցին «*Արմենական*» կուսակցութիւնը: Դժբախտաբար, հայոց այս առաջին քաղաքական կուսակցութիւնը տարածման լայն ուղիներ չգտաւ: Եւ այդ՝ մասամբ շնորհիւ այն իրողութեան, որ շուտով մարքսական աղօտ ըմբռնումներով տոգորուած, այլապէս հայրենասէր երիտասարդներու խմբակ մը՝ Նազարբեգեանի գլխաւորութեամբ, դարձեալ Եւրոպայի մէջ, հրատարակեց «Հնչակ» թերթը և տակաւին 1887-88-ին Արմենական կուսակցութեան հակադրեց *Հնչակեան շարժումը*: Այս երկու կուսակցութիւնները, որոնք իրենց գոյութեան փաստով իսկ ներքին ճակատներ կրնային ստեղծել և տկարացնել հայ յեղափոխութեան ուժը՝ բնականաբար, պիտի չկարողանային կովկասահայութեան խռովքը ձևաւորել և զանգուածները քաշել մէկ դրօշի տակ: Սակայն և այնպէս կար ուժերը

համադրելու, անոնց միջև կուռ դաշնակցություն մը առաջ բերելու պահանջը: Այս համահայկական առաջին դաշնակցությունը ստեղծելու պատիւը պատմութիւնը վիճակեց փոթորկալից խառնուածքով, տեսական մեծ հմտութեամբ և կազմակերպչական հանճարով օժտուած յեղափոխականի մը – Քրիստափոր Միքայէլեանին, որ 1890 թուականին Թիֆլիսի մէջ այլազան համոզումներու տէր անհատներու և խմբակցութիւններու, ինչպէս նաև տարբեր նպատակներ հետապնդող հոսանքներու ներկայացուցիչներու ուշադրութիւնը կեդրոնացուց թուրքաց Հայաստանի դատին վրայ և հիմք դրաւ հայոց համազգային քաղաքական շարժման – «*ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ*»: Երկու տարի յետոյ ան վերանունուեցաւ *Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ*, դարձաւ քաղաքական ամրակուռ կուսակցութիւն մը և հակառակ հնչակեաններու հեռացումին համազգային ուխտէն՝ այնու ամենայնիւ պահեց իր համահայկական նկարագիրը, աստիճանաբար նուաճեց բուն Հայաստանի – Մեծ Հայքի – ժողովրդական բոլոր զանգուածները, արձանագրեց հայոց ահարկու գուպարներու, յաղթանակներու և պարտութիւններու պատմութիւնը և օր մըն ալ (1918-ին) հիմքը դրաւ հայոց քաղաքական կառոյցին, երկնելով օրհասական և հերոսական *ՄԱՅԻՍ ՔՍԱՆԵՒՈՒԹԸ*:

**Հարց.** Ի՞նչ պատճառով Հ.Յ.Դաշնակցութիւնը դարձաւ հայոց քաղաքական և մարտական համազգային կազմակերպութիւնը:

**Պատասխան.** Հոգեբանական, տեսական և գործնական շարք մը նշանակալից պատճառներով, որոնց պիտի ծանօթանանք՝ ստորև:

**1.Իրերու տրամաատութիւն կամ 19-րդ դարու հայոց պատմական կեանքի զարգացում.** Արմենական կուսակցութիւնը կը ներկայացնէ հայ յեղափոխութեան քարոզչական-դաստիարակչական պարբերակը (պերիոդ): Փորթուգալեանը Պոլսոյ «Արարատ» կրթական միութեան գործիչն էր և հայոց փրկութիւնը կը տեսնէր մտաւոր բարձրացումի և դաստիարակութեան մէջ: Սակայն տաճիկները խափանեցին թուրքաց Հայաստանի հայոց կրթական ցանցը, իսկ Ռաֆֆին հանդիսացաւ ցեղային դաստիարակութեան ամբողջ դպրոց



մը: Դաշնակցութիւնը որդեգրեց այս դպրոցի սկզբունքն ու տառը և հասակ նետեց այնպիսի միջավայրի մը մէջ, ուր իր հոգևոր հայր Բաֆֆին ճշմարիտ կուռք մը դարձած էր: Արմենական կուսակցութիւնը ծրագրեց դաստիարակչական գործը, չկրցաւ զայն իրականացնել: Դաշնակցութիւնը իր կենդանի գործի ճանապարհին հանդիպեցաւ դաստիարակչական արուեստի մեծ վարպետ Բաֆֆիին: Հնչակեան կուսակցութիւնը կը ներկայացնէր հայ յեղափոխութեան ցուցարարական-ընդվզական պարբերակը (Գում Գաբու, Բաբը Ալի): Կեանքը, սակայն, ցոյց տուաւ, որ նման գործունէութիւնը ոչ միայն աւելորդ աղմուկ մըն է, այլև արիւնտ նախճիրներու պատրուակ մը՝ օսմանեան բռնապետութեան (յիշել 1895թ. կոտորածները): Միջավայրի մը մէջ, ուր ժողովրդական անգլէն զանգուածները կը գտնուէին բարբարոս իշխանութեան մը և սպառազէն խուժաններու սուրին տակ, ուր հայդուկները ճրագով կը փնտռուէին, աւելի նպատակայարմար էր կռուին տալ խմբային ընդհարումներու և ահաբեկումներու ձև, մինչև որ զանգուածները յեղափոխական կենդանի գործի քուրային մէջ հոգեփոխուէին և ռազմունակ դառնային: Հնչակեան կուսակցութիւնը չկրցաւ որդեգրել անհամեմատօրէն դժուարին և շարքերէն մեծ զոհողութիւն պահանջող մարտարուեստի այս դրութիւնը: Միայն Դաշնակցութեան սրտագին աջակցութեամբ Մուրատը կրցաւ Սասունի 1894-ի այլապէս անյաջող ապստամբութիւնը կազմակերպել: Հնչակեան կուսակցութեան հոգեբանօրէն սխալ ընթրնուած ցուցարարական գործունէութիւնը փակուեցաւ զարհուրելի ջարդերով և այս կազմակերպութեան աղիտաւոր պատակտումով ու բարոյական քայքայումով: Փոխվրէժի գործի կազմակերպումով միայն հայ յեղափոխութեան պատիւը կրնար փրկուիլ:

Իր վրէժխնդիր մարտիկներու փաղանգով գրոհի անցնող Հ.Յ.-Դաշնակցութիւնը կը ներկայացնէր հայ յեղափոխութեան գործնական-ռազմական պարբերակը: Խանասորի արշաւանքը, որ կը լուծէր ո՛չ միայն դաշնակցական Պետօներու, այլև արմենական Աւետիսեաններու և հնչակեան Մարտիկներու վրէժը, գործնական ար-

ժեքի հետ կը կրեր նաև ներցեղային բարոյականի բարձր աքթի մը կնիքը: Առ հասարակ Դաշնակցութիւնը վարպետ է իր պայքարը հոգեբանօրէն կազմակերպելու գործին մէջ: Այս իրողութեան պատճառն այն է, որ ան իր ռազմարուեստի մէջ ո՛չ միայն կը խտացնէ թե՛ արմենական (դաստիարակչական), թե՛ հնչակեան (ցուցարարական) գծերը, այլև իր ռազմական հուժկու խառնուածքին շնորհիւ առանձին թափ մը կուտայ անոնց՝ նսեմացնելով բուն հեղինակները:

**2. Անհատապաշտական գիծ.** Արդէն Հայաստանի բնութեան ներանջատական նկարագիրը և հայոց ցեղային բաղկացութեան տարրերը մեր ժողովուրդին պարտադրած են անհատապաշտական հոգեբանութիւն մը: Դաշնակցութեան հիմնադիրներու հմտութեան շնորհիւ, աշխարհագրական ցրուածութեան հետ, հաւանաբար այս պարագան ալ հաշուի առնուեցան և կազմակերպութեան տրուեցաւ ապակեղոնական ձև: Այս ձևը զարգացուց փոքրիկ խմբակցութիւններու և անհատներու նախաձեռնութեան ոգին: Միւս կողմէ, անհատապաշտական հայեցողութիւնը համապատասխան ըլլալով հայ հոգեբանութեան, դարձաւ ձգողական ուժ մը և կազմակերպութեան դրօշին տակ հաւաքեց անհատապաշտ ժողովրդի զաւակները: Արմենականները առանձին աշխարհահայեցողութիւն մը չորդեզրեցին, իսկ հնչակեանները տարուեցան հայ էութեան խորթ մարքսական զանգուածապաշտական մտածումի հովերով: Անհատապաշտական աշխարհահայեցողութեան շնորհիւ Դաշնակցութեան շարժումը ստացաւ հոգեբանօրէն կազմակերպուած և բնականօրէն զարգացող առաջընթացի մը բնոյթ – հայդուկային փոքրիկ խումբերը աստիճանաբար վերածուեցան յեղափոխական գունդերու, իսկ ասոնք ալ ճամբայ բացին պետականօրէն կազմակերպուած բանակի դրութեան:

«Դաշնակցութիւն» բառը արդէն կը բնորոշէ հասարակական կազմակերպութեան անհատապաշտական ձև մը: Դաշնակցութիւնը կը նախատեսէ անհատներու այնպիսի ներդաշնակ միութիւն մը, որուն մէջ, ի յառաջագունէ, հաշուի կ'առնուի իւրաքանչիւր անդամի անձ-

նաւորութիւնը: Դաշնակցական անհատ մը ազատ կամեցումի տէր անձ մըն է և ոչ թէ մարքսական ստրուկ մը: Ան անհատականութիւն է, ինքնակամ ստեղծագործութեան իրաւունք վայելող անձնաւորութիւն մը և ո՞չ թէ զանգուածի մէկ աննշան մասնիկը: Բարոյական այս ազատ մթնոլորտի շնորհիւ էր, որ Դաշնակցութեան մէջ հասակ նետեցին հզօր անհատականութիւններ, մեծ, փառահեղ հայդուկներ:

3. **Համադրական.**– Համադրութիւնն այնտեղ է հնարաւոր, ուր համադրելի իրականութիւններ կան: Այս համադրելի իրականութիւնները նախ և առաջ կազմակերպութիւնը բաղկացնող անձնաւորութիւններն են, որոնց միջև մտածումի, զգացումի և գործելակերպի ներդաշնակութիւն պիտի ստեղծուի: Բայց, որպէսզի գիտականօրէն այդ հնարաւոր ըլլայ, նախ ինքը՝ կազմակերպութիւնը պիտի որդեգրէ փիլիսոփայութիւն մը կամ աշխարհահայեցողութիւն մը, ըստ որո՞ւ՝ աշխարհի մէջ այլազան իրականութիւններ կան, որոնք ըստ կարելոյն իդէալ ներդաշնակութեամբ մը պիտի միանան: Փիլիսոփայութիւնը (որով նաև գիտութիւնը) այդ իրականութիւնները կը բաժնէ երկու ստորոգածի (կատեգորիա) – նիւթական և գաղափարական կամ մարմնական և հոգևոր: Մարքսականները շեղուելով ճշմարիտ գիտութեան ուղիէն կը ճանչնան միայն նիւթական իրականութիւններ: Հպարտանքով միայն կարելի է արձանագրել այն փաստը, որ Դաշնակցութեան տեսաբանները կըրցած են հաւատարիմ մնալ իրենց ժողովրդի էութեան և տուրք տալ քննադատական իրապաշտութեան (այսօր ամենէն տիրական փիլիսոփայական ուղղութիւնը) որդեգրելով երկարմատեան (տուալիստական) պատմահայեցողութիւն մը և իբր գիտական, որով նաև ընկերաբանական իդէալ՝ հաւատալ *առարկայականի* և *ենթակայականի* համադրումին: Համադրական այս հոգեբանութիւնը փրկելով Դաշնակցութիւնը կոյր միակողմանիութենէ (վայրենիի տգիտութիւնը միայն կրնայ պնդել, թէ միայն նիւթ կայ, ինչպէս մարքսականները կ'ընեն, կամ միայն ոգի՝ ինչպէս միարմատեան գաղափարապաշտները, քանզի բնագանցութիւնը տակաւին չէ ճշտած, թէ ի՞նչ է նիւթը, ի՞նչ՝ ոգին)

ներշնչած է անոր գործնական ըմբռնում մը հասարակական կեանքի և ընդհանրական շահերու համադրման մասին: Այս ըմբռնումը սքանչելիօրէն պատկերուած է Դաշնակցութեան էմբլէմով – զինանշանով: Հոն՝ գրիչը միտքը կը խորհրդանշէ, բահը՝ աշխատանքը, դաշոյնը՝ ռազմական կորովը: Ըստ այսմ՝ Դաշնակցութիւնը հասարակական շարժում մըն է, որ զանգուածներուն կը խոստանայ լոյսը, որ ազատ մտքէն կը ծնի, հացը, որ արդար աշխատանքէն կ'ելլէ և ազատութիւնը, որ սուրով կ'ապահովուի: Դաշնակցութիւնն ուրեմն՝ ե՛լ մշակութային շարժում է, ե՛լ տնտեսական յեղափոխութիւն, ե՛լ ռազմական ոգորում: Ան կը հետապնդէ ո՛չ թէ հայկական որևէ խաւի կամ դասակարգի շահերը, այլ բովանդակ ազգի մշակութային, տնտեսական և քաղաքական իրաւունքներու պաշտպանումը: Համադրական այս ոգու շնորհիւ էր, որ Դաշնակցութիւնը դարձաւ համահայկական կազմակերպութիւն մը և *համահայկականութեան գաղափարի դրօշակակիրը*:

**4. Գաղափարապաշտութիւն.**Պէտք է առանձնապէս յիշել դաշնակցական էութեան այս գիծը: Անոր հերոսները, ինչպէս յիշուեցաւ, ամէնէն առաջ ազնիւ տառապանքի հսկաներ էին: Գաղափարապաշտութիւնը հայաստանածին հայութեան հոգեբանութեան տիրական մէկ գիծն է: Հայը առաւելապէս հողագործ մըն է և միշտ ալ հակամէտ՝ իր զբաղումի բերումով բնօրէն պարտադրուած խորհրդապաշտութիւնը՝ հակազդել գաղափարապաշտութեամբ: Սրտառուջ այն ճիգը, որ թափեց ան իր քրիստոնէութիւնը պահպանելու՝ այս իրողութիւնը հաստատող փայլուն ապացոյց մըն է: Դաշնակցութիւնը որդեգրելով գաղափարապաշտական գործունէութեան դրութիւնը՝ թափանցեց հայ ժողովրդի էութեան խորը, յետոյ արժանանալու անկէ հարազատուելու և ժողովրդական հոգեբանութիւն դառնալու բարձրագոյն պատուին: Մինչ հնչակեան փերեզակային «մաթերիալիզմը» խրտչեցուց հայ զանգուածները և առիթ դարձաւ, որ այս կուսակցութիւնը Մեծ Հայքի սահմաններուն մէջ ի սպառ կորսնցնէ իր պատուանդանը: Բացի այդ, գաղափարապաշտութիւնը մշտանորոգ

ուժ մըն է: Այստեղ՝ գաղտնիքը ա՛յն փաստի, որ Դաշնակցութիւնը յաճախ կ'այրի, բայց երբ պատմութեան ահագանգը կը հնչէ՝ առապելեական փիւնիկ թռչունի պէս իր մոխիրներէն կը վերածնի:

5. **Յեղայնութիւն.**– Դաշնակցութեան էութեան տարերքն է սա: Հայոց ցեղայնութեան յատուկ է հոգևոր ինքնամփոփումի և գաղափարական կղզիացումի գիծը: Ահագին խորհուրդ կայ ա՛յն փաստի մէջ, որ լուսաւորչական դաւանութեան միջոցով քրիստոնէութիւնը կղզիացաւ Հայաստանի մէջ, այսինքն՝ ազգայնացաւ: Նոյնանման հոգևոր առաջընթաց մը տեղի ունեցաւ, երբ յանձին Դաշնակցութեան, ընկերվարութիւնը ազգայնացաւ Հայաստանի մէջ: Դ. դարու սկիզբներուն՝ հայերը ռազմական կորով ունէին, բայց կը տառապէին գաղափարական աղքատութենէ, ԺԹ. դարու վերջերուն՝ հայերը գաղափարական շարժի մը ենթարկուած էին, բայց կը տառապէին ռազմական կորովի չգոյութենէն: Դ. դարու հայկական տառապանքէն ծնաւ հայոց քրիստոնէութիւնը, ԺԹ. դարու տառապանքէն՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Այնժամ՝ հայոց ազգային անձնաւորութիւնը արձանացաւ իբր կրօնական զգացում, այսժամ՝ իբր ռազմական կորով:

6. **Տեմպերամենտ.**– Տեմպերամենտը անհատական կամ հաւաքական եսի ներքին ուժականութեան, տարերային, անբանական կարողութեան չափանիշն է: Պատմութեան մարզին մէջ՝ ան է որոշիչը «ես»-ի ստեղծագործութեան երանգներու և շատ տեսակէտներով՝ ստեղծագործուած արժէքներու ճակատագրի: Ջօրեղ տեմպերամենտ, հուժկու խառնուածք ունենալ – կը նշանակէ ինքնարձանացումի ընդունակ ըլլալ: Ջօրեղ տեմպերամենտը սիրտերը ճմլող, նուաճող ուժ մըն է: Հայաստանը՝ իր հրաբխային ցնցումներով, երկրաշարժներով, ջրվեժներով, կատաղընթաց գետերու սահանքներով, կլիմայական հակադրութիւններով... ունի բնական եզակիօրէն հուժկու տեմպերամենտ մը: Քանի որ տեմպերամենտը նուաճողական գորոյթ մըն է – ապա՝ բնական տեմպերամենտը, իբր միջավայրի ազդեցութիւն՝ իր

կնիքը կը դնէ ժողովրդի հոգեբանութեան վրայ: Որքան հուժկու է հայրենիքի բնութեան տեմպերամենտը, այնքան խոր կ'ըլլայ անոր ազդեցութիւնը տուեալ ցեղի էութեան վրայ: Զարմանալի չէ, որ հայը նախ և առաջ ցայտունօրէն ներշնչական էակ մըն է: Հայրենիքի անարկու բնութեան տեմպերամենտի մէջ է հայու տառապաշտական հոգեբանութեան իրրացիոնալ գաղտնիքը: Այս համեմատութեամբ՝ հուժկու է անոր անդրադարձական զօրոյթը: Հոգեբանօրէն ներգործօն դարձած հայը՝ անեղ տեմպերամենտով օժտուած էակ մըն է: Երբ հայը շարժման կ'անցնի՝ իր հայրենիքի երկրաշարժային բնութեան պէս, անոր ոգին կը դառնայ ցեղաշարժի մարզ մը: Հայու ուժը իր տարերայնութեան, իր մոլեռանդութեան մէջ է: Դաշնակցութիւնը կըրցուի հայ ցեղային էութեան այս գծերը մարմնացնել իր շարժման մէջ: Դաշնակցութեան ուժի գաղտնիքը իր բարձր տեմպերամենտի մէջ է: Ասոր շնորհիւ էր, որ կուսակցութիւնը 20-րդ դարու սկզբին դարձաւ *աշխարհի ամենասահարկու ահաբեկչական կազմակերպութիւնը*: Ասոր հետևանքով էր, որ տիտանականութեան հասնող հոգևոր խոյանք մը միշտ զուգահեռուեցաւ անոր յեղափոխական գործունէութեան (Բանկ Օտտոմանի խոյանքը և մանաւանդ Բաբկէն Սիւնիի Պոլիսը հրկիզելու ծրագիրը): Բարձր տեմպերամենտով պայմանաւորուեցաւ կազմակերպչական մեծ հանճարներու ներկայութիւնը՝ այս կուսակցութեան մէջ (Քրիստափոր և Արամ): Բարձր տեմպերամենտը ասպարէզ կոչեց Դաշնակցութեան մարգարէատիպ առաքեալները (Զաւարեան, Ռոստոմ, Հրայր): Ան էր, որ ոտքի հանեց տիտանատիպ հսկաներ (Սերոբ և Գեորգ Չաուշ, Դուման ու Խեչօ, Մուրատ ու Քեռի), անեղաշունչ զօրավարներ (Անդրանիկ ու Եփրեմ) և վերջապէս լեգենդար հերոսներու ամբողջ փաղանգ մը (Արաբօն ու Սաքօն, Չաթօն ու Շէրօն, Լաթօն ու Յարօն, Ախօն ու Սայդօն և տարօրինակ մարդոց ամբողջ հարիւրակներ): Տարբեր է նաև դաշնակցական մտածողի, վիպասանի, բանաստեղծի ոճը. կրակ կայ անոր մէջ, թափ և տարերայնութիւն (Սիամանթօ, Վարու-

ժան, Ակնունի): Մեռելները միայն յիշեցինք, անոնց գիծը և նկարագիրը. մեռելները, որոնք իրենց հուժկու խառնուածքով ճմլեցին աշխարհի սիրտը և մեր պատմութեան անիւր մղեցին դէպի Մայիս 28-ի նոր կռահումներով յղի արշալոյսը:

### ***Փա՛ռք իրենց***

**Հարց.**- Եւ սակայն ի՞նչ է այս Մայիս 28-ի խորհուրդը:

**Ուատասխան.**- Մայիս 28-ը համահայկականութեան գաղափարի քաղաքական յաղթանակի օրն է: Դարերէ ի վեր, հայ ոգու մէջ կը մաքառէին տրամագծօրէն ներհակ երկու իդէալներ կամ սկզբունքներ: Ատոնցմէ մէկը՝ *համահայկականութեան* սկզբունքն էր, միւսը՝ *անհատականացման*: Առաջինը միայն գաղափար մըն էր, երկրորդը՝ իրականութիւն մը: Գաղափարը կը պայմանաւորուէր մեծ հայրենասէրներու իղձերով, իրականութիւնը՝ Հայաստանի ներանջատական բնութեամբ: Մեծ հովիտները, որոնք մշակութային կեդրոններ էին՝ կը հետապնդէին ազգի քաղաքական միութեան իդէալի իրականացումը, լեռնաստանները՝ կեդրոնախոյս հակում ունէին: Այրարատն ու Տարօնը չկրցան հաղթահարել լեռնաստաններու ընդդիմութիւնը, վրայ հասան օտար ուժերու արշաւանքները և հայութեան քաղաքական դրօշը աստիճանաբար նսեմանալով՝ ի վերջոյ հրապարակէն իսպառ չքացաւ: Ազգային ամբողջականութիւնը փրկելու համար՝ հայ խորհողները (այրարատցի կամ տարօնացի) դիմեցին կրօնական-դաւանական մշակութային միջոցներուն և լուսատրչական դաւանութեամբ և Ե. Դարուն սկսուած գրական կեանքով յաջողեցան ազգը, գէթ հոգեպէս, միացնելու կերպ մը գտնել: Մշակութային և դաւանական այս գործօններուն հետագային միացաւ բացասական երևոյթ մը – բռնակալներու պարտադրած համատարած տառապանքը: Այս վերջին գործօնը, որ ճակատագրով նոյնացուց բոլոր հայերը, հրահրեց ո՛չ միայն քաղաքական վերածնութեան, այլև համահայկական քաղաքական միութեան իդէալը: 19-րդ դարու վերջերուն հրապարակ եկաւ Րաֆֆին և

գաղափարաբանական ձևակերպում մը տուաւ անոր: Այնուհետև սկսաւ Դաշնակցութեան փառաբանութեամբ և ձգտումներով էապէս համահայկական քաղաքական շարժումը: Դաշնակցութիւնը որոշեց ֆէդերացիոնի ճանապարհով աստիճանաբար յանգիլ հայոց քաղաքական միութեան իդէալին: Համաշխարհային պատմական անցքերը, սակայն, ուրիշ դրութիւն մը պարտադրեցին և հայ զանգուածները ամէն կողմէ քշեցին դէպի իրենց հայրենիքի բնական և իրենց ցեղայնութեան հոգևոր կորիզը եղող Արարատեան Դաշտը: Եւ հոս ալ քանի մը բախտորոշ ճակատամարտներէ յետոյ 1918-ին *իրականացաւ հայու քաղաքական միութեան* իդէալը:

Այստեղ՝ Մայիս 28-ի խորհուրդը. խորհուրդ մը, որ կեանքի հրամայականով, նոր փոթորկումներու և արիւնի ճանապարհով մեզ պիտի մղէ համահայկական և Համա-Հայաստանեան քաղաքական միութեան – *ՄԻԱՅԵԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ* – գաղափարի իրականացման գործին:



**ՑԵՂԱՆԵՆԳ ՇԷՑԹԱՆԸ**  
**ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ**  
**ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

## Ա. ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՇԷՅԹԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՅԹԱԳԻՐԸ, ԱՐԺԷՔՆ ՈՒ ԴԵՐԸ

Մեր կեանքում հին, շա՛տ հին երևոյթ է նա – **ցեղանենգ շէյթանը**: Ժամանակակից ըմբռնումով նա կոչւում է **հակադաշնակցական**: Անիծապարտ դարերը յղկեցին նրան, բնեռացրին իբր հոգեբանական իւրորոշ տիպ և մղեցին, որ նա անվերջ սողայ մեր կեանքի հետ՝ խայթելով մեզ և խեղկատակելով օտարին: Ժամանակների առաջընթաց հոլովոյթին զուգահեռ՝ նա ըստ ձևի կերպափոխութեանց ենթարկւեց, տարբեր անուններ ստացաւ, ըստ էութեան, սակայն, մնաց միշտ նոյնը – «անցեղ հայութեան» ստորնութեան յաւիտենական գիծը, **հակացեղային չարիքը**:

Նա մեր մէջ է յարատւօրէն: **Կրաւորական** է, երբ ցեղը հոգևոր երկունքի կամ ռազմավար խոյանքների մէջ է. դառնում է **ներգործական**, երբ նա պարտւում է: Առաջին դեպքում՝ նա թաքնւում է մեր ազգային օրգանիզմում և իբր ներքին մակաբոյժ՝ ծծում մեր երակների կենսատու հիւթը: Երկրորդում՝ ջրօձի-հիդրա - նման բարձրացնում է իր հրէշային գլուխը, լեզու է առնում և խօսքի թունաւոր սլաքներով ձգտում է ծակոտել մեր սիրտը:

Նա դէմ է մեր ազգային իդէալին, երբ գոռ պայքարում ցեղի ճակատագիրն է վճռում:

Նա դասալիք է, երբ Հայաստանում պատերազմ կայ:

Նա լիզում է թշնամու գարշապարը, երբ սա գալիս է մեր հպարտանքը, մեր ազատութիւնը ոտնակոխելու:

Նա դաւաճան է, երբ թշնամին ներքին լրտեսի պէտք ունի:

Նա քաղաքական կաւատ է, եթէ ցեղավաճառութեամբ ապրելու կամ դիրքի հասնելու կարելիութիւն է տեսնում:

Նա գետնաքարշ ստրուկ է, երբ հայրենիքում օտարն է իշխում:

Նա զագրաբան քննադատ է, երբ ցեղի մարտիկները պարտւած են:

«Խեթիչ եղջիւր» չունի այս թշուառականը (հայոց Աստուածը վաղուց է փշրել նրա կայենական կոտորները), այլ միայն թունաւոր

լորձունք: Խոսքի ցեխ է թափում նա բերանից, աղտոտում մեր իրականությունը և օտար աշխարհի առաջ մեզ դարձնում ամօթահար:

Այն օրից, երբ թուրքն ու բուլղնիկը միանալով իրենց ոգու ցեխը փոխեցին մեր կեանքի ճանապարհին՝ այդ տիպը դարձաւ ո՛չ միայն կենտրոնախոյս, այլև ներազգային տեսակետից՝ վճռաշունչ չարագործ:

Նա ա՛յն կատուն է, որ թոնիր է մտնում, երբ կրակ չկայ. խառնում է մեր կեանքի մոխիրը և թշնամուն մլաւում՝ **«տեսէ՛ք, հայոց ցեղայնութիւնն այլևս անթեղ չունի»:**

Եվ տակաւին մեր միտքը չարչրկում է դարերի առեղծաձը – պիտի հոգեփոխի՞՞ այս չէակը, դառնա՞յ դրական, ստեղծագործ ոյժ, ձուլի՞՞ մեր ցեղայնութեան բովում, նւիրի՞՞ համահայկականութեան գաղափարականին և գործին, միանա՞յ մեզ՝ մեր գոյութեան պայքարի ճակատն ամրացնելու:

Դաշնակցական ե՛նք – համահայկական և համահայաստանյան հոգեբանութիւն ունենք, չենք հաշտւում մեր հայրենիքի քաղաքական մասնատումի և մեր ժողովրդի աշխարհագրական ցրածութեան փաստին, ձգտում ենք **ամբողջական հայութեան և ամբողջական Հայաստանին** և հասկանալի է, որ սուկում ենք հայութեան հոգևոր պառակտումից և երազում ոչ միայն «ազգային միացեալ ճակատ», այլև համազգային անխզելի ուխտ: Ամաչում ենք մեր ժողովրդի ներքին սկարութիւններից. ձգտում ենք համացեղային ինքնահզօրացման: Չթաքցնենք. ամբողջական հայրենիքը վերանաճելու, ցեղի որդիները իմի հաւաքելու, այսինքն ազգային պետութիւն ստեղծելու ծրագիր էլ ունենք: Գիտե՛նք նաև, որ այդ ծրագրի իրականացումը պահանջում է ռազմա-յեղափոխական նոր շարժում, թերևս աւելի՛ քան համառ, դաժան և երկարատև պայքար, հոգևոր, բարոյական, մարմնական և նիւթական ուժերի կենտրոնացում և լարում: Ուզում ենք, որ մեր պայքարի ճակատը լայն լինի, շարքերը՝ խիտ, զինուորները՝ առատ – գիտե՛նք, որ քանակն է աւելացնում որակի արժէքը:

Մեր իրաւունքն է հայ ժողովրդի բոլոր խաւերից ռազմիկներ և ստեղծագործ ուժեր պահանջելը – պահանջել նք, բայց չմոռանանք մի բան, ա՛յն, որ հոգեբանօրէն հակադաշնակցական տիպն ո՛չ մի դէպքում և ո՛չ մի ձևով դրական մասնակցութիւն ցոյց չի տալու մեր ոգորումներին կամ մարտնչումներին:

Արդէն պատմական անցեալում նա միայն խնայել և պաշտպանել է ցեղատիպ հայից, բայց երբե՛ք նրան դարձել վշտի և ռազմի եղբայր: Յիշե՛նք ամենաթարմ օրինակներից մէկը: 1919 թուականին, երբ ցեղատիպ հայն օրհասական ճիգեր էր թափում քառսից ձև տալու պետական կեանքի կառոյցին՝ Վրաստանն ու Ադրբեյջանը, ի շարս այլոց, սկսեցին հետապնդել և պատժել նաև հայ համայնավարներին: Վերջիններս դիմեցին Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան գթութեան: Մեր կառավարութիւնը նրանց ո՛չ միայն հիւրընկալեց երկրի սահմաններում, այլև աշխատանքի և ապրելու կարելիութիւն ընձեռեց: Յետոյ (1920թ. գարնան) պարզեց, որ մեր հացով կշտացած և մեր գթութեամբ փրկւած այս թշւառականները Մոսկուայի լրտեսներն էին Հայաստանում – լրտես-դաւաճաններ, որոնք աշխատում էին յօգուտ բոլշևիկ-թուրք զինակցութեան և ի վնաս հայ ժողովրդի: Ահա՛, թէ ինչպէ՛ս է հատուցանում ցեղանենգ շէյթանը:

Բացի ապերախտութիւնից՝ այդ տիպն ունի նաև հոգեբանական այլ գծեր, որոնց շնորհիւ մեր ցեղամարտի համար՝ դառնում է իսպառ անարժէք: Իբր օրինակ վերցնենք գաղութահայ հակադաշնակցական տիպը, «հոգեբանօրէն հնչակ-ռամկավարը» և ո՛չ թէ մոլորւածը, որ մի օր անխուսափելիօրէն պիտի զոջայ, պիտի հասկանայ, որ չարաչար կերպով խաբւել ու շահագործւել է հակացեղային ջրօձից: Զուտ հնչակ-ռամկավար տիպը, այսինքն՝ հոգեբանօրէն հակադաշնակցականը չի սիրում առեղծւածներ, իսկ մեր պայքարի ելքը նրան թուում է առեղծւածային: Նա ապրում է ներկայի կոշտ փաստերով, իսկ ներկայի փաստերը դասաւորւած են ի վնաս մեզ: Նա նորաստենչ էակ չէ և գուրկ է մեր արմենական ուժական և ուժապաշտ խառնածքից, որով՝ իդէալի մասին հասկացողութիւն չունի:

Նա կայապաշտ է և չի ըմբռնում Ջիւանիի «**փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխին՝ կուգան ու կերթան**» իմաստասփրութեան եռութիւնը, որով հաւատում է, որ բոլշևիկի և թուրքի տիրապետութիւնն, իբր **ռեալ ներկայ**, յաւիտենական է: Նա պատմութիւնից գիտէ, որ մենք պարտուած ենք. անծանօթ է մեր ոգու խռովքին և կարծում է, որ ընդմիջտ պարտուած կը մնանք: Նա անծանօթ է նաև մեր ոգու ներողական գծին. մենք նրա վրայ թողնում ենք **շղթայակապ վագրի** տպաւորութիւն. նա վախենում է մտնել մեր վանդակը, որովհետև ինքը չար է, յիշաչար և հաւատացել է, որ զգւելի է դարձել մեզ:

Վերջապէս՝ նա անյաղորդ է հայ ցեղայնութեան. նա մեր ժողովրդի «անցեղ» մասն է, իսկ անցեղ ժողովուրդը խուժան է, բարոյական խեղկատակ:

Բարոյական խեղկատակը խաղաղութեան ժամին գռեհիկ տեսակի չարագործ է, վտանգի ժամին՝ սնասարսափ (պանիկական) դասալիք:

Զինակցե՞լ նրան, երբ մեզ պողպատէ սրտով և երկաթէ կամքով զինընկերներ են պէտք, որոնե՞լ նրան, երբ մենք վտանգի դուռն ենք բախում:

Նա սուկում է մեր մտածումից, փախչում մեր ուրուականից. զբաղւե՞նք նրանով:

Նրանով զբաղւել նշանակում է ո՛չ թէ մեր «մոլորած եղբայրները» դարձի բերելու փորձ անել, այլ արտասահմանում, տակաւին, երկա՛ր ժամանակ կապիկ խաղացնել:

Այդ գիտեն մեր դատի թշնամիները, որոնք մթի մէջ ծափ են տալիս հայկական կապկախաղին. գիտէ նաև ինքը՝ պարող կենդանին, որ տհաճութիւն պատճառող խեղկատակութեամբ՝ ձգտում է ցրել մեր ուշադրութիւնը:

Հասկանա՛նք. արտասահմանում հայերի միջև թիրիմացութիւն չկայ. չփորձենք զիրար համոզել և ժամանակ կորցնել. եղած կապկախաղը կազմակերպուած մի դաւ է մեր դատի դէմ և աւա՛ղ – **յաջողւած դաւ**:

Առաջին խրամատը, որից մենք արհամարհանքով պիտի անցնենք, հենց այդ կապկախադն է: Թողնե՛նք, որ կապիկն ինքնիրեն պարի, մինչև որ թուրքն ու բոլշևիկն էլ ձանձրանալով՝ լքեն նրան:

Ներկայ պայմաններում, երբ ցեղի երկաթեայ խարազանը չի գործում, խօսքով հազիւ թէ կարելի լինի այդ անամօթ կենդանուն մի բան հասկացնել:

Մխալում են, չարաչար կերպով սխալում բոլոր նրանք, որոնք ենթադրում են, թէ բանավէճը դաստիարակութեան այնպիսի մի մեթոդ է, որ կարող է կապիկից՝ առյուծ, վախկոտից՝ ռազմիկ, ազգադաւից՝ հայրենասէր, քառսից՝ բարոյական հսկայ ստեղծել:

Մխալում են նաև նրանք, որոնք գաղութային պայմաններում հաւաստում են ազգային ուժերի կենտրոնացման: Ներազգային միութիւնն ո՛չ թէ սոսկ բանական պահանջ է, այլ ամենից առաջ՝ կենսաբանական: Կենսաբանական պահանջները բաւարարում են կենսաբանօրեն խառնվածքոտ «ես»ի ներքին ուժի լարումով-ինքնապարտադրումով: Գաղութում մենք չենք կարող մեր ուժը պարտադրել հոգեբանօրեն տիրադաւ տարրերին, որոնք միայն եկաթեայ խարազանից են ազդում և երբե՛ք համոզիչ խօսքից, որոնք զուրկ են ներցեղային բարոյականից և վաղուց ի վեր իրենց անունը գրել են դժոխքի պատին:

Ներազգային միությունը նախատեսում է **միացուցիչ բռունցք**: Այս բռունցքը կարող է լինել **բարոյական**, եթէ տւեալ ժողովրդի կենտրոնախոյս տարրերը **բարոյական** կշիռ ունեն. **մտատրական**, եթէ նրանք իրենց սրտում **ցեղային մշակոյթի գծեր** են կրում. **հոգևոր** եթէ նրանք **հոգևոր ոգորումից** ի սպառ զուրկ չեն. **նիւթական**, եթէ նրանք սոսկական փերեզակներ չեն. **քաղաքական**, եթէ նրանք **ազգային պետութիւն** կառուցանելու տենչ ունեն: Իսկ ո՞վ չգիտէ, որ մենք գործ ունենք հոգով փերեզակ, մտածումով՝ ստրուկ, բարոյականով՝ անկշռելիօրէն ընկած, աշխարհահայեցողութեամբ՝ իսպառ բոպիկ, քաղաքական դաստիարակութեամբ՝ հիմնովին սնանկ մի խուժանի հետ:

Նա կարող է միայն **Ֆիզիկական** բռունցքով յաղթահարել. իսկ ո՞վ ասաց, որ պատմական առաքելություն, քաղաքական համացեղային իդեալ և այնքա՛ն արտաքին թշնամիներ ունեցող մի ժողովրդի **կազմակերպւած ուժը** կարող է իրատունք համարել՝ իր եռանդի ահագին մասը վատնել անուղղայ և ամե՛ն դէպքում ցեղորէն անշահ ներքին հակառակորդի յիմարութեան կոտորները փշրելու կամ յղկելու ճակատին:

Ամբողջ 10 տարի մենք փորձեցինք հայ բոլշիւիկներին վտանգը մատնանշել և ազգայնօրէն ողջախոհ քաղաքական մի ըմբռնում ներշնչել – Հայաստանը մէկ թզաչափով իսկ չընդլայնեց, իսկ համահայկական զանգւածային ներգաղթը դարձաւ ցնորք:

Աւելի քան 10 տարի միութիւն քարոզեցինք – արտասահմանում ազգային միութեան գործը մէկ քայլով առաջ չգնաց:

Արդիւ՞նքը. կորովի աւելորդ սպառում, մտքի ահագին վատնում, սրտի մաշում, յուզում, վճճ ու պառակտումի խորացում, իսկ ամենաստակալին՝ յեղափոխական գործունէութեան տկարացում՝ արտաքին ճակատում, քաղաքական կամքի և ուշադրութեան ցրում՝ ներքին ճակատում:

Իսկ շէյթա՞նը – նա մնաց շէյթան:

Ախտաճանաչե՛նք. այդ թշուառագոյն չէակը ունի-չունի մի բորոտ հոգի ունի, որ քանի՛ քերես՝ այնքա՛ն կեռայ:

Խոստովանւենք, որ մեր դեղերը չեն ազդում, իսկ մեր ձեռքերը չաղտոտենք – նա այդքան կարեկցանքի արժանի չէ՛: Թողնե՛նք, որ ինքը քերի սեփական ոգու բորը: Ցեղորէն ոչի՛նչ կը կորցնենք, եթէ նրա եղունգներն իսպառ բթանան:

Չմոռանա՛նք, սակայն զգոյշ լինել: Նա Ս. Կարապետի աւանդական **կաղ դըը** չէ, որ պարտականութիւն է ստանձնել վանքի փոշին ու մոխիրը «թափել», այլ մեր կեանքի անագորոյն շէյթանը, որ նպատակ է դարձրել մեր վառելիանիւթը գողանալ և իր հոգու հետ՝ հայութեան գոյութեան թշնամիներին ծախել:

Դարեր առաջ Եղիշէն ողբում էր. «**Կենդանեաւ մերով տեսաք զդիակունս անձանց մերոց**»:

Ա՛հ, ո՛րքան ասելի խորն է մեր այսօրւայ վիշտը: **Մենք հայ մարդոց բարոյական դիակներն ենք տեսնում մեր թշնամիների ոտքի տակ:** Չա՛յն ենք տալիս՝ չեն սթափում, ոգեկոչո՞ւմ ենք՝ ոտքի չեն ելնում, ասո՞ւմ ենք՝ չեն լսում, լոռ՞ում ենք՝ վայրահաչում են, բարձրացնո՞ւմ ենք՝ տղմասուզում են, բռնո՞ւմ ենք՝ փախչում են, թողնո՞ւմ ենք՝ մեզ են կաչում, սիրո՞ւմ ենք՝ դառնում են վանողական, ասո՞ւմ ենք՝ մեզ անւանում են հատւածամոլ:

Ի՞նչպէս վարւենք, ի՞նչ անենք:

Նրանք քծնում են, թշնամին՝ հրճում, մենք՝ տառապում: Ի՞նչպէս հաշտուել, ի՞նչպէս լեզու գտնել, ի՞նչպէս մոռանալ, ի՞նչպէս ներել:

Մեր և նրանց միջև եղած վիհը քաղաքական համոզումների տարբերութեամբ չի պայմանաւորում, այլ հոգեբանական կառոյցի:

Հակադաշնակցականութի՛ւն – դա քաղաքական ուժ չէ, այլ միայն բարոյական կրաւորականութիւն, դա ժանիք չէ, այլ միայն լեզու, դա կերպարան չէ, այլ միայն շփոթ, դա ձև չէ, այլ միայն քառս:

Բարոյական կրաւորականութիւն, լեզու, շփոթ և քառս. ի՛նչ աներևակայելի պատիժ:

Յաճա՛խ, շա՛տ եմ մտածել այն մասին, թէ ի՞նչ թաքուն ուժով է հարատևում հայկական ցեղանենգ շէյթանականութիւնը: Վերջիվերջոյ նա մարմնա-հոգեբանական մի երևոյթ է, որով՝ չի կարող ներքին որոշ դինամիզմից գուրկ լինել:

**Ստորնութեան դինամիկա** – սրանով է կնքւում «անցեղ հայութեան» հոգեբանականը – սրանով է հայ ցեղանենգ շէյթանը պղծում մեր անցեալը, թունաւորում՝ մեր ներկան, մթազնում՝ մեր ապագան:

**Հոգեբանօրէն հակադաշնակցականը** – դա ա՛յն կախարդական մուկն է, որ դեգերում է շղթայակապ վագրի վանդակի շուրջը և իր գոյութիւնն իմաստաւորելու համար՝ խեղկատակում. «ազատութի՛ւն ես երագում - ո՛չ-տեսանես»:



**Վագրը.**– Ո՞վ է կանգնած իմ փրկութեան ճանապարհին:

**Մուկը.**– Մեծն Ռուսաստանը, նոր Թուրքիան և ես՝ հայկական մուկս:

Գեօթէի Մեֆիստոֆէլը զանազան կերպարաններ էր ստանում, մեր ցեղանենգ շէթանն էլ մերթ կապիկ է դառնում, մերթ՝ կատու, մերթ էլ՝ մուկ:

Մրանք են նրա ոգու երեք կերպարանափոխությունները:

Կայ, սակայն, հիմնական մի տարբերություն:

Մեֆիստոֆէլը, որ նաև ստեղծագործ ուժ է՝ մի տեղ ասում է.-

«Ես մի մասն եմ ա՛յն ուժի, որ մի՛շտ **չարն** է կամենում և **բարին** գործում»:

Հայկական ցեղանենգ շէթանը, սակայն, յանկերգում է.-

«Ես ամբողջությունն եմ հայ տկարութեան, որ մի՛շտ **չարն** է կամենում և **ոչինչ** գործում»

**Մի ուրական.**– Ինչո՞ւ այդպէս:

**Ցեղանենգ շէթան.**– Որովհետև իսկական գործի՝ վտանգի ժամանակ, սովորություն ունեմ մտնել մկան ծակ:

\* \* \*

Կարճ մի ողբերգություն և կարճ մի զաւեշտ, որոնք, սակայն, յստակօրէն բնութագրում են հայ ցեղանենգ շէթանականութեան **բարոյականը**, ինչպէս նաև **պատմական դերը**՝ մեր կեանքում:

Հէ՛յ, հնչակեան սակաւաթիւ ազնիւ հերոսներ և դու ինքդ՝ հնչակեան 30-ամեայ փառահեղ մարտիկ Հաջի-Նազիկ, որ 1921ի ճակատագրական Ապրիլ 2-ին ինձ հետ տառապում էիր հայրենիքի ազատութիւնը ռուսական անարգ բռնութեան դէմ պաշտպանելու և հետևեալ առաւօտ մորթւեցիր բոլշևիկեան ձեռքով և դուք հայաստանածին ռամկավար զոհեր և ինքդ՝ ռամկավար մտաւորական Նշան Յակոբեան, որ Ղամարլուի ճակատում աչքիս առաջ ստացար բոլշևիկ մահառիթ զնդակը – դուք ամենքդ բարձրացրէ՛ք ազնիւ նահատակի ձեր լուսապսակ ճակատները և տեսէ՛ք, թէ ի՞նչպէս ձեր ինկելի

յիշատակի գողերը ցեղանենգ շէյթանի պատմուճանը հազած իրենց ոգին ձեր դահիճների աղտոտ ոտքերի տակ՝ գնում են հակադաշնակցական շնականութեան ճանապարհով:

Երջանի՛կ էիք, թերևս, որ չապրեցիք և չվայելեցիք գաղութահայ դժոխքը, որում ձեր ոգու խորքին անծանօթ, բայց ձեր անունը շահագործող թշուառականները կենդանի աչօք տեսնում են իրենց հոգու դիականալը:

### **Բ. ՀԱՅ ՑԵՂԱՆԵՆԳ ՇԷՅԹԱՆԵՐԻ «ԲԱՐՈՅԱԿԱՆԸ», «ՄՏԱԾՈՒՄԸ» ԵՒ «ԳՈՐԾԸ»**

Հայ ցեղանենգ շէյթանի կենդանի տիպին առաջին անգամ հանդիպել եմ 1920 թւականի գարնան, Շիրակի Հոռոմ գիւղում: Մայիսեան ծանօթ դէպքերի օրերն էին: Ալեքսանդրապոլում գլուխ էր բարձրացրել «հայկական ջրօձականութիւնը», զօրքի մի մասը մոլորելով կոյր գործիք էր դարձել խռովարար մեծամասնականների ձեռքը: Արագածի լանջերով գնում էինք Ադէք-Պոլ (այժմ՝ Լենինական) գաւելու խռովարարները: Մտանք Հոռոմ մեծ գիւղը: Եկեղեցու բակում հաւաքւած 1000ի չափ մարդիկ լսում էին մեր ճառերը և խանդավառօրէն աղաղակում «**մա՛հ դաւաճաններին, կեցցէ՛ Միացեալ և Անկախ Հայաստանը**»: Միտինգի վերջաւորութեանը՝ մի քանի մարդիկ խնդրեցին՝ հաւաքել գիւղի տարեց ու ազդեցիկ անձերը և զիշերը լուսաբանական մի ժողով կազմել: Գիւղի քահանայի հիւրասենեակում հաւաքւել էին 50ի չափ տարիքոտ մարդիկ: Բոլշևիկ գրանենգները (պրովոկատոր) լուր էին տարածել Շիրակի գիւղերում, թէ Ադէք-Պոլում սկսւած պայքարը **ռուսահայի և տաճկահայի կռիւ է**, թէ Դաշնակցութիւնն աչառու կերպով պաշտպանում է տաճկահայերին, սովորականից և կարիքից աւելի նպաստ է տալիս նրանց և ծրագրել է Շիրակի **ռուսահայ** գիւղացիները այլուր փոխադրելով՝ գիւղերը բնակեցնել **սասունցիներով**: Հոռոմի դրացի Քարթառու գիւղի կաթոլիկ բնակիչները, զոհ գնալով զրախոսների սադրանքնե-

րին՝ զենք էին վերցրել Ադէք-Պոլ գնացող սասունցի հեծելախմբերի դէմ «**հայրենական զիւղը սասունցիական բռնագրաւումից պաշտպանելու**» նպատակով. ի՛նչ ողբերգութիւն: Ինձ վիճակած էր դառն մի պարտականութիւն – բացատրել ամենատարիքոտ, ասել է՝ ամենակասկածամիտ հոռոմցիներին, մեր համացեղային և համահայաստանեան գաղափարաբանութիւնն ու քաղաքականութիւնը: Նկարագրեցի հայրենակարօտ սասունցու և առհասարակ տաճկահայերի վիշտը, խօսեցի նրանց բուռն տենչի մասին՝ օր առաջ երկիր վերադառնալու, «մօտ է օրը, երբ մեր բանակը պիտի պատռէ թշնամու շղթան»...: Քահանան և բարեմիտ ծերունիները հառաչում էին, արտասում: Գիշերւայ ժամը 2-ն էր. կարծեցի, որ էլ թերահաւատ չմնաց. խօսքս փակեցի: Բայց ահա՛ սենեակի աղօտ մի անկիւնից բարձրացաւ կարճահասակ մի մարդ և ասաց հետևեալը.–

- «Երիտասարդ, շա՛տ լաւ ես խօսում: Լսի՛ր իմ պատմութիւնը: Երկու տարի առաջ (ակնարկում է 1918ը) թուրքը մտաւ մեր գիւղը: Ես ունէի երեք տղայ և մի աղջիկ: Փոքր տղաս և աղջիկս փախան Երևանի կողմերը, ազատեցին և հիմա վերադարձել են ու օջախս շէնացրել: Գիւղացիները գիտեն, թէ ինչ եղաւ ամուսնացած երկու տղաներիս և նրանց հարսների ճակատագիրը: Տղաներս մորթեցին աչքիս առաջ և նրանց հարսները բռնաբարելով մեռցրին՝ դարձեալ աչքիս առաջ: Հիմա վերադարձած միակ տղաս ամուսնացած է և ունի մի սիրունիկ հարս: Աղջիկս էլ խօսմ սիրուն է և հասած: Ուզում եմ, որ թուրքը կրկին գայ, եղ տղէն էլ աչքիս առաջ մորթի, հարսս ու աղջիկս աչքիս առաջ բռնաբարելով մեռցնի, միայն թէ **սասունցին չգայ ու ինձ չասի՝ «բարև՛ քեզ աղբեր ջա՛ն»:**

Պատմեց և անմիջապէս դուրս եկաւ:

Քահանան և գիւղացիներն աղաղակեցին՝ «թո՛ւ քեզ Սաքի, թո՛ւ քեզ Սաքի»:

Իմ պատանեկան երևակայութիւնը համակլեց սոսկումով: Տարիներ են անցել, մինչև այսօր չեմ մոռանում այդ զարհուրելի հրէշի կերպարանն ու խօսքը: Կարծում էի, որ նա մեր ժողովրդի մէջ հի-

ւանդագին մի բացառութիւն է, հայ ցեղանէնզ շէյթանականութեան եզակի վիժւածքը:

Յետո՞յ. յետոյ լսեցի, որ նոյն 1920 թւականի աշնան, Կարսում ուրիշ Սաքիներ մեր զինուորների ականջին շնջացել են. «ինչո՞ւ էք կռում. թուրքի հետ մենք եղբայրացել ենք, եկողը մեր եղբայրն է, մի զարկէ՛ք»: Աղեքսանդրապոլի անկման օրը հայ բոլշևիկները կազմում են 50-60 հոգինոց մի «Թափօր» և **յաղթակա՛ն հուրրաներով** դիմաւորում են Կարա-Բեքիրին: Չերկարենք բոլշևիկ-թուրք զինակցութեամբ պայմանաւորուած սոսկում պատճառող փաստերի մասին և անցնենք արտասահման:

Այստեղ՝ օր ցերեկով, հակադաշնակցական շնական արգանդի դէղին մի վիժւածքը,- սինլքոր Մարթայեան – իր հոգին քսում է դժոխքի ցեխին, ռամկավար-հնչակներից **«գիտնական»**ի տիտղոսն է ստանում և ծաղկեփնջերի հետ՝ սրանց «հայկական» սրտի աղբը տանում է Տաճկաստան և դառնում **«գիտնական-բէյ»**:

Ուր գորտ կայ – այնտեղ չի կարող ճահիճ չլինել: Ուր վիժուկ կայ – այնտեղ չի կարող հիւանդոտ օրգանիզմ կամ վատասերուած արգանդ չլինել: Մարթայեանը սնւեց, աճեց ու քաջալերւեց բուլզարահայ հակադաշնակցական միջավայրում: Հնչակեան «Պալքանեան Մամուլ» և ռամկավար «Փարոս» թերթուկները տոնական հանդիսաւորութեամբ տպեցին նրա դիւաշունչ «յօղւածները», չնայած որ դրանք ո՛չ թէ լրագրական յօղւածի, այլ **դաւաճանի զօրեղ խառնւածքով օժտուած մի անձի** սեփական ոգու ցեխի որոճանքի տպաւորութիւնն էին թողնում:

Դիցո՛ւք թէ՛ սկզբնական շրջանում հոգեկոյր տգիտութիւնը մոլորեցրեց այս թերթուկների խմբագիրներին: Բայց ինչո՞վ բացատրել նրանց լռութիւնը, երբ թուրքը Մարթայեանին **«բէյ»**ի, հայերեն՝ **«դաւաճան»**ի պատիւ շնորհեց: Ինչո՞ւ նրանք չցնցեցին. գէթ մէկ վայրկեանով չհամակուեցին զայրոյթով և օրինակ Ամերիկայի ռամկավար «Պայքար»ի պէս չայտարարեցին, որ նա «հայ կեանքէն փոխւած» մի սինլքոր է: Նրանք ո՛չ միայն չցնցեցին, չզայրացան, չսրբագրեցին

իրենց ցեղադաւ սխալը, չմաքրեցին իրենց բարոյական մեղքը, այլ շարունակեցին հպարտանալ իրենց աշխատակցի «փառքով», տարփողել նրա յաջողութիւնները՝ Թուրքիայում:

Ի՞նչ է նշանակում սա:

Սա նշանակում է, որ դաւաճան Մարթայեանն իբր հայկական ցեղանենգ շէթանականութեան ներկայացուցիչ՝ **հաւաքական տիպ է**. այսինքն՝ նա իր **հոգեկիցները, համախոհներն ու գործակիցներն** ունի այս գաղութում:

1923 թականին, Պրագայում, մի խումբ հայեր, բարոյական տկարութեան մի պահուն՝ շնորհաւորական մի հեռագիր են յղում յաղթական Մուստաֆա Քեմալին: Լուրը ռումբի պէս պայթում է դաշնակցական ուսանողութեան շրջանակներում: Մենք խզում ենք մարդկային ամէ՛ն կապ այդ թշուառականների հետ: Անցնում են տարիներ և մի օր էլ նրանց տեսնում ենք բարոյապէս փուած մեր ոտքերի տակ: Մեղայի եկան: Խոստովանեցին, որ ելոյթն արդիւնք է եղել իրենց միամտութեան և քաղաքական տգիտութեան: Եւ մենք ներեցինք նրանց:

Գաղութում ո՛չ բարոյական հակակշիռ կայ, ո՛չ բոյկոտելու ազնիւ սովորոյթ, ոչ էլ՝ շոռոմ գիւղի ծերունիների թուրք՝ Մաքիների երեսին:

Այս պատճառով էլ Մարթայեանները մնում են անպատիժ. Թումաճեան էֆէնտիները հակադաշնակցական սինքրորների կողմից որակւում են իբր «պատուաւոր ազգայիններ», հնչակ-ռամկավարները լիզում են չէկայի գործակալ Աղաբէկովի մատնանշած դաւաճան եպիսկոպոսների ներքանը: Ինչո՞ւ Ղևոնդ եպիսկոպոսն այլևս չապացուցանի, թէ կարելի է Յիսուսի խաչը կրել կրծքին և սրտում՝ աղօթել սատանային: Ա՛հ, ի՛նչ զարհուրելի շփոթ: Բողոքական պատւելիների «Հայաստանի Կոչնակ» թերթը հանդիսանում է լուսաւորչական եկեղեցու և կաթողիկոսական բարձր իրաւունքների պաշտպանութեան ախոյեանը: Եգիպտոսի ռամկավար օրգան «Արև»ը քարոզում է «ազգային միացեալ ճակատ» և պնդում է, որ դաշնակ-

ցութիւնը դաւում է ո՛չ միայն Թուրքիոյ և Խորհրդային Ռուսիոյ, այլև Սուրիոյ դէմ (յիշէ՛լ Ա. Նիկոլի գրքոյկի պատմութիւնը): Բարեգործականը Նուպարաշէն է կառուցանում դաշնակցականների ստեղծած «Արարատեան հանրապետութեան» սահմաններում և մարտնչում է դաշնակցութեան դէմ, որ շարունակում է հետապնդել ո՛չ միայն Ահարոնեանի, այլև իր իսկ՝ Պօղոս Նուպարի երազած մեծ Հայաստանի իդէալի իրականացումը: Հակադաշնակցական մամուլի ամենականատր օրգան «Պայքար»ը, որ երբեմն հայրենասիրական պոռթկումներ է ունենում, նմանում է մի գորտի, որ նեղելով ճահիճից՝ մերթընդմերթ ուտոտում է ցամաքի վրայ, կոկոում է մի երգ, յետոյ փոխում է իր հոգու ճահիճը, թրջում իր քարոզած գաղափարը և սպառւած ու շնչահեղձ՝ կրկին գլորում դէպի ճահիճը:

Հակադաշնակցականութի՛ւն. եղկելի շփոթ, զարշահոտ ճահիճ, թթելի գաղափար, թուրք-բոլշևիկեան զազրելի ոգուց ցանւած մուր, հոգևոր խաւար:

Ի՞նչ պատիժ է սա, աստւա՛ծ իմ: Ո՞ւր էք գնում եղկելի Յուդաներ:

\* \* \*

Դժուար է ճշդել, թէ որո՞նք են գաղութահայ կեանքի այսօրւա իսկական ցեղանեւզ շէթանները: Հաւանաբար, սրանք հրապարակում չերևացող լրտես-մատնիչներ են, որոնք սակայն, կարողացել են հնչակ-ռամկավար հոսանքների կեանքի լծակն իրենց ձեռքն առնել:

Այդ հոսանքների բերանը հանդիսացող մահազո-թերթերը տարիներից ի վեր լծւած են ապերախտ մի աշխատանքի:

Նրանց «քաղաքական դաւանանք»ը խտանում է հետևեալ կէտերում.-

ա) Անձնական խճրճանք:

բ) Լրտեսամիտ զրաբանութիւն:

գ) Պայքար Մայիս 28-ի գաղափարականի և հայոց ազատութիւնը խորհրդանշող եռագոյնի դէմ:

դ) Երևանի վերածնութեան տարփողում և ներգաղթի շահագործում:

ե) Սևացում Դաշնակցութեան «արկածախնդրական» անցեալի:

զ) Պայքար Միացեալ և Անկախ Հայաստանի երազի դէմ:

է) Պայքար «ռուսահայ» գործիչների և «ռուսահայ» եւութեան դէմ:

Այս ամբողջ տախտակը գծւած ու պատրաստուած է թուրք-մեծամասնական ձեռքով: Նա քաղաքական մի ծրագիր է, անշուշտ: Ինչո՞ւ՞ վ բացատրել, որ նա դարձել է հնչակ-ռամկավարների ներշնչարանը: Այդ կը պարզի, երբ մենք այդ նգուեալ տախտակի կէտերը քննութեան կառնենք:

\* \* \*

ա) **Անձնական խճճանք.**- Բոլշևիկը բարոյական անասուն է: Այստեղ նրա՝ իբր հոգեբանական տիպի՝ առաւելութիւնների և թերութիւնների գումարը: Մոփեստ է նա. չի ճանաչում բարոյական օրէնք և կարևորութիւն է տալիս եղելոյթների գործնական ելքին: Ճշմարիտ-սուտ, ճիշդ-սխալ, արդար-անիրար, բարոյական-անբարոյական – նման ըմբռումների բնեռացումից գերծ է բոլշևիկը: Բոլշևիզմ – դա մի ճիգ է ազատագրելու քրիստոնէական «երկու ոգիների» ներքին պայքարից, բարու և չարի հակամարտութիւնից, կարճ՝ իմացական և բարոյական տառապանքից: Դրա համար էլ՝ նա գնահատում է ոչ թէ խորհրդածող հանճարը, այլ գործնական տաղանդը, գործում է ոչ թէ ըստ բարոյական զգացման, այլ ըստ առարկայական շահի: Այս հոգեգծով է պայմանաւորում բոլշևիկեան քաղաքական և բարոյական մաքիավելիզմը:

Հնչակ-ռամկավարները հոգեբանօրէն բոլշևիկներ չեն: Նրանց հոգեկառոյցի հիմնական գծերը կազմում են. հայկական ստրկամտութիւնը և ներքին տկարութեան ինտուիտիւ զգացումը: Նրանց ապրում-մտածումը շաղախուած է հին, նեխած նախապաշարումների ցեխով: Լայն ճամբաների էակ է հակադաշնակցական հայը, իսկ յայտնի է, որ դժոխքի ճամբաները լայն են: Կեանքի քամիները նրաներքին տկար եւութիւնը քշում են մի գծով – նա մղում է մի ուղղութեամբ և բնեռանում մի կէտում:

Բարոյական կեանքը նախատեսում է **ներքին մղում**. հնչակ-  
ռամկավարները զուրկ են նման մղումից. նրանք քշում են արտա-  
քին ուժից, կեանքի քամուց և կանգնում են այնտեղ, ուր սրանք են  
պարտադրում:

Այդ ուժն ու քամին գալիս են բոլշևիկ-թուրքական աղբիւրից, որ-  
ով՝ հնչակ-ռամկավարների շարժումները մեր դէմ՝ կրում են **բարո-  
յապէս անազատ մարդոց ընդվզման նկարագիր**: Բարոյապէս ան-  
ազատը չի **քնեռանում** իբր բարոյական անասուն, այլ **քնեռացում է**  
իբր բարոյական հրէշ: Ըստ որում՝ հնչակ-ռամկավարները, եթէ  
գիտակցում են իրենց արարքի իմաստը, **ցեղանենգ չարագործներ**  
են, եթէ չեն գիտակցում՝ **կոյր գործիքներ** են:

Թէ՛ ինքնագիտակ չարագործը, թէ՛ կոյր գործիքը բարոյապէս  
անազատ են, որովհետև իմացապէս տգէտ են, և իմացապէս տգէտ  
են, որովհետև բարոյապէս ազատ չեն: Մարդկային ճշմարիտ գիտ-  
ութիւնը յենում է բարոյական ազատութեան սկզբունքին: Այս ճշ-  
մարտութիւնը չեն հասկանում միայն բռնակալները և ստրուկները,  
որոնք թէ՛ յաջողութեան թէ՛ ձախողանքի մէջ՝ զուրկ են մնում **սրտի  
մշակոյթից**:

Չոգով ստրուկը և խառնւածքով գռեհիկը – ճշմարիտ տգէտը –  
իբր հասարակական էակ ցուցադրում է երկու գիծ.-

1. Ընդհանրական նշանակութիւն ունեցող երևոյթների և գաղա-  
փարների **անձնականացում**՝ իբր մտածման բովանդակութիւն:

2. Հայեոյանքն՝ իբր դաստիարակութեան և խեղկատակութիւնն՝  
իբր գործունէութեան մեթոդ:

Մեր ընկերները ջղայնանում են, որ հնչակ-ռամկավար «Պալք-  
անեան Մամուլ» և «Փարոս» թերթերի բովանդակութիւնն ու մեթոդը  
ծառայում են այդ գծին. օրինակ, թութակելով բոլշևիկներին՝ այդ  
թերթուկները հայ յեղափոխական լայնածաւալ, երկարատև ու սրտ-  
աճմլիկ շարժումը համարում են մի քանի անձերի գործ և ձգտում են  
իբր թէ վարկաբեկել այդ անձերից ոմանց: Պետք չէ՛ ջղայնանալ, այլ  
միայն հասկանալ:



Մեր ընկերներին այդ թերթերի բովանդակութեան և մեթոդի սնանկութիւնը բացատրելու համար՝ տա՛նք մի քանի օրինակներ:

1)Մեր ցեղի յաւիտենականութեան դուռը բախած Ահարոնեանը, որի ստեղծագործութիւնը քանակով գերակշռում է բոլոր հնչակ-ռամկավար գրիչների արտադրանքը և որակով մնում է անհաշուելի-օրէն բարձր՝ «Փարոս» թերթում «անարգում է» մի խեղճ տղայից: Ինչո՞ւ. որովհետև Երևանում սուկում են Ահարոնեանի ոգու ուրա-կանից. ամեն օր բոլշևիկներն իրենց ագռաւի կտուցը թաթախում են ցեխի մէջ, աղոտում իրենց թերթերը ... և կարծում են, որ Ահարոն-եանը յաղթահարւեց: Չոպանեանը Երևանին հաճոյանալու համար իւրացնում է այս սովորութիւնը և անմեղ տղաները հետևում են նրան: Ո՞վ է մեղաւորը. Երևա՞նը, Չոպանեա՞նը, Ֆիլիպէի տղա՞ն – ո՛չ, մեր ճակատագիրը:

Զգտել այդ ճակատագրի յեղափոխումին – նշանակում է ո՛չ միայն զգուել Երևանի յիմարութիւններից և Չոպանեանի խորշումած ոգուց, այլև կարեկցել ֆիլիպէցի տղային: Նա մեր ճակատագրի զոհն է. դառն ճակատագիր, որ գրկել է նրան Ահարոնեանը կարդա-լու և հայ ցեղայնութեամբ հաղորդւելու կարելիութիւնից:

2)«Պալքանեան Մամուլ» և «Փարոս» թերթուկները, որոնք գաղու-թահայ տկարութեանց ճիւղացման ճշմարիտ վկայագրեր են՝ հայ ռազմական կորովի ներկայացուցիչներից Գ. Նժդեհի **այսօրը** սևաց-նելու համար՝ կտցահարում են նրա հերոսական անցեալը չակերտ-ելով **զօրավար** և **սպարապետ** բառերը: Զօրավարութիւնը աստիճան է, սպարապետութիւնը՝ պաշտօն: Պատմականօրէն նշանակալից մի վայրկեանում, հերոսական Սիւնիքի Խորհուրդը, կառավարութիւնը և զինուորականութիւնը Գ. Նժդեհին տալիս են **զօրավարի** աստիճան և **սպարապետի** պաշտօն: Նժդեհը այսօր էլ զօրավար է, որովհետև **աստիճանը** մնայուն է: Սակայն, այլևս նա սպարապետ չէ, որովհե-տև այդ **պաշտօնը** հիմա չի վարում: Այն օրը, սակայն, երբ այդ ակա-նաւոր յեղափոխական-զինուորականի ուրականից սարսափով փախչում էին թաթար և օսմանցի թուրք հորդաները, բոլշևիկեան

«կարմրադոշ» զորամասերը, որոնք բոլորը Ձանգեզուրում դառնում էին նապաստակ՝ Նժդեհը ո՛չ միայն զորավար էր, այլև սպարապետ: Նժդեհի ղեկավարած Ձանգեզուրը երկինք բարձրացրեց թաթարական 200 զիւղերի ծուխը, գլխովին ջարդեց ռուսական 11-րդ բանակի զորամասերը, Նուրի փաշայի «ասկեարները» և պարտադրեց իր կամքը – **դառնալ Հայաստանի անբաժան մասը**: Կոստանաբոլի Նժդեհի մեծ կուսակցութեան փառքի ծիրանին՝ հակադաշնակցականները մատնում են ո՛չ միայն իրենց հայրենանենգ ոգին և տգիտութիւնը՝ պատմական անցքերի մասին, այլև իրենց թգուկային նախանձը – կատուի նախանձը՝ առիւծի հանդէպ: Հակադաշնակցականը, սակայն, մի կատու է, որ չի կարող մուկ իսկ բռնել, նա չի ըմբռնում, թէ ի՞նչ է նշանակում **թաթարական 200 զիւղերի կործանումը, ռուսական 11-րդ բանակի պարտութիւնը, Նուրի փաշայի ասկեարների ջարդը և Ձանգեզուրի կցումը Հայաստանին**: Կատուից բանականութի՞ւն ենք սպասում, պատմագիտական ըմբռնո՞ւմ:

Կատուգի այդ մարդիկ այս բոլորից ոչինչ են հասկանում, որովհետև մեր ողբերգական հայրենապաշտութեան փոխարէն՝ նրանք համակրած են ցեղորացի մանրագործ քսութեամբ: Հակադաշնակցականը զուրկ է ո՛չ միայն **զորավարներ**, այլև **հասարակ զինուորներ** ունենալու փառքից: Անծիր խաւարն է իշխում նրա ոգում և նա բնագոյաբար սուերներ է փնտռում մեր պատմութեան լուսատու էջերում: Հայ զորավարնե՞ր, հայկական բանա՞կ, Սիւնեաց հերոսամա՞րտ, թուրք-թաթար-բոլշևիկ զինակցութեան զիջո՞ւմ, թշնամու պարտութի՞ւն, Դաշնակցութեան ճիգերով ստեղծւած հայրենի՞ք: Ահ՛, անտանելի, աներևակայելի է այդ բոլորը նրանց համար, որոնք մեր ցեղի մէջ միայն նսեմականն են տեսնում, որոնք սոսկում են նոր ցեղաշարժի հաւանականութիւնից, հայկական նոր բանակի, դաշնակցական նոր զորավարների, ընդլայնւած ազատ և մեծ Հայաստանի պատկերից:

Ի՞նչ անել, որ այդ բոլորը այլևս չգան – հաւատարմութիւն մլաւել մեծ Հայաստանի գաղափարի թշնամիներին, սևացնել նրա գաղափարակիրների անցեալը, ծաղրել հայ ցեղի մարտական փառքը:

Տկարի խեղկատակո՛ւմը, նրա ծաղրա՛նքը – ինչն է աշխարհում  
աւելի զգւելի քան՝ սա, որքան էլ՝ նա ասուածային մի պատուհաս է:

Ի՛նչ էլ լինի – այս աշխարհի արարիչը անկատար մի էակ է: Հա-  
կադրասէր ոգի ունի նա. անգամ՝ սատանային իրաւունք է տւել  
ծաղրելու իր իսկ գործը:

Ինչո՞ւ հնչակ-ռամկավարն իրաւունք չունենան ծաղրելու մեր  
հերոսականը, երբ աշխարհում յիմարութիւնն աւելի՛ է աժան, քան  
խոհականութիւնը, երբ քամի փչելն աւելի՛ է դիրին, քան հերոսա-  
կանի ողբերգութիւնն ապրելը, երբ խեղկատակորէն կտցահարելն  
աւելի՛ նպատակայարմար է, քան տառապելով քննադատելը, երբ  
կատուորէն ցատկոտելն աւելի՛ շահաբեր է, քան առիծօրէն վտանգ-  
ների հետ խաղալը, երբ ունայնաբանելն աւելի՛ հաճելի է, քան  
ճանօրէն մտածելն:

Գէթէն ասում է. «Դու նման ես ա՛յն ոգուն, որին՝ ըմբռնում ես»:

Կատուն՝ կատու է և յախտենօրէն նման՝ իր ոգու պատկերին:

Նա չանգրում է մեր պատմութեան մագաղաթը և չի հասկանում  
հայ յեղափոխութեան ողբերգական հերոսականի իմաստը:

Ի՛նչ անենք. ողբա՛նք, թէ՞ ծիծաղենք:

Կարծում եմ՝ ծիծաղե՛նք:

3)«Աքլորը Քարոզիչ» – ամբողջ մի իմաստութիւն կայ այս բառերի  
մէջ: Քարոզիչ քլորը սիմբոլն է տգիտութեան և ամբարտաւանու-  
թեան: Այո՛, կեանքում շա՛տ խայտառակութիւններ կը պատահեն,  
եթէ քլորն է իմաստութեան և ճշմարտութեան քարոզիչը: Հայ  
կեանքի յետամնացութեան և հայ իրականութեան խայտառակու-  
թիւնների հիմնական պատճառներից մէկն էլ ա՛յն է, որ գոյութիւն  
չունի իմացական և բարոյական վերահսկողութիւն: Ամե՛ն իմաս-  
տակ, որ գրիչ է շարժում – կարող է «խմբագիր» դառնալ, հոգևոր  
ամե՛ն թշուառական, որ լաւ հայիոյել գիտէ – արդէն լաւ «խմբագիր»  
է, ամեն հայիոյաբան, որ ընթերցող է գտնում – կարծում է, որ ինքը  
բարձր մտաւորական է: Ամե՛ն տգէտ, որ օգտագործելով թայֆայա-  
կան հակամարտութիւններ՝ դպրոց է մտնում – կարծում է, որ ինքը

որակեալ ուսուցիչ է: Այս պայմաններում դժար է չարն ու բարին միմեանցից զանազանել:

Սոֆիայում կայ հայկական աղքատիկ մի նախակրթարան, որում՝ իբր վարժապետ ծառայում է մի թերուս, որ կոչւում է Յ. Պօղոսեան:

Սոֆիայում մարդկային ոգու ամենամուտ անկիւններից խաւարավիժում է հնչակեան մի շարաթաթերթուկ, որի խմբագիրը նոյն վարժապետն է:

Այս «վարժապետ-խմբագիր»ը նշանաւոր է նրանով, որ իր հոգեմարմնական կազմով նմանում է փոքրիկ, դատարկ մի տակառի, որ քշելով բոլշևիկեան քամուց՝ գլորւում է **«հնչակեան գաղափարական պատնէշ»** տիտղոսով ծանօթ փոշոտ ճամբին և երբ քարի է բախւում՝ հանում է աղէխարշ մի աղմուկ: Մեր հնչակեան հայրենակիցներն այս յիմարական աղմուկն ընդունում են իբր իրենց մշտարթուն աքլորի կանչը: Այս աքլորի համար չկայ հայ պետական-հասարակական գործիչ Սիմոն Վրացեան, այլ կայ ոմն «թզուկ Սիմոնիկ»:

Մարմնով՝ Սիմոն Վրացեանը պատկանում է «բարձրահասակներ»ի կարգին, նրան «թզուկ» անւանող Յ. Պօղոսեանը՝ «կարճահասակներ»ի, աւելի՛ ճիշդը՝ նսեմահասակների: Երեսուն տարւայ հասարակական գործիչ, Հ.Յ.Դ. Բիւրօի անդամ, անդրկովկասեան Սեյմի և Հայաստանի պարլամենտի անդամ, գիւղատնտեսական նախարար, Հայաստանի վարչապետ, Թիֆլիսի «Հորիզոն» և Երևանի «Յառաջ» հսկայածաւալ և համահայկական նշանակութիւն ունեցող օրաթերթերի խմբագիր, համահայկական արժէք ունեցող հսկայահատոր երկերի հեղինակ և այլն, և այլն Սիմոն Վրացեանի անունը ծանօթ է աշխարհի բոլոր հայերին, Անդրկովասի վրացի, ռուս, թաթար զանգւածներին, եւրոպական և համառուսական պետական և հասարակական գործիչներին – առնւազն միլիոնաւոր մարդոց: Յ. Պօղոսեանն այն էլ՝ իբր ոչնչաբան, ունայնագործ և խառնակիչ ծանօթ է Բուլգարիոյ հայ համայնքին – առառաւելն մի քանի հազար մարդոց:

Եւ այնուամենայնիւ Սիմոն Վրացեանը «թզուկ» է:

Ակամայից յիշում եմ գերմանական մի հանդիսում մի քանի տարի առաջ տեսածս մի պատկերը:

Ովկիանոսի վրայ ընթանում է բրիտանական ահռելի մի գրահանաւ (անգլիական ծովային ուժի սիմբոլը), նրա ցռուկից կախւած է մի տակառ (ռուսական ծովային ուժի սիմբոլը): Տակառն աղէխարշօրէն երերում է գրահանաւի յարուցած ալիքների վրայ: Տակառի մէջ նստած են մի քանի ռուս-բոլշևիկ մարդիկ: Վերահաս խորտակումի սուկումը աչքերի մէջ՝ նրանք մէկ ձեռքով բռնել են տակառի եզրերը, միւսով՝ մի մուրճ և մանգաղ, բացել են երախները և բղաւում են գրահանաւին. «թզո՛ւկ, մենք կը խորտակենք քեզ»: Վերևից նայում են անգլիական նաւագները և ծիծաղում:

Իսկ մենք ի՞նչ անենք, երբ Յարութին Պօղոսեանը նստած հնչակեան տակառում՝ նայում է Դաշնակցութեան գրահանաւին և ասում. «Միմոնի՛կ, թզո՛ւկ, քեզ կը խորտակեն»:

Ջղայնանա՞նք, թե՞ ծիծաղենք:

Կարծում եմ՝ ծիծաղե՛նք:

4) Ծուռ խղճմտանքն ու բարոյական տկարութիւնն ազդում են ենթակայի «**առարկայական տեսաւորութեան**» վրայ: Բարոյապէս անողնաշար էակը իմացական պատեհապաշտ է: Այդպիսին գուրկ է փաստը՝ իբր փաստ ըմբռնելու ընդունակութիւնից: Նա այն փերեզակն է, որ սովորութիւն չունի իր կշիռքի նժարը հաւասարութեան կէտին պահել: Իր փչացած ապրանքը վաճառելիս՝ նա սպառում է երդումների շարքը և ծախելուց յետոյ մենախօսում. «**աս ալ կլլեցուցինք**»:

Ո՛րքան հեռու է արևն երկնակենտրոնից – ա՛յնքան երկար է լինում մարմինների սուերը:

Ո՛րքան խորթ է մարդս ճշմարիտ գիտութեան – ա՛յնքան անճոռնի է նրա լեզւի սնախօսութիւնը:

Տգիտութեան պոչը մի՛շտ էլ երկար է:

Երկար լեզուապոչով են «քաղաքաբանում» հնչակ-ռամկավարները: Իսկ ի՞նչ է նրանց քաղաքաբանութեան հիմքը – անմիտ շաղակրատութիւն, քծնանք՝ ցեղի թշնամիների առաջ. մեծամեծ տիտղոս-

ների շոայլանք՝ իրենց ոչնչութիւններին և ուրացում՝ հակառակորդի իրական արժէքների:

Ո՛րքան փոքր է մարդու ոգին – ա՛յնքան մեծ է երևում ինքն՝ իր աչքում:

Ո՛րքան փոքր է մարդու ոգին – ա՛յնքան աննշան է երևում դիմացինն՝ իր աչքում:

Ո՛րքան ստրկամիտ է մարդս – ա՛յնքան ահարկու է երևում «իշխանատր»ը՝ նրա աչքում:

Ճնճղուկի աչքին ագռաւը թւում է ահարկու մի հսկայ: Մկան կարծիքով չկա՛յ անելի զարհուրելի գազան, քան՝ կատուն: Ճնճղուկը, սակայն, չի պատկառում առիծից, մուկը գաղափար չունի վագրի ահարկութեան մասին:

Կաթողիկոսական «ընտրութեան» առիթով Հայաստան գնացող և Ձորագետի հանդէսն «ըմբռնող» Չօպանեանի աչքին՝ գծուծամարմին Ադասի Խանձեանը թւացել է «յաղթանդամ զինուորականի պէս» մի հսկայ:

Ահարոնեանի հանճարը հայհոյող ճնճղուկամիտ յիմարները հնչակ-ռամկավար թերթերում որակւում են՝ իբր «գրչի մշակներ»:

Դաշնակցական հսկայ մամուլի օրգանները, մեր ամսագրերը և ամեն տարի լոյս տեսնող բազմաթիւ գրքերը «թզուկային» աշխատանքի «թզուկ»-պտուղներն են:

Տեսնո՞ւմ էք ծուռ խղճմտանքն ի՛նչպէս է յիմարացնում մարդուն:

Դաշնակցական մամուլի օրգանները (ինչպէս «Յուսաբեր»ը), ամսագրերը (ինչպէս «Հայրենիք» ամսագիրը) թզուկային թերթուկներ են, որովհետև հսկայածաւալ են: Դաշնակցականները «գրչի մշակներ» չեն, որովհետև ամեն տարի բազմաթիւ գրքեր են հրատարակում: Որով՝ հնչակ-ռամկավարները «գրչի մշակներ» են և «ստեղծագործներ», որովհետև լուրջ թերթ, ամսագիր հրատարակել և գիրք գրել չգիտեն:

Գի՞րք – դա ոչինչ բան է: Ծաւալով մեծ և բովանդակութեամբ խոր ամսագի՞ր, օրաթե՞րթ – դրանք թերթուկներ են, «բազմեջ» են, «քառեջ» են:

Թո՛ղ այդպես լինի:

Ակամայից յիշում եմ մի դէպք: Ռուսական «Մահմանադիր Ժողով»ի ընտրութեան օրերին (1917թ. աշնան) Աբարանի շրջանի Ալիքուչակ գիւղում, Մացակ անունով ամբարտաւան մի գեղջուկ հանդիպեց ինձ և անմիջապէս հարց տւեց.

- Ի՞նչպէս են տրեխներս:
- Լա՛ւ են:
- Իմ տրեխնե՞րն են լավ, թե՞ քաղաքացիների կօշիկները:
- Քո՛ տրեխները:
- Իմ տրեխներն ամբողջ Երևան քաղաքի հետ չե՛մ փոխում:
- Մի՛ փոխիր, սիրելի՛ս, մի՛ փոխիր:

Իր էութեան հոգևոր աղբը դրսևորող այս յիմարութիւնը Մացակը փորձեց ներկայացնել իբր զւարճացուցիչ խեղկատակութիւն, իբր անմեղ սրամտութիւն: Ջգացի, որ նա ծուռ խղճմտանքով մի մարդ է: Իր դիմագծութիւնն արդէն վկայում էր, որ նա վատ տեսակի մի կասկածամիտ է: Ուզեցի, որ շարունակի բացել. ինքը, սակայն, լռեց: Խօսք առին գիւղացիները: Պարզվեց, որ նա ոչ միայն Ալիքուչակ գիւղի, այլև ամբողջ Աբարանի շրջանի **միակ հնչակեանն է**: Եւ իրօք, Աբարանը Հ. Յ. Դաշնակցութեան տւեց 14 հազար և մի քանի հարիւր ձայն. մէկ մարդ միայն չմտեցաւ քւէատուփին և այդ մարդն Մացակն էր: Ինչու: 1905-ին Մացակը մեղադրւել է լրտես-դաւաճանի ծանր յանցանքի մէջ: Արսէն աղան (Բաֆֆիի «Խենթը» վէպի հերոս Խենթի՝ Սամսոն աղայի տղան) մուր է քսում Մացակի երեսին, պտտցնում գիւղերը՝ նրան թքամեռ անելու: Նրա երեսին թքում են Աբարանի բոլոր գիւղացիները, 2 օր էլ նա ցուցադրում է Աշտարակի փողոցներում, թքում են անվերջ, բայց Մացակը չի մեռնում: Հակադաշնակցականի կենսունակութեան գաղտնիքը նրանում է, որ նա թքամեռ չի լինում:

Պատմութիւնը մուր է քսել գաղութահայ Մացակների երեսին. ուզես՝ թքի՛ր – նրանք թքամեռ չեն լինի, ուզես՝ ոգեկոչի՛ր – նրանք քո դատին չեն ձայնակցի, ուզես՝ իմացաբանի՛ր – նրանք իրենց «բնական տեսաւորութիւն»ից չեն հրաժարւի: Հակադաշնակցակա՛ն –

դրան ասում են Նորին Անմեռ Դաւաճան Մացակ: Տառապի՛ր հայրենիքի համար, մարտնչի՛ր, զոհի՛ր, նահատակի՛ր որքան կուզես – Մացակն իր «տրեխներն ամբողջ Երևան քաղաքի հետ չի փոխի»...

5) Բոլշևիկ անասունն իր դունչը ներկեց մարդկային արիւնով և դարձաւ «**յեղափոխական գագան**»: Արտասահմանի հակադաշնակցականներն իրենց կտուցը գունաւորել են կնոջական շրթներին յատուկ ներկով և ուզում են, շա՛տ են ուզում մեզ վրայ թողնել «**արիւնկզակ յեղափոխական**»ի տպաւորութիւն: Հնչակները խօսում են ինչ որ «պատնէշ»ի մասին, ռամկավարները յոխորտում են իրենց «քաղաքացիական անվախութեամբ»: Մակայն՝ ո՛ւր միայն հոգևոր աղբ կայ, այլ երբե՛ք ստեղծագործ տեմպերամենտ – ա՛յնտեղ սկսւում է գարշելի վայրհաշտութիւնը, խօսքի սաղիզմը: Մաղիստը հոգեախտաւոր ա՛յն տիպն է, որ սեռական հաճոյք ստանալու համար՝ խոշտանգաբար տանջում է իր զոհը: Կենդանիներից՝ բորենին նեխած դիակներ է ուտում, գերեզմաններ կողոպտում: Բորենին գերեզմանապիղծ մի կենդանի է, դիակի գող:

Թե՛ սաղիստ մարդը թե՛ բորենին վախկոտութեան տիպարներ են: Դրանց բարոյական ճիւղաւորութիւնը պայմանաւորում է հոգևոր անարիութեամբ: Անարի էակը միշտ էլ գարշագործ է: Նրա գործունէութիւնը դա վրէժխնդրութիւնն է վատշւէր տկարի:

Թուրքը, օրինա՛կ, բորենու բնագողով օծուած սաղիստ մի էակ է: Նա ո՛չ թէ սիրում է, այլ պղծում, ո՛չ թէ կարեկցում է, այլ խոշտանգում, ո՛չ թէ ստեղծագործում է, այլ կործանում, ո՛չ թէ մարտնչում է, այլ ջարդում, ո՛չ թէ պաշտում է, այլ սրբապղծում, ո՛չ թէ մշակում է, այլ խոպանացնում, ո՛չ թէ արդիւնաբերում է, այլ կողոպտում: Իբր ժառանգական սաղիստ՝ նա իր զոհը խոշտանգում ու պղծում է ո՛չ միայն սպանելուց առաջ, այլև մեռցնելուց յետոյ: Նա ո՛չ միայն ողջապիղծ է, այլև դիապիղծ:

Ծանօթ է, որ սեռամոլութիւնն ու սննդառական ազահութիւնը (իբր պղծումի և կողոպտուտի տենչանք) հանդիսանում են օսմանցիների կեանքի պատմա-քաղաքական հոլովոյթը պայմանաւորող ամենահիմնական ազդակները:



Թուրքը վախկոտ է, բայց անգութ. նա նախապաշարած է, բայց լպիրշ, նա ամաչկոտ է, բայց սեռակենտրոն:

Բոլոր սաղիստները սեռակենտրոն էակներ են, բոլոր սեռամուկներն, ի վերջոյ, սաղիստներ են:

Սաղիստը նաև սեռախտամիտ հայիոյաբան է. անշունչ առարկաներու վերացական գաղափարներն անգամ, նա պատկերում է իբր հեշտանքի առարկաներ ու նրանց շոայլում՝ անճոռնիօրէն սեռիմաստ հայիոյանքներ: Թուրքերէն հայիոյանքների անսպառ մթերանոցը, անգամ, առարկաներու առածները կարող են ահագին նիւթ մատակարարել՝ սաղիստ մարդու հոգե-ախտաբանութիւնն ուսումնասիրողներին:

Թուրքը զազրախօս է:

Բոլոր զազրախօսները հոգով այլասերած, անգոր սաղիստներ են. բոլոր սաղիստները, ի վերջ զազրախօսներ են:

Զազրախօսութիւնն անգոր սաղականութեան հոգևոր ատումատիան է:

\* \* \*

Զազրախօս է նաև հոգեբանօրէն հակադաշնակցական «հայ» տիպը: Դա ա՛յն սինլքորն է, որ իր բարոյական աղքատութիւնն ու մտքի թշւառութիւնը սքողելու համար՝ իր ներքին տկարութիւնը վերածում է խօսքի ատումատիայի: Դա ա՛յն սրիկան է, որ Եկեղեցում դիմակաւորում է իբր երկիւղած կրօնասէր, աղօթում է ջերմեռանդօրէն, հանդիսանում է «ազգային դաւանութեան» պաշտպանութեան ակոյանը, որ սակայն, Յիսուսը պատկերում է ո՛չ թէ իբր տառապաշտ, իդէալիստ մարգարէ, այլ իբր սամարացի կնոջ, Մարիամ Մագթադինացու հետ սիրաբանող անձ:

Դաշնակցութեան դէմ «գաղափարական» պայքար մղելիս՝ հակադաշնակցականը տուրք տալով իր էութեան՝ զազրախօսում է. «դաշնակցական այսինչ շէֆը հանրակառքի մէջ կասկածելի կերպով բարևած է անձանօթ տիկնոջ հետ, այնինչը՝ կապ ունի իր ազգականուհու հետ, մէկ ուրիշը՝ աչք ունի իր ընկերոջ կնոջ վրայ, դաշ-

նակացական կիները «շնորհներ» կընեն օտար նախարարներուն, ուսուցիչները «ազատ սէր կը քարոզեն» են, են, են... Էութեամբ անբարոյական մտքի վիժածքներ:

Կուսակցական այս բանդագուշանքները համարուում են «գաղափարական պայքար»ի զենքեր:

Հակադաշնակացական «հանրային գործիչներ» և «խմբագիրներ» կան, որոնք իրենց դիրքն ապահովում են ոչ թէ **մտածելու** ընդունակութեամբ, այլ **հայեցողու, զրաբանելու** սրամտութեամբ: Կարդալով նրանց ոգու փսխոցը՝ մարդ մղում է ընդունել, որ նրանց ուղեղներն ո՛չ թէ մտածման կենտրոններ են, այլ սեռական մշտաբորբոք գործարաններ:

Խղճահարւէ՞լ, ամաչէ՞լ, զզւէ՞լ, ի՞նչ անել. ասուա՜ծ իմ:

Անգօր սաղականութեան հոգևոր այս աստոմատիային միանում է նաև բորենիական էութեան գիծը:

Ո՞ր դաշնակցականը սրբազան սարսուռով չի համակլի հնչակեան հին մի նահատակի ուրականի առաջ:

Իսկ ի՞նչ են անում հնչակ-ռամկավարները – նրանք հայեցողում Օեն ո՛չ միայն մեր կենդանի գործիչներին, այլև մեր տեսական գաղափարաբանութեան և աներևակայելին ... անգամ՝ մեր նահատակներին:

Ա՜հ, ոգու ի՞նչ զարհուրելի անկում:

Ա՜հ,թրքոզի սաղիստներ, ինչո՞ւ հոգով ու սրտով այսպէս մեռաք. ինչո՞ւ մտածումով ու բարոյականով այսպէս վատասերւեցիք. ինչո՞ւ, ինչո՞ւ:

Եւ սակայն անկումը շարունակուում է. ռամկավար «Փարոս» թերթուկի խմբագիրը, օրինակ, ճգնում է ամեն կերպ հաւասարել ախտաւոր չէակ Մարթայեանին: Հնչակ «Պալք. Մամուլ»ը չի ուզում ետ մնալ «Փարոս»ից: Խճբճում, կտցահարում, զրաբանում են անվերջ. հայեցողում են անգամ **Շուագոյն Դրօշակին**՝ նրա հասցէին ուղղելով «հայվան», «Էշակ» բառերը և այդպիսով էլ գլորում են ցած: Իջէ՛ք, իջէ՛ք մինչև գարշանքի դժոխքը, ուր մի օր ձեր սեփական ականջներով պիտի լսէք յաւիտենօրէն եղկելի ձեր ճակատագրի դատավճիռը:

Ասում են, որ դժոխքից վտարածները կրկին դժոխք մտնելու համար՝ այս աշխարհում նորանոր քսութիւններ պիտի անեն:

Ճի՛շդ են ասում:

բ) **Լրտեսամիտ զրաբանութիւն.**– Մուքօ անունով մի մարդ էր ապրում իմ հայրենի գիւղում: Մի գիշեր նա սողոսկում է մենակեաց Ղազէի խրճիթից ներս և ձեռքը տանում նրա բարձի տակ, ուր կոյր ծերունին պահում էր իր համեստ գանձը: Ղազէն արթնանում է և բռնում գողի դաստակը: Վերջինս՝ մի ճիգով ազատում է և փախչում առանց իր ինքնութիւնը մատնելու: Առաւօտ՝ Ղազէն պատմում է գիշերւայ պատահարը: Ազնիւ և յարգւած մարդ էր կոյր Ղազէն – գիւղական մի իմաստուն: Ո՞ր հայը կը յանդգնէր վատութիւն անել նրան: Գիւղացիները համոզւած են, որ գողը հարկան քիւրդ գիւղերի ծանօթ աւազակներից մէկն ու մէկն է:

- Մեր գիւղում նման անզգամ մարդ չի լինի. գողը մուրատխանցի քիւրդ Ալօն է, պէտք է նրան արժանի դաս տալ, եզրափակում է գիւղապետ Տօնօն:

- Գողը հայ է և մեր գիւղացի, ասում է Մուքօն, պէտք է գտնել այդ անարգ հրէշը: Ի՞նչ՝ էլ մարդ չմնա՞ց աշխարհում, որ աղքատ և բարի Ղազէի՞ն կողոպտեն. անխիղճնե՛ր, գազաննե՛ր, անպիտաննե՛ր: Պէտք է գտնել գողը և մուր քսել երեսին. նա հայ չէ՛, նա դրացի չէ՛, նա թուրքի հոգի ունի: Միրելի Ղազէ, իսօմ չվախեցա՞ր, վա՛խ, վա՛խ, վա՛խ, Ղազէ ջա՛ն, Ղազէ ջա՛ն: Երանի՛ թէ Աստուած էդ վայրկեանին ինձ քո երդիկից վար իջեցնէր. ես գիտէի, թէ էդ սրիկային ինչպէս կը պատժէի, դրացի չէ՛, աչքիս լոյսն էլ եթէ լինէր՝ նրան գետինը կը փռէի:

- Մուքօ ջա՛ն, ձեռքդ ինձ տո՛ւր, ասաց Ղազէն: Կոյր իմաստունը շօշափեց նրա դաստակը և հանդիսաւոր խաղաղութեամբ յայտարարեց:

- Գիւղացինե՛ր, Աստուած վկայ, այս էր բարձիս տակը խուզարկող ձեռքը:

Մուքօն մատնեց իր շարլաթանական ճառի ջնորհիւ:

Գաղութահայ հակադաշնակցական շարքերում անթիւ են Մուքօները, բայց չկան հոգեբան Ղազէներ: Այստեղ՝ Մուքօները շաղակրատում են, Ղազէները ծափ զարկում: Ինչո՞ւ. որովհետև այստեղի Ղազէներն ո՛չ թէ աչքով են կոյր, այլ հոգով: Եղիշէն ի գուր չէ գրել իր իմաստալից խօսքը. «Կոյր զրկի ի ճառագայթիցն արեգական, տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց: Լա՛ւ է կոյր աչօք, քան կոյր՝ մտօք»:

Մտակոյր հակադաշնակցականը հաւատում է հակադաշնակցական գրանէնզ շաղակրատին. վերջինս էլ օգուելով առաջինի խորին տգիտութիւնից, օր ըստ օրէ մշակում է հոգևոր ճիւղաբան արւեստը:

Ո՞ւր ենք գնում:

Քրիստոնէական բարոյականը չի հանդուրժում մատնիչ-լրտեսի գոյութիւնը: Նա դարերի անէծքով է կնքել Յուդայի անունը: Մակայն, Յուդան իբր գարշագործ էակ՝ նսեմանում է հակադաշնակցական գրաբանի նկատմամբ:

Յուդան 30 արծաթ ստացաւ, մատնեց, բայց յետոյ զղջաց և համակւեց ինքնաժխտողական յոռետեսութեամբ:

Հակադաշնակցականը մատնում է նաև առանց արծաթի, զղջալ չգիտէ և գրախօսական շաղակրատութիւնը համարում է քաղաքական իմաստութիւն:

Յուդայի ոգին չարի և բարու մի ռազմադաշտ է. հակադաշնակցականի ոգին՝ սոսկ չարութեան շտեմարան: Նա բեկբեկուող էակ է, սա՛ տևական չարագործ: Նրա մատնութիւնն արդիւնք է բարոյական սայթաքումի, սրա գրանէնգութիւնը՝ օրգանական պահանջ է: Նա ընդունակ է խոստովանւելու. «ես մատնեցի», սա պնդում է՝ մատնւածը «մատնեց»:

Անթիւ են փաստերը, բայց մենք պիտի բաւարարվենք մի ընդհանրացումով:

Թուրքը ջարդեց հայերին և աշխարհում լուր տարածեց, թէ հայկական նախճիրները արդիւնք էին հայ յեղափոխականների գործու-

նելութեան: Հակադաշնակցական հայն ո՛չ միայն միացաւ թուրքի տեսակետին, այլև մէկ քայլով էլ առաջ գնալով պնդեց. **«Դաշնակցութիւնը կոտորել տուեց հայերին»:**

Ռուս բոլշևիկը միացաւ Թուրքին. տրոհեց ու նսեմացրեց, սեղմեց ու խեղդեց Հայաստանը և անվերջ քարոզեց, թէ դաշնակցութիւնը թշնամի է Հայաստանին:

Հակադաշնակցական հայը հոգեկցելով բոլշևիկին՝ հրապարակ նետուեց և սկսեց աղաղակել՝ **«Դաշնակցութիւնը կործանեց Հայաստանը»:**

Բոլշևիկների և թուրքերի դրդումով և նրանց հաճելի լինելու քսումատնութեամբ՝ հակադաշնակցական հայը մտաւ բոլոր երկիրների ոստիկանատունները. հայկական եռագոյնը ներկայացրեց իբր արիւնահեղութեան մի խորհրդանշան, հայկական դատը՝ փակւած, դրօշակը՝ «կերպասի մի ծւեն», նրա ծածանումը տեղական դրօշների կողքին՝ մի վիրաւորանք տուեալ երկրի քաղաքական պատւին, Դաշնակցութեան վերագրեց հակապետական մի կազմակերպութեան յանցանք, մատնեց նրան՝ իբր նոր կոիւներ, վրէժխնդրական ակտեր ծրագրող, հայ ժողովրդի և տուեալ երկրի խաղաղութեան դէմ դաւող տարր և մեզ փակցրեց ազգային ներքին **«թշնամի»**ի, **«խառնակիչ»**ի, **«մատնիչ»**ի տիտղոս:

Որդեգրելով լրտեսամիտ գրաբանութեան այս մեթոդը՝ հնչակոսակավար գործիչներն ու թերթերը շարունակում են խաղալ իրենց հետևորդների տգիտութեան և հայ ժողովրդի համբերութեան հետ:

Այդ մեթոդի մասին գաղափար կազմելու համար՝ տա՛նք մի օրինակ:

Երբ Շահվերդեանը «ներգաղթի գործով» Բուլգարիա եկաւ՝ ռամկավար «Փարոս»ի մարդիկ բուլգարական մի թերթում տւին մի լուր, ըստ որում՝ Ֆիլիպեից Սոֆիա է գնացել հայ մի պատուիրակութիւն՝ խնդրելու կառավարութեան, որ Շահվերդեանին դուրս վտարի երկրից և ներգաղթի գործը խափանի: Այս լուրը յետոյ «Փարոս»ը «թարգմանում է» և «դիմակազերծ» անում Դաշնակցութեան «հակահայաստանեան քաղաքականութիւնը»:

Մեր գիւղի Մուքօն միայն կարող էր այսպիսի դիւամիտ մի ծրագիր յղանալ: Գողանալ և հաւար կանչել, սուտ փչել և ճշմարտութեան համար կուրծք ծեծել, դաւել և ազգային «առողջ» քաղաքականութիւն քարոզել, մատնել և ինքզինքը հալածական ցուցնել – սովորական զրաբանների գործեր չեն սրանք, այլ ցեղանենգութեան արւեստի մէջ կատարելագործւած բարոյական ճիւղերի՝ իսկական ցեղանենգ շէյթանների:

Մուքօն՝ Ղազէին կողոպտելու փորձով՝ ոտքը դրել էր դժոխք տանող ճանապարհին. կամաց-կամաց նա դարձաւ հայանենգ մի հրէջ: Երբ իր պատիժն ստացաւ՝ գիւղացիներն ասում էին, թէ «շան սատակ եղաւ»:

Նոգով ու բարոյականով վաղուց մեռած հակադաշնակցական Մուքօներն արդէն կանգնած են դժոխքի կենտրոնում: Թուրքն ու բոլշևիկը նւագում են իրենց յաղթանակի եղանակը՝ «**հայկական դատը մի կմախք է**». Մուքօները բռնել են մեռելների պարը՝ «**կեցցէ Հայաստանի փրկիչ բոլշևիկը, կեցցէ դաշնակ-հոյբուն դաւերը չքացնող թուրքը**»:

Մեռելների պա՛րը... խենթացե՛լ են այս մարդիք:

Չե՛ն խենթացել, այլ հոգով ու սրտով շան սատակ են եղել և դժոխքում քաղաքականութիւն են խաղում:

գ) **Պայքար Մայիս 28-ի գաղափարականի և հայոց ազատութիւնը խորհրդանշող Եռագոյնի դէմ.** - Թուրքն էր մօտենում հայոց աշխարհի բնական և հոգևոր կորիզ Արարատի սրտին:

Արագածի կուրծքը չանգրւում է. Սարդարապատի դարբասը ծեծւում և Փամպակի ձորերում աներևակայելի դէպքեր են տեղի ունենում:

Հէ՛յ, ոտքի՛, դեղին յորձանքն է գալիս, յաւիտենական գիշերն է մօտենում – **ցեղն է վտանգւած:**

Արամը վճռել է Երևանի շուրջը օրհասական ճակատամարտ տալ – հայոց պատմութեան բոլոր դարերի ամենաեղերական և բախտորոշ ճակատամարտը: Զօրավար Միլիկեանն ու Դրօն իրենց զօրամասերն են դասաւորում:

Ղարաքիլիսէի ճակատում՝ ծերունի սպարապետ Նազարբէկեանը և՛ արտասուում է և՛ մարտի հրաւեր կարդում: Նժդեհը ահակոչում է՝ **«ղէպի՛ Ղարաքիլիսէ»**. նրա դաշնակցական «Արագած» զօրամասը երգում է. **«ամենայն տեղ մահը մի է»**. Տէր Մովսիսեանի սիրտը իր մարտկոցից պայթում է իբր տարերային ռումբ:

Էջմիածնում՝ Կաթողիկոսն օրհնում է հայ զօրքն ու ժողովուրդը – վերջին օրհնութի՛ւնը, արդեօ՛ք: Չոեւ է իր մեծ և իմաստուն աչքերը և ասում է. **«վճռել եմ թաղւել Էջմիածնի փլատակների տակ»**, Գարեգին եպիսկոպոսը Ղևոնդ Երեցի տարազը հագին՝ գիտնականի իր մեծ բանականութիւնը խցկել է սրտում, պայթելու աստիճան պրկւած երակներով սեղմել է ձեռքի խաչը և Վաղարշապատի հրապարակում ամբոխին ճառ է ասում – **«ղէպի՛ Նոր Աւարայր»**...

Գաղթականների սայլերը ճոնչում են – մեր կեանքի երգը, որ թաւալւելով հայոց աշխարհի բոլոր ճամբաներից՝ Էջմիածնում վերածւել է աներևակայելի մի ժխորի:

Էջմիածնի զանգերն անընդհատ դողանջում են: Հաւարի ճիչը պայթեցնելու աստիճան սեղմում և ընդլայնում է մարդոց երևակայութիւնը:

Սպիտակ մի հրեշտակ իր թևը կախած զանգակատան աշտարակից՝ Գարեգին եպիսկոպոսին ուժ է ներշնչում: Փրփուրը բերանին՝ նա ուրականի պէս այս ու այն կողմն է վազվզում – **«մեր ցեղի պահապան հրեշտակն ասում է. ղէպի՛ Սարդարապատ և Բաշ-Ապարան»**...

Մոլեգնած ամբոխի ալիքները բախում են վանքի պարիսպներին և յետ վանւելով՝ խառնվում դէպի Սարդարապատ և Բաշ-Ապարան անցնող զօրամասերին:

Ճամբաների վրայ փռում է աղեխարշ մի երգ – **«Քարդ քարի վրայ չմնաց Բայրո՛ւրդ»**:

\* \* \*

Կանոնաւոր զինուորներից, աշակերտներից, վետերան հայդուկներից կազմւած մեր զօրամասը բարձրանում է Աբարանի լեռնադաշտը: Դրօս կանգնել է մի ժայռի վրայ և աշխատում է իր զօրքերը

գետեղել Արագածի հրահոսային (լաւա) շերտերի կրծքին: Ճակատն սկսւում է Արագածի գագաթից, իջնում Աբարանի լեռնադաշտը և անցնում դէպի Մայմեխի լեռները: Կենտրոնում՝ խճուղու վրայ ճախրում է Ջեմլեակն ու յանկարծ ընկնում: Ամբողջ երեք օր հայն ու թուրքը ջարդում էին զիրար և ճակատամարտի բախտը մնում էր առեղծւածային: Վերևում՝ Արագածի ձիւների վրայից, թշնամին փորձում է թևանցք կատարել, մեր վաշտերն անցնում են սիւնամարտի, որոշ տեղերում այլևս լռում է հրազէնը, մարդիկ ատամներով էին զիրար յօշոտում: Եւ յանկարծ սկսւում է «հուրբա՜»յի աղաղակը: Հայ ոգու տարերքը գերակշռել էր: Մարդկային հեղեղի ալիքները շաչում էին ժայռերին:

Մեր զօրքի շղթան խելայեղ շոինդով իր օղակները մղում էր առաջ: Թշնամու ճակատը պատուած էր. թուրքն էր փախչում մեր աշխարհից: Մենք և՛ երգում էինք և՛ զարկում և՛ վազում: Հասանք Շիրակի դուռը: Օրը երկար է տակաւին. «**յառա՛ջ, տղանե՛ր**»: Թշնամու բանակն անյայտանում է: Հեռուից սպիտակ դրօշներ են երևում: Հաշտութիւն էր կնքւել...

Մայիս 28-ն էր:

\* \* \*

Ահա՛, այս օրւայ յիշատակն է, որ անարգում են հայ կեանքի ցեղանենգ շէյթանները:

Մայիս Քսանտօ՛ւթ – ի՞նչ է դա. «**թուրքերու պարտադրած անկախութիւն**»: Այսպէս են «տրամաբանում» հակադաշնակցականները: Հասարակ տխմարներ չեն այս մարդիկ, այլ օրգանապէս զրանենգ հրէշներ:

Ինչո՞ւ, ինչո՞ւ, այդպիսի մի անկախութիւն էլ Տաճկա-Հայաստանում չպարտադրեցին մեզ՝ նոյն թուրքերը:

Հայոց պատմութիւնը ե՞րբ է արձանագրել նման մի վտանգ – ցեղի սպառման վտանգը:

Հայ կեանքը ե՞րբ է ունեցել նման ծառացում – հայրենիքի և մեր ցեղայնութեան կորիզը փրկելու ծառացում:



Հայր ե՞րբ է տւել նման լայնածաւալ ճակատամարտեր (ես Բաշ-Աբարանն եմ տեսել, բայց անկարելին է տեղի ունեցել Սարդարապատում և աներևակայելին՝ Ղարաքիլիսեում):

Ե՞րբ է ցեղը մինչև իր ոգու խորագոյն անդունդները այդպէս ճակատագրօրէն ցնցւել:

Ե՞րբ, ե՞րբ ենք մենք ունեցել քառասուն հազարնոց ժողովրդական բանակ և հոգով ու մարմնով իր գոյութեան կռիւն նւիրած միակամ ժողովուրդ:

Ե՞րբ է հայը միայնակ ծառացել ո՛չ միայն Թուրքիոյ, այլև նրա թիկունքում կանգնած զինակիցների դէմ – Գերմանիոյ, որ իր երկաթեայ բռունցքով հսկայ Ռուսաստանի դիակը փռեց գետին:

Ե՞րբ է հայը թուրքին սպիտակ դրօշակ պարտադրել:

Մայիս 28 – դա սովորական յաղթանակի օր չէ, այլ մեր պատմական կեանքի ահաւոր ելևէջների օրհասօրէն յաղթական հանգրւանը. դա սուկական կռիւ չէ, այլ ահարկու խոյանք:

Այդ օրը, հայերը ճակեցին իրենց սիրտը և նետեցին ազատութեան ետևից – նետեցին ա՛յնպիսի ուժգնութեամբ, որ նա «մինչև էսօր գնում է, հա՛ գնում»:

Նրա իմաստն ըմբռնում է ցեղաշունչ հայը – նա՛ որի ոգում վրէժի մոլեգին կրակն է եռում և ազատութեան կարօտը:

Նրա ահարկու թափից և վսեմական խորհուրդից սուկում է ցեղանենգ շէյթանը – հոգով կրաւած և սրտով թլփաթւած «հայ» ստրուկ անասունը:

Դո՛ւ, թշուառակա՛ն, որ խնկի փոխարէն տկար հոգուդ աղբն ես ծխում այսօրայ Երևանին, չե՞ս հարցնում, թէ նա ի՞նչպէս չվերածւեց պատմութեան խաւարի ծայքերում մոռացուող մի գերեզմանոցի:

Օխա՛, ծխա՛ և այրւի՛ր, ինքդ քո մէջ: Եթէ կուգէս խեղկատակիր մեր ճանապարհին, հայիոյիբ գոհերին, ուրացիր Մայիս 28-ը:

Զգւանքը մէկ աստիճանով և՛ս կրարձրացնի մեր մոլեգնութեան թափը:

Զգւանքը թոչոդ թներ կտայ, որ մենք է՛լ աւելի շուտ խոյանանք դէպի նոր Մայիս 28-ը:

Պատմական իրողություն է, որ 1918թ. Մայիս 28-ի յադթանակով հիմք դրեց հայոց քաղաքական կեանքի կառոյցին. հայր դարձաւ պետական ժողովուրդ, իսկ Հայաստանը պետական-քաղաքական միաւոր: Նոյն տարւայ օգոստոսի 1-ին, Երևանում և շրջակայքում կուտակւած հայ զանգւածները հանդիսական մի «այո՛» ասացին իրենց ճակատագրին: Բացւեց Հայաստանի Խորհուրդը և հանրապետական կառավարութիւնն ի պաշտօնէ ընդունեց երկրի քաղաքական կեանքի դէկը վարելու պարտականութիւնը:

Հայաստանի Խորհուրդի նախագահ Ա. Սահակեանը (Հայր Աբրահամ) խօսեց պարլամենտական առաջին ճառը – «**մեր երկրի սահմանները կընդարձակւեն կեանքի երկաթէ ուժով**»: Գերմանաւստրլենդական ներկայացուցիչներն իրենց մտածկոտ հայեացքները սկեռել են նախագահին (ի՞նչ էին մտածում), թուրքերը նայում են ամէ՛ն կողմ, սակայն իրենց հայեացքը կենտրոնացնում Նազարբեգեանի և նրա զինուորական շքախմբի օթեակին. ճգնում են հիացմունք և ինդակցութիւն բռնագրօսել: Դուրսը՝ զօրքը կազմել է պատկառագողու մի շղթայ և արձանացել՝ իբր անշարժ մի պատկեր: Ամբոխն ալեկոծում է. ոմանք անընդհատ ծափահարում են, ոմանք՝ «կեցցէ՛» աղաղակում, ոմանք էլ ծնրադրել են՝ գլուխը կախ և լուռ – աղօթո՞ւմ են, թէ՞ դարերի հաշիւը կարդում:

Ի՞նչ էր պատահել:

Անասելիօրէն ողբերգական պայմաններում կատարւել էր նշանակալից մի յեղափոխութիւն. դարերի կուտակած զգացումները թև առած իրար էին բախւել և մեր մեծ խաչելութիւնն ու սհարկու հերոսականը խորհրդանշւել էին՝ **կարմիր-կապոյթ-նարնջագոյն մի դրօշով**:

Մի օր էլ եկեղեցական պատմականօրէն նշանակալից մի հանդէս տեղի ունեցաւ Էջմիածնի տաճարում: Կաթողիկոսը նզովեց դարերի գերութիւնը, օրհնեց հայ զօրքն ու ժողովուրդը, Հայոց Աշխարհը, Հայաստանի Անկախութիւնը, մաղթե, որ հանրապետութեան

**նւիրական դրօշը** յաւիտեանս յաւիտենից անխոցելի մնայ և յիշեց «զհանրապետութիւնս հայոց»:

Կարսում՝ 1919թ. գարնան, ապրեցի կեանքիս ամենայուզիչ մէկ վայրկեանը – տեսայ **հայկական եռագոյնի խրոխտ ծածանքը՝ հսկայ բերդի վրայ**: Ա՛հ, ի՞նչ երջանկութիւն է այս անցաւոր յաւիտենականի մէջ, գէթ մէկ վայրկեանով ապրել ու զգալ ցեղի հպարտանքի ու հօրանքի խորհրդանշանը՝ հսկայ մի կոթողի վրայ:

Ընթացիկ – ամենամեծ հայր – Մասիսի գագաթին հայկական մի դրօշակ երագելով՝ ճմլեց դարերի սիրտը և մեզ համակեց վերելքի կարօտով:

Եւ բարձրանում են նրանք, որոնք տեսան հայկական դրօշակի փառքը՝ բուն հայրենիքի մէջ, և նրանք, որոնք ապրեցին կամ ապրում են նրա խորհուրդը:

Բարձրանում է ցեղաշունչ հայը, բայց նրա դէմ ցցւած է ցեղանենգ շէյթանը:

Բանդում՝ սաղիստ բռնակները Գրիգոր Մոկացուն տանջելիս՝ պահանջում են, որ հայ ալևոր վագրը կոխկրտի հայ անկախութիւնն ու հայ յեղափոխութիւնը խորհրդանշող դրօշակները: Հին հայդուկը խոնարհուում է զետին, վերցնում դրօշակները, համբուրում է և ողբում...

Ի՞նչ անենք մենք, որ հոգով ի ծնէ ներքինի, մտածումով ու բարոյականով ճշմարտօրէն թզուկ-սաղիստները սողոսկում են օտար ազգերի ոստիկանատունները, գաղտնի հեքիաթներ են պատմում կամ իրենց պղծաթերթերում՝ հայկական դրօշակն որակում են իբր **«կերպասի ծւեն»**:

Մարդկային մտածումն ունի երկու գիծ – վերլուծական (անալիտիկ) և համադրական (սինթետիկ): Վերլուծականը նպատակադիր է երևոյթների բաղկացուցիչ մասերն ու տարրերը գտնել, համադրականը՝ մասերի և տարրերի ամբողջականութիւնն ըմբռնել: Վերլուծական հոգեբանութիւն ունեցող անհատը, եթէ որոշ կրթութիւն և պատրաստութիւն ունի՝ նւիրում է գիտութեան, եթէ տղետ է՝ դառնում է լրտես, մասնիչ, խառնակիչ: Նմանը ճիգ է թափում գաղտ-

նիքներ կորզել, մերկացումներ անել: Մերկ է նրա ոգին և նա ձգտում է աշխարհը մերկացած տեսնել: Նմանի համար չկայ **խաչ** –կայ փայտի, մետաղի կտոր, չկայ **հայրենիք** – կայ լեռների, դաշտերի, բլուրների, հովիտների, աղբիւրների, գետերի մի գումար, չկայ **մարդ** – կայ մսի, ոսկորի, ջղերի, երակների, սննդական նիւթերի և աղբի մի հանգոյց, չկայ **ցեղի իղէալը խորհրդանշող դրօշակ** – կայ կերպասի կտոր, գոյն:

Սովորական մի վերլուծող չէ հայ հակադաշնակցականը. նա տգիտութեան և կրքի մի տոպրակ է, ուժով միայն նրանում կարելի է մի քիչ գաղափար տեղաւորել, բայց երբե՛ք կամաւոր կերպով:

Շոպենհաուերն իր գրածքներից մէկում մէջբերում է սպանիական մի առած – **«պատիւն ու դրամը չեն պարտկում միևնոյն տոպրակում»**: Զօրով գաղափար սեղմել էութեամբ փերեզակի հոգե-տոպրակում – նշանակում է կա՛մ տոպրակը պատռել կա՛մ գաղափարի պատիւն արատաւորել:

**Դրօշակը ցեղի քաղաքական պատիւն է**: Նա երևան է գալիս, երբ ցեղի կամքն արձանանում է իբր յաղթանակ – օրինակ, **իբր 1918 թւականի Մայիս 28**: Այս իմաստով դրօշակը պատմական արժէք է:

Պատմական ամե՛ն եղելոյթ, սակայն, տւեալ ցեղի էութեան յաւիտենական ինքնակերպաւորման մի դրւագն է: Պատմութեան մարգում, այս դրւագները չեն մնում իբր անկապ-անկապ բեկորներ, այլ շղթայակցում են միմեանց: Պատմական առաջընթացը (պրոցես) դէպքերից հիւսւած մի շղթայ է, որ երկարում է անծանօթ կամ յիշելի անցեալից և ներկայի կամուրջի վրայով՝ ձգում է դէպի գալիքը – ապագան: Այս իմաստով դրօշակը մի **գաղափար** է – ցեղի ինքնա-յաւիտենականացման սիմբոլը:

**Քաղաքական պատիւ**, սակայն, ունեն նրանք, որոնք ընդհանրապէս անպատիւ չեն. **ինքնայաւիտենականացման տենչ** ունեն նրանք, **որոնց ոգում ցեղի ճրագն իսպառ չի մարւել**. **գաղափարով** համակում են նրանք, որոնք **ստեղծագործական երկունք** ունեն **իրենց սրտում և բարոյական ուժ՝ իրենց ողջ էութեան մէջ**:

Հակադաշնակցականը հոգեբանութեան մէջ ծանօթ **պնդակորիզ** տիպն է: Նա առօրեայով ապրող գոեհիկ էակ է. իսկական **հաւատամերկ** (թաթարերէն՝ «**իմանը չայլաք**»): Շուկայում նա որոնում է **կանխիկ** դրամը. պատմական եղելոյթներն ըմբռնում է իբր կոպիտ ներկայ, չգիտէ **անցեալը** գնահատել, չի հաւատում **ապագային**:

Ի՞նչպէս նրան դրօշապաշտութիւն պարտադրել, երբ մեր եռագոյնն **անցեալի արժէք** է և **ապագայի յոյս**, երբ նա այժմ տարագիր է և հայ զօրքի սւիներ ցցած չէ նրա ետև:

Սիինն անցել է թուրքի և բոլշևիկի ձեռքը: Ի՞նչ անել. կառչել հայկական եռագոյնին– նշանակում է նիզակ ճօճել նրանց դէմ: Մինչդէ՛ռ: Մինչդէ՛ռ «**թուրքի ականջը անուշ խօսքով շոյելու է**»: Չեմ մոռանում խօսքը փթած հոգով ա՛յն հայ հակադաշնակցականի, որ անգամ Պրագայի սրճարաններից մէկում, ապտակ էր ստացել մի թուրքից և խնդրում էր մեզ՝ հրաժարել նրան պատժելու մտքից:

Թուրքն ու բոլշևիկը հայիոյում են մեր դրօշակին, որովհետև գիտեն, որ նա մեռած մի յիշատակ չէ, այլ կենդանի մի ուժի քաղաքական սիմբոլը: Հակադաշնակցականը թուրքի և բոլշևիկի «**ականջը անուշ խօսքով շոյելու**» համար՝ ճգնում է ցոյց տալ, որ ինքը հայ կենդանութեան նշանակի հետ որևէ կապ չունի: Դրա համար էլ՝ նա ո՛չ միայն փախչում է մեր եռագոյնից, այլև հայիոյում է նրան: Այստեղ՝ նա ցուցահանում է ուրացողի հոգեբանութեան զագրելի, բայց բնական գծերը: Թուրքիոյ հայերը կյիշեն, որ իսկական մահմեդականը միայն զայրանալիս էր հայիոյում մեր հաւատին. իսլամացած հայը՝ շարունակ: Վերջինս այդպէս էր անում ո՛չ միայն համոզելու շրջապատը, այլև ինքնահամոզւելու, թէ լրբութեան դինամիզմով կարելի է յաղթահարել ներքին տկարութիւնը, ամոքել խղճի խայթը: Դրօշուրաց հայը իր ներքին տկարութիւնը վերածել է տխմար գառանցանքի: Նա զգում է պարզապէս և չի հասկանում, որ անցել է ժամանակը, երբ մարդիկ էշով էին Երուսաղէմ գնում:

Կովկասահայերը հնչակ տիպը անւանում էին «**սաղննջեցեալ**». գաղութահայ հակադաշնակցականը, սակայն, **կաղ-կենդանի** է:

Բարոյապէս կաղալ– չի՛ նշանակում, սակայն, վտանգից զերծ մնալ: Գալիս է փոթորիկը և ամենից առաջ տկար տունկն է արմատախլում:

Ա՛հ, հայկակա՛ն տկարութի՛ւն, մենք կարեկցում ենք քեզ և դրա համար էլ ամուր կառչած ենք մեր դրօշակի խորհրդին, համակուած ենք վերելքի կարօտով և քայլում ենք վտանգի կամրջի վրայից:

Հայկական եռագո՛յն ... դա վտանգի աստղն է, որի հետքերով քայլում է վրիժապաշտ հայը – քայլե՛նք և հարւածե՛նք:

Անհնա՛ր է, որ մեր քայլերը մի կայանի ջանգեն. անհնա՛ր է, որ մեր հարւածները անիրաւութեան բուրգերը չխորտակեն:

Աշխարհը յղի է նոր կարելիութիւններով. բախե՛նք բախտի դուռը: Կը գայ արշալոյսը և մրտած դէմքերով մարդոց մի կաղկարաւան կանգ կառնի հայոց աշխարհի դրան և կասի.

- «Ների՛ր ինձ, հա՛յ դրօշա՛կ, որ իմ տկարութիւնը մի օր քեզ ուրանալու անառաքինութեան մղեց ինձ: Անառաքինի էի, որովհետև ստոր էի և ստոր էի, որովհետև հոգով ստրուկ էի»:

**Դ)Երևանի վերածնութեան տարփողում և ներգաղթի շահագործում.**– Պատմական Հայաստանն ունի 380.000 ք. քիլոմէթր տարածութիւն, բնական Հայաստանը (Հայկական Բարձրաւանդակ, Մեծ Հայք) 220.000 ք. քիլոմէթր: Դաշնակցութեան իշխանութեան օրօք, մեր եռագոյնը ծածանւում էր 46.000 ք. քիլ. տարածութեամբ մի երկրամասի վրայ: Ըստ Սևրի դաշնագրի նախատեսութեանց՝ Թուրքիայից պիտի իլւէր մօտաւորապէս 100.000 ք. քիլ. տարածութեամբ մի հողամաս: Վրաստանից և Ադրսբէյջանից մենք պահանջում էինք 22.000 ք. քիլ. տարածութեամբ շրջաններ:

Ծրագրւել էր համահայկական լայնածաւալ ներգաղթ, երկիր էին հրաւիրում ո՛չ միայն Թուրքիոյ հայերը, այլև դարերից ի վեր հայրենիքից արտագաղթած զանգւածներ (Ռուսաստանի, Լեհաստանի, Հունգարիոյ, Պարսկաստանի և միւս բոլոր երկիրների հին գաղութները): Հայաստանը պիտի հիւրընկալեր նաև զգացումով հայութեան կապուած տարրերը՝ ասորիները և եգիպտացիները: Սինջարի եգիպ-

ների կրօնա-ցեղապետ Միր Իսմայիլը սրտառուչ մի դիմում էր արել հանրապետական կառավարության և մի կոնդակ էր յղել Հայաստանի եզիդներին, որոնք **վերջապէս սիրելի հայրենիք Հայաստանի ազատութիւնը տեսնելու բախտը ունեցան:**

Սերի դաշնագրի գործադրումով և հայ-վրացական ու հայ-ադրբեյջանեան կնճիռների հաշւեյարդարումով՝ Հայաստանն առաջին հերթին պիտի ունենար շուրջ 178.000 քառ. քմ. տարածութիւն և 4 ու կէս միլիոն բնակչութիւն, որից **3 միլիոն հայ** – կէս միլիոն յոյն (300.000), ասորի (80.000) և եզիդի (120.000) – քիւրդերի թիւը նախահաշուում էր կէս միլիոն, նոյնքան էլ՝ թուրքերի, թաթարների և այլ մահմեդականների:

Կազմւում էր երկիրը վերա-ննորակառուցելու նախագիծ: Պիտի հիմնւելին նոր քաղաքներ. կարճ ժամանակից հայկական երկաթուղային ցանցը Երևանին պիտի միացներ Տրապիզոնն ու Բիզէն, Երզնկան ու Կարինը, Վանն ու Բաղէշը, Մուշն ու Ալաշկերտը:

Ժողովրդի բնական աճման բարձր կարողութիւնը ենթադրել էր տալիս, որ 1935-40 թւականներին հայութիւնը պիտի հասներ 4 ու կէս – 5 միլիոնի: Յենւած մեր ժողովրդական ուժին, մեր երկրի բնական դիրքին, մեր բարձր հայրենասիրութեան՝ մենք Մուշից ու Երզնկայից աստիճանաբար պիտի առաջանայինք դէպի Տիգրանակերտ ու Խարբերդ, Սեբաստիա ու Կիլիկիա: Պիտի վերաստեղծւեր պատմական Հայաստանը և աշխարհը զարմանքով պիտի տեսներ հայ ոգու մեծագոյն թռիչքները:

\* \* \*

Հայկական այս վտանգը ցնցեց տաճիկներին և ռուսներին: Էն-վերն անցաւ Մոսկւա և հիւրընկալեց «հայ» մեծամասնական Կարախանի կողմից: Յեղի դահիճն ու հայ ցեղանենգ շէյթանը միացան: Իրար ետևից Մոսկւա հասան նաև քեմալական գործակալների խմբեր: Բազւի «արևելեան ժողովուրդների համագումար»ի նախագահ Զինովիեվը քւետարկեց Էնվերի և Իբրահիմ-Թալիի մշակած բանաձևը՝ «ոճրագործ հայերի և դաշնակների» դէմ, որոնք **«վճռել են**

**ոչնչացնել թուրք խաղաղ և աշխատաւոր ժողովուրդը»:** Մեծամասնական ոգու տիրումը եռքի մէջ էր: Ներկայ էին նաև 280 բոլշևիկ «հայեր»: Անչափելի էր նրանց զազրելի հոգիների քսութիւնը. Հայաստանի մահաՎճիռն էր տրւում և «հայերը» ցնծագինս ոռնում էին և ծափ զարկում:

Այս լուրերը հասնում էին Հայաստան: Հանրապետական կառավարութիւնը ձեռք էր բերել նաև բոլշևիկ-թրքական գաղտնի զինակցութեան որոշ մանրամասնութիւնները, ըստ որոց, բոլշևիկները համաձայնել էին ո՛չ միայն ամբողջ Տաճկա-Հայաստանը, այլև Կարսի շրջանը տալ Թուրքիոյ: Այնուամենայնիւ կառավարութիւնը փորձեց լեզու գտնել մեծամասնականների հետ. ապարդիւն փորձ:

Բոլշևիկ-թուրքական զինակցութիւնը պայմանաւորուում էր հոգեբանական ու պատմա-քաղաքական բարդ և խոր պատճառներով:

Հոգեբանօրէն՝ ռուսը մագոխիստ է (տառապապաշտ), թուրքը՝ սադիստ (լլկապաշտ): Նա կրաւորական ճիւղ է, սա՝ ակտիւ հրէշ: Այս երկու հոգեգէներն էլ յանգում են բարբարոսութեան:

Պատմականօրէն՝ ռուսը մի՛շտ էլ դէմ է եղել հայկական առանձին պետութեան գաղափարին – դէմ ո՛չ միայն յանձին Նիկոլա Բ.ի պէս թզուկ ցարերի, այլև հայասէր համարւած Պետրոս Մեծի և Կատարինէ կայսրուհու: Թուրքի տեսակէտը, այս խնդրում, ծանօթ է բոլորին:

Քաղաքական տեսակէտից բնորոշ է, որ Ռուսաստանն ու Թուրքիան պատերազմի մտան իբր թշնամիներ և նրանից դուրս ելան՝ իբր դաշնակիցներ: Երկուսն էլ իրենց մայրաքաղաքները փախցրին ծովեզրից և ամփոփւեցին ցամաքի կենտրոններում – Պետրոգրադն իր դիրքը զիջեց Մոսկւային, Կ. Պոլիսը՝ Անգորային: Սա մի նահանջ էր ծովի ուրւականից – անգլիական ուժից:

Ռազմա-քաղաքական այս ճակատագրական փախուստին՝ զուգահեռել էր ներքին բարոյական խուճապը: Տեղի էին ունեցել ահագին փլուզումներ: Ռուսաստանում խորտակւել էր ցարական գահը. տաճկական սուլթանը կծկւել էր Պոլսում՝ իբր խրտուիլակ: Ռուսը



լքել էր պանսլաւիզմի գաղափարականը և որդեգրել՝ համայնավարական սկզբունքը, թուրքը հրաժարւել էր պանիսլաւիզմից և կառչել՝ պանթիւրքիզմին: Սոցիալ-քաղաքական այս ներհակ մտորումները յղկւելով տարերային խուճակի ալիքից և անցնելով իսլամականութեան և մեծամասնականութեան էակցութեան բովից՝ զուգահեռեցին միմեանց: Բրիտանական ուրուականի սարսափից բոլշևիկեան **մատերիալիզմը** միացաւ իսլամական **մատերիալիստական սենսուալիզմին** (նիթապաշտական զգայապաշտութիւն): Նրանց մէջտեղում կարկառուած մնաց հայկական **իդէալիզմը**:

Մարքսեան տրամասական (դիալեկտիկական) պատմահայեցողութիւն ու իսլամական ճակատագրապաշտութիւր հանդիպելով միմեանց՝ հաշտեցրին **«պրոլետարական յեղափոխութեան»** և **միլլիական ջիհաստի** շահերը:

Սոլեռանդ խուժանները պաշարել էին մեզ: Բոլշևիկները հիւսիսից և արևելքից աղաղակում էին. **«մա՛հ իմպերիալիստական Հայաստանին – ճանապա՛րհ պրոլետարական յորձանքին»**: Հարաւից և Արևմուտքից ոռնում էին թուրքերը. **«մա՛հ թրքութեան դահիճ հայերին – ճանապա՛րհ համաթուրանական ուխտին»**: Խլրտումի մէջ էին հայ ցեղանենզ շէթանները – բոլշևիկ լրտեսները՝ **«ռուսն է գալիս»**. ալեկոծում էին երկրի թաթար զանգւածները՝ **«թուրքն է գալիս»**:

Հոգեբանական և սոցիալ-քաղաքական նման միջավայրում՝ անհնար էր լեզու գտնել: Դարերն իրենց ժանգոտ կրունկներն իրար էին քսել: Ռուս ոգու բորբոսն ու սառն յիմարութիւնը միացել էին տաճկական արինաքաղց նենգամտութեան: Հայ բոլշևիկները ճգնում էին խաղալ կաւատ-խեղկատակի դեր: Նրանք՝ 1920թ. մայիսին, մի քանի վայրերում առաջացրին խռովութիւններ: Բոլշևիկները՝ ռուսներից, թաթարներից և ցարական բանակի 1914-17թթ. գերեվարած ու Սիբիր աքսորած տաճիկ զինուորներից կազմած **«ինտերնացիոնալ»** բանակով յարձակւեցին Ղարաբաղ-Չանգեզուրի վրայ: Չանգեզուրում սկսւեց օրհասական կռիւ: Դիլիջան-Իջևան ճակատում՝

հայ զօրքը հերոսական խոյանքով պաշտպանում էր հայրենիքի սահմանները: Օլթիի կողմից դեպի Կարս առաջանալ փորձող տաճկական զորամասը մատնեց խայտառակ պարտութեան: Հայ զօրքը՝ աւելի մի ծայրով սրբեց նաև երկրի թաթարական սուլար զանգւածների հետքը: 1920 թւականի հերոսական ամառը – դա հայ փոքրիկ ժողովրդի հոգևոր տիտանականութեան արձանացման պատմականօրէն անմոռանալի շրջանն է:

Պատերազմը պատմութեան կուտակած զգացումների անբանական պռոթկումն է. նա՝ ֆիզիկական ուժերի սոսկական բախում չէ, այլ մարդկային ոգու ինքնաարտայայտման ամենաթափոտ կերպը: Պատերազմում մարտնչող բանակները ներկայացնում են ժողովուրդների հաւաքական կամքը, նրանց գոյութեան կռահումը: Մէկ միլիոն հայերի ծառացումը 150 միլիոննոց Ռուսաստանի, 10 միլիոննոց Թուրքիոյ և սրանց զինակից թաթարների և քիւրտերի դէմ՝ ապագայ սերունդներին պիտի թւայ՝ **հրաշք**: Յեղն ապրել էր իր էութեան խռովքը, հարիւրապատկել էր իր կորովը: Ի՛նչ թափ, ի՛նչ յոյս, ի՛նչ հաւատ և քաջութիւն, ի՛նչ վեհապանծ թոյիչք: Անհաւասար ուժերի օրհասօրէն հերոսական նման պայքար՝ մարդկային պատմութիւնը, թերևս, միայն 1918-ին է արձանագրել, այն էլ, դարձեալ Հայաստանում, **Մայիս 28-ին**, երբ հայը ծառացել էր Թուրքիոյ և նրա աշխարհասասան զինակից Գերմանիոյ դէմ: Բայց ինչո՞ւ չարախնդալ, որ պատմութեան բիրտ ուժը մեզ պարտադրեց 1920 թւականի տխուր աշունը, երբ ընկաւ Կարսը և թուրքն ու բուլշևիկը ներխուժելով Հայաստան՝ ստացան իրենց **նախորոշեալ բաժինները**:

\* \* \*

Չարախնդում է հակադաշնակցական տիպը, բայց երբեք տառապում, որ ցնցեց ցեղապաշտ հայի երագը, որ թուրքին մնաց ամբողջ Տաճկա-Հայաստանը, Կարսը, Արարատեան դաշտի կարևոր մէկ մասը (Մուրմալուի գաւառ), հայոց նւիրական լեռը (Մասիս), Բագրատունիների փառահեղ մայրաքաղաքի (Անի) պաշտելի աւե-

րակները, որ երկրի սրտում բոյն դրեց Ատրբեյջանը՝ ստանալով Նախիջևան-Շարուրը, որ նոյն Ատրբեյջանը տէր դարձաւ հիւսիսային Հայաստանի բնական ամրոցը կազմող Ղարաբաղին և լեռնային Գանձակին, որ Վրաստանին մնացին Ջաւախքն ու հայկական Բորչալուն, որ Միացեալ և Անկախ Հայաստանի փոխարէն՝ Անդրկովկասի մի անկիւնում կծկեց Խորհրդային Հայաստան անունով ռուսական խղճալի մի նահանգ՝ 28.000 ք. քլմ. տարածութեամբ և 800.000 բնակչութեամբ (հիմա 1 միլիոն, որից հազիւ 900.000-ը հայ): Չարախնդում է հակադաշնակցական սինքրորը, որ Երևանում «**չտեսնւած շինարարութիւն**» կայ, բայց մէկ-երկու հազար ներգաղթողների համար **բնակարան չկայ**, որ Հայաստանը կողոպտող ռուսը՝ «կը լրացնէ» երկրի բիւջէն, որ Անդրկովկասեան խորհրդային «եղբայրական» դաշնակցութեան անդամներից Վրաստանն ու Ատրբեյջանը սեփականել են Թիֆլիսի և Բագուի հայկական անբաւ միլիոնների հարստութիւնը, որ նրանք խորհրդային բիւջէից օգտուում են 4-5 անգամ աւելի՝, ասել է՝ իւրաքանչիւր տարի առաջ են գնում 4-5 քայլով, իսկ Խ. Հայաստանն անում է կիսակապ մի քայլ միայն:

Չարախնդում է հակադաշնակցական հրէշը, որ բոլշևիկները լայնածաւալ ներգաղթ կազմակերպելու փոխարէն՝ շանտաժում են մէկ քանի հազար «ընտրեալ»ների թշւառութիւնը, որ Խ.Հայաստանն «առաջ է գնում», «ժողովուրդն աճում է և բազմանում», բայց ազգի 2/3-ը նրանից դուրս է մնում, որ «աճողների» և ներգաղթողների համեմատութեամբ՝ 2 անգամ աւելի մարդիկ հեռանում են երկրից՝ արտագաղթելով կամ փախչելով, որ «խաղաղութիւն» կայ և «ստեղծագործ աշխատանք», բայց տասնեակ հազարներով բանտարկեալներ և քստրականներ:

Ցեղանենգ շէյթա՛ն. մեր ցեղայնութեան սիւների ճարճատումը նրան թւում է յաղթանակի աւետիս, մեր երկրի յօշոտումը՝ վերածնութիւն, չեկայի հազարաւոր զոհերի հռնդիւնը՝ խաղաղութիւն, մի քանի հազար մարդոց տեղափոխութիւնը՝ ներգաղթ, միլիոնների թափառանքը և տասնեակ հազարների արտագաղթը երկրից՝ ոչինչ կամ աննշան մի երևոյթ:

Բուրգագում մի մունետիկ – ոմն Ամիրա – մի օր փչում էր. «Նաը պիտի գար երէկ, բայց վաղը ընտրութիւն ըլլալուն՝ պիտի գայ 3 օր վերջ. ընտրութեան մասնակցելէ յետոյ 4000 հոգիով ճամբայ պիտի ելլենք»: Այս մունետիկը սքանչելի կերպով բանաձևել էր արտասահմանի հակադաշնակցականների ներգաղթի քաղաքականութեան իմաստը. «Ներգաղթի նշանախօսքով զանգաձմերի տրամադրութիւններն օգտագործել՝ գրաւելու համար հոգաբարձութադականական աթոռները»:

Նոյն Բուրգագում՝ մէկ ուրիշ ներգաղթականի – ոմն Երւանդ, մականուանեալն «քիրտ» – հետ խօսելիս՝ մեր մի ընկեր ասել է.

- Երկիր հասնելով դաշնակցական պիտի դառնաք:

Ներգաղթականը պատասխանել է.

- Ընդհակառակն մենք կերթանք Դաշնակցութեան քօքը կտրելու:

Այս հայրենակիցն էլ խտացնում է բոլշևիկների ներգաղթի քաղաքականութեան իմաստը. «Ներգաղթի նշանաբանով՝ արտասահմանում վարկաբեկել և տկարացնել Դաշնակցութիւնը, իսկ երկրի ժողովրդի դաշնակ հոգեբանութեան դէմ՝ արևմտահայ հակադաշնակցական ներգաղթողները դարձնել արգելիչ թումբ»:

Ամիսներ յետոյ՝ նաև եկել և տարել է թէ՛ մունետիկին, թէ՛ «քօքը» կտրողին:

Հայաստան հասնելուց յետոյ՝ մունետիկը աղետում է. մատնում զրկանքների և կէս-հիւանդ կէս-խելագար վիճակում, մահուան անկողնում, անվերջ զառանցում է. «օգնութի՛ւն, օգնութի՛ւն»: Մեռե՞լ է, թէ՞ տակաւին տառապում է.- չգիտեմ: «Քէօք» կտրողը մեղադրել է մէկ քիլոգրամ ալիւր գողանալու յանցանքով և ... գնդակահարել է:

Զարհուրելի, բայց մութ պատմութիւն:

Պատահական արկած, սովորական հիւանդութի՛ւն, խելագարութի՛ւն, «մէկ քիլոգրամ ալիւրի» գռեհկատենչ գողութի՛ւն, թէ՞ խորին հիասթափութիւն, խղճմտանքի փոթորկում, զոջում-սթափումի հոգևոր տագնապ, ընդվզումի ներքին փորձ, վերափրկւելու անզօր ճիգ, խեղդած բողոք:

Յամենայն դեպս՝ զարհուրելի պատմություն. խաղաղությի՛ն ձեզ ին՝դճ մարդիկ, թողությի՛ն ձեզ խաբւած, յիմարօրէն մոլորւած, բայց ճակատագրով անբախտ հայրենակիցներ:

Ե) **Մևացում Դաշնակցութեան արկածախնդրական անցեալի.** - Հ. Յ. Դաշնակցութեան վերելքն սկսեց 1896-97թթ., երբ այս կուսակցութիւնը «Բանկ Օտտոմանի» գրաւման և «Խանասորի» արշաւանքի «արկածախնդրութեամբ» փորձեց լուծել հնչակեանների ցուցարարական գործունէութեան հետևանքով կոտորւած 300.000 հայերի, Աւետիսեանի հետ զոհւած 1000-ի չափ «արմենական» երիտասարդների, հնչակեան Մարտիկի, դաշնակցական Պետօի վրէժը և յուսահատութեան մատնւած հայ զանգւածներին, բարբարոսութեամբ ամբարտաւանացած թուրքին և անտարբերօրէն սակարկող Եւրոպային հասկացրեց, թէ **հայ յեղափոխական կրակն ո՛չ միայն չի մարւել, այլև հրդեհը նո՛ր է բոցավառում:** Ի՞նչպէս եղաւ, որ «արկածախնդրական» այս ակտերով՝ Հ.Յ. Դաշնակցութիւնը ճնշեց **կասկածամիտ և զգուշաւոր** հայ ժողովրդի սիրտը և յետայնու՝ հանդիսացաւ հայ քաղաքական դատի և հայ յեղափոխութեան **միակ դրօշակիրը**, անգամ՝ դադարեց «կուսակցութիւն» լինելուց և ամբողջ Մեծ Հայքի սահմաններում դարձաւ համաժողովրդական հոգեբանութիւն:

Ռուս կառավարութիւնը 1903-ին որոշեց գրաւել հայ եկեղեցական կալւածները: Ի՞նչպէս եղաւ, որ Անդրկովկասի ամբողջ հայութիւնը միացաւ Դաշնակցութեան կազմակերպած «արկածախնդրական» ընդդիմութեան:

Սասունում՝ 1904-ին, պայթեց ապստամբութիւնը: Ինչպէս եղաւ, որ դաշնակցական այս «արկածախնդրութեան» ղեկավարներից հայդուկ Անդրանիկը դարձաւ հայոց ազգի ամենաժողովրդական դէմքը – Լեզենդար հերոսը:

Ռուս կառավարութեան դրդումով 1905-6թթ. ոտքի ելաւ Անդրկովկասի թաթարութիւնը: Դաշնակցութիւնը կազմակերպեց հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան և թաթարութիւնն ու ցարական

հայանենգ պաշտօնէութիւնը պատուհասելու «արկածախնդրական» գործը: Ինչպէս եղաւ, որ Անդրկովկասի հայ մտաւորականութիւնը, հոգևորականութիւնը, ժողովրդի հարուստ և աղքատ, քաղքենի և գեղջուկ խաւերը – բոլորը, բոլորը – զինւորական կատարեալ կարգ-ապահութեամբ հետևեցին դաշնակցական հրամանատարների, խմբապետների, մարմինների հրահանգներին, իսկ աշուղներն երգեցին դաշնակցական խմբերի և հերոսների մարտական փառքը:

Համաշխարհային պատերազմով պայմանաւորւեցին Թուրքիոյ հայերի մեծ աղէտը, երկրի հայութեան մի շարք յուսահատական, այլ հերոսական ընդվզումները և Կովկասի հայոց կամաւորական շարժումը: Ի՞նչպէս եղաւ, որ դաշնակցական Վասպուրականի «արկածախնդրական» ապստամբութեան միացան Վան քաղաքի ռամկավարները, իսկ դաշնակցական կամաւորական «արկածախնդրական» շարժման՝ նաև հնչակեանները:

Ահարկու փլուզումներից յետոյ՝ 1917-ին տեղի ունեցան «Համառուսական Սահմանադիր ժողով»ի ընտրութիւնները: Ի՞նչպէս եղաւ, որ Անդրկովկասի հայութիւնն իր ձայների 95%-ը, 558.400 քւէ, տւեց «արկածախնդիր» Դաշնակցութեան:

Նոյն 1917-ի աշնան բոլշևիկացած Ռուսաստանը լքեց Հայաստանի ճակատը: Դաշնակցութիւնը կազմակերպեց հայութեան ինքնապաշտպանութեան «արկածախնդրական» գործը: Ի՞նչպէս եղաւ, որ **1918-ի Մայիս 28-ին** հիմք դրւեց **Հայաստանի Հանրապետութեան**:

Զարհուրելի սովից ու համաճարակից յետոյ, 1919-ին, տեղի ունեցան Հայաստանի պարլամենտի արկածախնդրական ընտրութիւնները: Ի՞նչպէս եղաւ, որ Հայաստանի տառապած հայ զանգւածներն իրենց ձայների 97%-ը (230.272 քւէ) տւին Դաշնակցութեան: (Հնչակ չկար ու չկայ Հայաստանում, իսկ ժողովրդական-ռամկավարները ստացան 481 քւէ):

1920թ. ռուսը վերադարձաւ Անդրկովկաս և միացած թուրքին՝ որոշեց չքացնել Միացեալ և Անկախ Հայաստանի ծրագիրը և բաժանել մեր երկիրը: Դաշնակցութիւնը դիմեց հայրենիքի սահման-

ները պաշտպանելու «արկածախնդրութեան»: Ի՞նչպէս եղաւ, որ հայ զանգւածները խռովքի մատնուելով՝ ոտքի ելան Ռուսաստանի և Թուրքիոյ դէմ:

Վերջապէս, նոյն 1920թ. աշնան ընկաւ Կարսը: Նոյեմբերի վերջին Ադեքսանդրապոլում և Երևանում միաժամանակ կնքուեցին երկու «արկածախնդրօրէն» ողբալի համաձայնագրեր՝ հայ-թուրքական և Դաշնակցական-մեծամասնական: Պարտուած երկիրը բաժանուեց թուրքերի և ռուսների միջև: Ի՞նչպէս եղաւ, որ այդ դէպքերից ընդամենը երկու և կէս ամիս յետոյ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը փոթորկելով Հայաստանի հայութիւնը՝ երկնեց **Փետրուար 18-ի** համաժողովրդական փառահեղ ապստամբութիւն՝ իր ետևից քաշելով նաև ռամկավարները, հնչակեանները, սոց. Դեմոկրատները, սոց. Յեղափոխականները:

1921թ. գարնան Երևանը կրկին անցաւ ռուսների ձեռքը, իսկ նոյն տարւայ ամբարն՝ դաշնակցականները, առանց կուի, խրոխտ Զանգեզուրը յանձնեցին բոլշևիկներին՝ սակայն այս գաւառը Խ. Հայաստանին և ո՛չ թէ Ատրբեյջանին միացնելու «արկածախնդրական» **պայմանով**: Եւ այդ օրից (գրեթէ 13 տարի) բոլշևիկներն իշխում են Հայաստանում: Ի՞նչպէս եղաւ, որ կազմակերպուած բոլշևիկների թիւը Հայաստանում մեկուկէս անգամ աւելի՝ քիչ է, քան բանտերում և արքայապալայրերում տառապող դաշնակցականների, որ խորհրդային իշխանութեան բռնազբօսնեալ «հմայքը» գոյութիւն ունի միայն արտասահմանի ցեղութեան համար, մինչ երկրի զանգւածների ոգում իշխում է մի ուժ, որ բոլշևիկների որակումով կոչւում է՝ **Դաշնակիզմ**:

Ի՞նչպէս եղան այս բոլորը:

Մտքով սինլքորների համար՝ շա՛տ պարզ եղանակով – «արկածախնդրօրէն»:

Մտքով սինլքորը նա չէ, որ միայն տգէտ է, այլ նա, որ նա՛ն անբարոյ է: Նմանի մեղքը նրանում չէ, որ իր մտածման ճառագայթները կարճ են, այլ նրանում, որ նրանք վատասերուած են: Նմանը կոյր չէ, այլ մրասէր, հիւանդ չէ, այլ լպիրշ, յիմար չէ, այլ գրանենգ:

Նա հասկանում է, անշո՛ւշտ, որ Դաշնակցության պէս ահարկու տեմպերամենտով օժտուած մի հոսանք չէր կարող բռնազբօսիկ միջոցներով ամբողջ մի ցեղի կեանքի անհիւր շարժել: Նա գիտէ, որ այնքան փլուզումներ և պատմական զարհուրելի փոթորկումներ ճաշակող Մեծ Հայքի (բուն Հայաստանի) ամբողջ ժողովուրդը, չէր կարող «արկածախնդրութեան» շնորհիւ կապուած մնալ Դաշնակցութեան: Նա այնքան էլ յիմար չէ և կարող է ըմբռնել, որ համազգային մի կազմակերպութիւն, առանց զանգուածների ընդհանուր տրամադրութեանց հաշուառման՝ չէր կարող յեղափոխական երկարատև գործունէութիւն ունենալ: Նա գիտէ, որ Հայաստանի ժողովուրդը, գրեթէ 98%-ով, երկրագործների մի զանգուած էր, իսկ ժողովուրդը, մանաւանդ երկրագործ ժողովուրդը, իր էութեամբ ո՛չ թէ «արկածախնդիր» է կամ «արկածասէր», այլ ինչպէս ասում են. «տաս չափող, մէկ կտրող»: Նա գիտէ, որ Դաշնակցութեան խարխիւր հէնց այս երկրագործ զանգուածներն էին, նրա հայդուկները՝ հայ գիւղացիները: Նա կարող է եզրակացնել, որ **Դաշնակցութիւնը՝** երկրի հայութեան համար հայրենի հողի խորհուրդի, իր սեփական գոյութեան կռահումի, իր ցեղայնութեան, իր կրօնական զգացման սրբասարսուռ **համադրութիւն էր:**

Հասկանում է, գիտէ, յիմար չէ, կարող է ըմբռնել, բայց եզրակացնում է. **«արկածախնդրութիւն»:**

Ալաշկերտի Թոփրագ-Գալէի դպրոցում, Բաղդասար անունով չարածճի մի տղայ կար: Բաղդասարը ճանաչում էր տառերը, գիտեր բառեր կապել, բայց երբ խնդիրն իր անւան կգար՝ ամբողջ գիտցածները քամուն կտար:

Մի օր, նորեկ ուսուցիչը հրահանգում է.

- Բաղդասար՝ր, անունդ կապի՛ր:
- Պարո՛ն, «տիւն-այր-մեն-տամ – Բաղդասար»:

Զարմացած ուսուցիչը ամբողջ կէս ժամ աշխատում է ուղղել Բաղդասարի սխալը, բայց չարածճին մինչև վերջ ապուշ է ձևանում և անվերջ կրկնում «տիւն-այր-մեն-տամ – Բաղդասար»:



Բաղդասարի մեթոդով են վարում նաև հակադաշնակցականները: Նրանք ծանօթ են պատմութեան «այբ ու բեն»ին, գիտեն որոշ բառեր կապել, բայց հէնց որ մօտենում են հայոց «յեղափոխութեան» – ապուշ են ձևանում և այդ սրտաճմլիկ բառը կապում ու կարդում են «արկածախնդրութիւն»:

Բաղդասարը չարաճճի մի տղայ էր, իսկ ի՞նչ է հակադաշնակցականը, լրբացած մի երախա՞յ:

Միջագետքից, 1922-ին Հայաստան ներգաղթող Վասպուրականի Նարեկ գիւղացի պառաւ մի կնոջ հետ խօսելիս՝ կատակով հարցրի.

- Նանի՛, Հայաստան հասնելիս ի՞նչ պիտի անես, բոլշևի՞կ պիտի դառնաս:

Աներևակայելի ցնցումի մատնւեց պառավի ողջ էութիւնը. խեղճը զարհուրանքով աղաղակեց.

- Հաւա՛ր, Լաւօ՛, ի՞նչ կասես. ընչի՛ (ինչու) ես քի՞ւրտ եմ, ընչի՛ ես ռամկավա՞ր եմ:

Մի օր էլ, մեր գիւղացի Ասօին հարցրի, թէ ի՞նչ է նշանակում «հնչակ»:

Խնդաց և պատասխանեց.

- Հնչա՞կ. վանեցիք և խլաթցիք կըսեն «ինչակ», մենք կըսենք «պնչակ»: Հնչակ-ինչակ-սատանի պնչակ:

Նարեկացի պառաւի և մանաւանդ մեր գիւղացի Ասօի այս տգեղ, կոպիտ, այլ պատկերաւոր բնորոշումները մեզ կռահել են տալիս ո՛չ միայն հայ շինականների դաշնակցական ոգու խորքը, այլև մատնանշում նրանց նախազգալու բարձր կարողութիւնը: Հայաստանի գիւղացիները զգում էին ռամկավարներից և հնչակներից, չնայած որ միայն Վան քաղաքում մի քիչ «ռամկավարներ» կային, իսկ հնչակները մեր աշխարհում լապտերով էին փնտռում: Բացի այդ՝ հին հնչակեանները ազգասէր մարդիկ են եղել, իսկ Վանայ ռամկավարները հայրենասիրական զգացումից զուրկ չէին:

Բայց ինչո՞ւ էին զգում, ինչո՞ւ ստում. արդեօք ա՞յլ պատճառով, քան այն, որ **նախազգում էին**, թէ մի օր «հնչակ-ռամկավար» անուններով պիտի խորհրդանշւի հայոց ցեղանենգ շէթանականութիւնը:

Զ) Պայքար Միացեալ և Անկախ Հայաստանի «երագ»ի դէմ.- Այս աշխարհին այնպէս է, որ նրանում ցերեկ կայ և գիշեր, կեանք կայ և մահ, իրականութիւն կայ և երագ, առաքինութիւն կայ և լրբութիւն, շահերի անհաշտելի հակամարտութիւն կայ և ներդաշնակութիւն, ուրախութիւն կայ և տրտմութեան արցունք, խաղաղութիւն կայ և պատերազմ, յաղթութիւն կայ և պարտութիւն:

Յաղթականները ձգտում են ապահովել «շահաձ»ի տիրապետումը, պարտուողները՝ սգում են իրենց «կորուստ»ը, տառապում են, փոթորկւում և երագում են կորցրածի վերանւաճումը:

Ֆրանսիացիները 1871-ին պարտւում են, կնքում են «ամօթալի» մի դաշնագիր և յետ այնու, գրեթէ կէս դար, սգում են Ալզաս-Լորէնի կորուստը, տառապում են, փոթորկւում, երագում և մի օր էլ (1918-ին) հասնում են իրենց բաղձանքին:

Հայերը՝ 1917-18-ին ստիպւում են իրենց վրայ վերցնել ռուս-տաճկական պատերազմի բեռը, շարունակում են կռիւր Թուրքիոյ դէմ, կորցնում են Տաճկա-Հայաստանը և Կարսը, բայց փրկում են Երևանը: Բաթումում ստորագրում են «ամօթալի» մի դաշնագիր, բայց ընդամենը 2 ամիս յետոյ, իրենց խորհրդարանի բացման առիթով՝ յաղթական թուրքին և գերմանացիներին ասում են. «Մեր երկրի սահմանները կընդարձակեն կեանքի երակթէ ուժով»: Եւ դրանից մի քանի ամիս յետոյ, վերանւաճում են Կարսը, կանգնում են ամբողջ Տաճկա-Հայաստանը վերագրաւելու, **Միացեալ և Անկախ Հայաստան** ստեղծելու կարելիութեան առաջ:

Նոյն հայերը 1920 թականին հարկադրւում են պատերազմել ռուս-թուրքական զինակցութեան դէմ. պարտւում են, կրկին կորցնում Կարսը և թուրքի առաջխաղացումը դէպի Երևան կասեցնելու, այնտեղ կենտրոնացած հայութեան գոյութիւնը փրկելու, երկրի մնացորդը **նւագագոյն չարիք** թւացող բոլշևիկներին յանձնելու համար ժամանակ շահելու դիտաւորութեամբ՝ ստիպւում են ստորագրել Ալեքսանդրապոլի «ամօթալի» դաշնագիրը, բայց անմիջապէս էլ այդ յայտարարում են – **արդիւնք բռնադատման**, այսինքն՝ **չեղեալ:**

Աւելին: Երկու և կէս ամիս յետոյ – **Փետրուար 18-ին** – նոյն հայերն ապստամբում են իրենց «հրաւիրած» բոլշևիկներին դէմ՝ շուտով իրենց նաև Տաճկաստանը վրէժխնդրելու յոյսով: Բայց հայ-մեծամասնական այս պատերազմն էլ վերջանում է հայերի պարտութեամբ: Թուրքն ու բոլշևիկը ծանր մի տապանաքարով կնքում են Անկախ Հայաստանի **իրական ծրագիրը**, բայց նրա յարութեան յոյսն իբր ներքին խռովք, շարունակում է ալեկոծել հայերի սիրտը. դրա համար էլ՝ նրանք սգում են, դեգերում, որոնում, տառապում, փոթորկում, երազում:

Այս է բնական կանոնը պատմագործ «ես»երի հոգեբանութեան:

Աստուծոյ արևի տակ, սակայն, սողոսկում է խաւարածին մի չէակ, որ ո՛չ աղօթել գիտէ, ո՛չ օրհնել, ո՛չ կուել գիտէ, ո՛չ յաղթել, ո՛չ երկնել գիտէ, ո՛չ ստեղծագործել, որով իր ազգակիցների պարտութեան դէպքում ո՛չ սգում է, ո՛չ էլ տառապում, ո՛չ զոջում է, ո՛չ էլ տենչում, ո՛չ փոթորկում է, ո՛չ էլ երազում:

Հոգեբանօրէն հակադաշնակցական հայ տիպն է դա – թշնամու խնդակիցը, չոր փաստերից խօսող «ռէալիստ» իմաստակը, որ տրամաբանում է. «Ձեռքը որ չես կարող կտրել – համբուրի՛ր և ճակատիդ դի՛ր»:

Մարսափի անասունն է որոճում նրա ոգում. այնտեղ, ուր փոթորկել է պետք՝ նա կախում է ականջները և իր էութեան խեղճութեան յօրանջել տալիս. **«Միացեալ Հայաստանն արկածախնդրական մի ցնորք է. նա երբեք չի կարող իրականանալ»:**

Այդ սինլքորի համար է, կարծես, Ֆաուստը մէջբերում իմաստունի խօսքը, թէ.

«Ոգիների աշխարհը չի գոցւած,

Քո զգայնութիւնն է փակ,

Քո սիրտն է մեռած»:

Մեռած է հակադաշնակցականի սիրտը, կտրւած են նրա երևակայութեան թևերը և աշխարհի կարելիութեանց դուռը՝ նրան թում է յալիտենօրէն փակ: Նա չի հասկանում, որ «փակ» դուռը **բախում են**, եթէ չբացվի՝ **բանալի** են գործադրում, եթէ բանալին էլ չօգնի՝

**խորտակում են:** Նա ջղայնանում է մանաւանդ այս «խորտակում են» բառից. տնկում է իր յիմարութեան կոտորչները և գառանցում. «Դաշնակցականները չեն կարող թուրք-բոլշևիկեան պատնէշը **խորտակել**, Միացեալ և Անկախ Հայաստանը՝ չի կարող լինել»: Զառանցում է և ա՛յնքան է տգէտ, որ կարծում է, թէ դիմացինը անձանօթ է ա՛յն ճշմարտութեան, թէ «չի՛ կարող խորտակել», «չի՛ կարող լինել» հոգեբանօրէն թարգմանում է «չեմ ուզում, որ խորտակի», «չեմ ուզում, որ լինի»:

**Դաշնակցական** – ինչո՞ւ չես ուզում:

**Հակադաշնակցական** (ինքն իր մէջ) – Որովհետև քո իսկ որակումով՝ ինքս ցեղանենգ հրէշ եմ. շէյթանի և ցեղիդ թշնամու գործակիցը, քո և ցեղիդ փառքը չհանդուրժող սրիկան:

**Մի չեզոք** – Հապա՛, ի՞նչ պիտի լինի մեր հայկական գործերի վերջը:

**Հակադաշնակցական** (հայ հանրութեան) – Մենք ո՛չինչ կարող ենք անել. ազգը սպառւած է. ողորմելի խլեակներ ենք, **ինքզինքնիս կորցրել ենք**, խաղաղութեան և հանգստի պէտք ունինք:

Ալաշկերտի Եոնջալու գիւղում Բաղէ անունով կաղ մի մարդ կար: Ինչ-ինչ պատճառներով Բաղէն թշնամանում է իր մերձաւորներից մէկին: Մի օր քիւրտերը կրակ են ձգում այս մերձաւորի կալը: Ոտքի է ելնում ողջ գիւղը և ճգնում է հրդեհը կղզիացնելով՝ մարել: Գիւղացիները, սակայն, զարմանքով նշմարում են, որ Բաղէն օգտւելով ընդհանուր իրարանցումից՝ կրակից գերծ խուրձերը նետում է բոցի մէջ, իսկ կրակւածները փախցնելով՝ տանում է դէպի միւս դէգերը: Նրանք զարհուրած ճչում են – Բաղէ՛, ի՞նչ ես անում: Բաղէն պատասխանում է – եղբայրնե՛ր, ես էլ չգիտեմ ի՞նչ եմ անում, սրտիս ցաւից՝ **ինքզինքս կորցրել եմ**:

Բաղէի «սրտի ցաւով» է բռնւել հակադաշնակցական «ազգասէր»ը. նա ճգնում է լրացնել հրձիգ թշնամու գործը, մոխրացնել մեր կալը և արդարանում է. «**ինքզինքս կորցրել եմ**»: Քնի աւետարան է կարդում նա. «**մեզ խաղաղութիւն է պէտք և հանգիստ**». գիտէ, որ

հայրենագուրկ և թափառական մարդն ոչ խաղաղութիւնից կարող է օգուել, ոչ էլ հանգստութիւն վայելել, բայց **քուն** է քարոզում, որպէսզի իր զինակից օտար գայլն իսպառ խեղդի հայկական հօտը. **«բուշիկը Հայաստանի պահապան շունն է»:**

Ա՛խ, սրիկա՛յ, դու էլ մեր **պահապան էջն** ես, բայց հէնց որ կուի ձայն ես լսում՝ **վախից պորտոյ ընկնում է:**

Ընկած է արդէն մտքիդ պորտը. տսկում ես Միացեալ Հայաստանի մեծ երազից, որովհետև զգում ես, որ մեծ երազները մեծ գործեր են պահանջում, մեծ զոհողութիւններ:

Մանրագործ ոգուդ քութիւնն արդարացնելու համար՝ խանդավառում ես փոքրիկ իրականութիւններով և զառանցում. **«կեցցէ՛ Խ. Հայաստանը»:**

Լսի՛ր, սինլքո՛ր, կեցցէ՛ **Մեծ Հայաստանը**, որ չի՛ կարող 28.000 ք. քմ. տարածութեամբ և 900.000 հայ բնակչութեամբ իր գոյութիւնը յարատևել, որ չի՛ կարող Մասիս լեռան, Անի քաղաքի, Վանայ լճի, Արածանի գետի, Մշոյ դաշտի թրքացման և իր միլիոնատր որդիների թափառումի և նւաստութեան մտքին հաշտուել, որ չի՛ կարող հայ ցեղի դահիճներից մեկի իշխանութիւնը և միւսի «բարի» հարևանութիւնը՝ Արաքսի ափին հանդուրժել:

Չի՛ կարող, լսի՛ր:

Է) **Պայքար «ռուսահայ» գործիչների և «ռուսահայ» էութեան դէմ.** Դաշնակցականութիւնն ու հակադաշնակցականութիւնն իստօրէն զատորոշում են նաև նրանով, որ առաջինն ունի համահայաստանեան և համահայկական զգացում ու զաղափարաբանութիւն. վերջինը՝ գարշելի տեսակի **հատաձամոլ է:** Դաշնակցութեան երազած «Միացեալ և Անկախ Հայաստանը» միայն հողի պահանջ չէ, այլ ազգային ուժերի համադրման, ցեղի ցրած զաւակների համախմբման, հայութեան **քաղաքական և հոգեբանական ամբողջացման** տենչանք: Դաշնակցականը Հայաստանը պատկերում է **մի և ընդհանուր** – հակադաշնակցականը Հայաստան ասելով հասկանում է՝ մերթ միայն **Տաճկա-Հայաստան**, մերթ միայն **Կիլիկիա**, մերթ էլ՝ **միայն**

**Երևան:** Դաշնակցականի ըմբռնումով աշխարհի բոլոր հայերը կազմում են միևնույն ազգութեան նոյնագոյն բեկորները – հակադաշնակցականը սոյն բեկորները համարում է՝ էութեամբ այլազան: Նա ասում է՝ «հայ» և «հայութիւն», սա՝ «ռուսահայ», «թուրքահայ», «պարսկահայ» և այլն: Նա ձգտում է **համադրումի**, սա իր էութեամբ՝ **պատակտիչ է:** Դաշնակցականի համար **ռուսահայ-տաճկահայ տարբերութիւնը քաղաքական-սահմանային է**, հակադաշնակցականի ըմբռնումով՝ **հոգեբանական-զգացումային:**

Հակադաշնակցական են բոլոր նրանք, որոնք ճմլելով ռուսի և թուրքի ազդեցութիւնից՝ հոգեբանօրէն իրենց զգում են «ռուսահայ» կամ «թուրքահայ»:

Հոգեբանօրէն «ռուսահայ»ի էութիւնը համակած է ներքին **ինքն-առուսզգացութեամբ**, հոգեբանօրէն «թուրքահայ»ը եթէ չի էլ գիտակցում, գէթ բնագրով կապած է **թուրքական էութեան:** Նա մարմնաւոր հայ է, **հոգևոր ռուս**, սա՝ մարմնաւոր հայ է, **հոգևոր թուրք:** Երբ պատմութեան զանգը հնչում է և ցեղն ուզում է իր ճակատագիրը դարբնել – նա դառնում է **բոլշևիկ**, սա՝ **թուրքական լրտես** կամ անգիտակցաբար թուրքի հացին կարագ քսող քաղաքական խեղկատակ, ներքին խառնակիչ:

Եւ ահա՛ մի անակնկալ: Մինչև երէկ այս ռուսահայն ու թուրքահայը զիրար ատում էին, որովհետև ցարական ռուսը և սուլթանական տաճիկը թշնամիներ էին, այսօր զիրար «սիրում» են, որովհետև բոլշևիկ ռուսն ու քեմալական թուրքը զինակցել են: Այստեղ՝ հոգեբանական, եթէ կուզէք ենթագիտակացական հիմքը, **թուրքահայ» հակադաշնակացականների և ռուսահայ» բոլշևիկների բարեկամութեան:** Ռուսահայ բոլշևիկը սիրում է թուրքահայ հակադաշնակցականին, որովհետև վերջինս ասում է. **«ես Տաճկա-Հայաստան չեմ ուզում»** (թուրքի ուզածը): Թուրքահայ հակադաշնակցականը սիրում է ռուսահայ բոլշևիկին, որովհետև սա ասում է. **«Հայկական դատ այլևս չկայ, Խորհրդային Հայաստանը մեզ բաւարարում է»** (ռուսի ուզածը):

Իսկ ի՞նչ է ասում դաշնակցական հայր: Կովկասցի դաշնակցականն ասում է. «ատա՛նց թուրքաց Հայաստանի - չկա՛յ Հայաստան», գաղութաբնակ դաշնակցականը շեշտում է. «ատա՛նց կովկասեան Հայաստանի - չկա՛յ Հայաստան», ասում են ու շեշտում և միասին ձգտում են «Միացեալ ու Անկախ Հայաստանին»:

Դաշնակցական այս համահայաստանեան և համահայկական մտածումը՝ հակադաշնակցական սինլքորին թւում է «ռուսահայ» էութեան պտուղ: Նա պայքարում է այս մտածումը ներկայացնող արևելահայ ցեղապաշտ գործիչների դէմ և քծնում իսկական ռուսահայերին՝ բոլշևիկներին: Պայքարում է, որովհետև չի ուզում Միացեալ Հայաստան – քծնում է, որովհետև ուզում է Հայաստանը տեսնել բաժանւած, յօշոտւած, չքացած:

## Գ. ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Իբր ամփոփում ասենք.

1) Հակադաշնակցական շէյթանը խլուրդի պէս դեգերում է թուրքի և ռուսի բացած ակօսում: Ատում է մեզ, որովհետև մենք թշնամի ենք թուրքին և ռուսին: Իբր ցեղի թշնամիների գործակից՝ նա նրանցից ստացել է պայքարի մի տախտակ և յանձնառութիւն՝ մեր կեանքում շփոթ առաջ բերելու, մեզ ինքնամփոփւելու և նոր թափով կռի պատրաստւելու կարելիութիւնից զրկելու դիտաւորութեամբ: Նա վէճ է ստեղծել, **որպէսզի մեր ուշադրութիւնը ցրի:**

2) Այս պայմաններում անհնար է «ազգային միացեալ ճակատ» ստեղծել: Ո՛չ մենք նրանց կգործակցենք, ո՛չ էլ նրանք մեզ: Իրաքանչիւրը պիտի գնայ իր ճանապարհով, իսկ վճիռը կտայ պատմութիւնը: Դաշնակցութիւնը մարմնացնում է հայ ցեղի տեմպերամենտը և ազգի քաղաքականօրէն դաստիարակւած զանգւածների հաւաքական մտածումը, իսկ պատմութեան մարզում ենթակայական դերակատարներն են – **բարձր տեմպերամենտը և դաստիարակւած զանգւածը:**

3) Հակադաշնակցական փոքրամասնությունը շերտաւորւած է՝ հոգեբանօրէն: Ցեղանէնգ շէյթանականութիւնը ներկայանում է իբր անհատների մի խմբակցութիւն: Որքան էլ բոլշևիկ-հնչակ-ռամկավար-կղերական տարրերը հիմա շէյթանի չւանի տակն են խեղկատակում – չի նշանակում, որ նրանք բոլորը էութեամբ շէյթաններ են: Կայ մոլորաձների, երկչոտների, հարկադրւածների բազմութիւնը Այդ բազմութիւնը խօսքի ու գրչի քարոզով չի դաստիարակւի, այլ յեղափոխական կենդանի և լայնածաւալ գործունէութեամբ: Քաղաքական պրոպագանդի տեսակէտից՝ մէկ ռումբի ձայնն աւելի՝ է դաստիարակիչ, քան մէկ միլիոն քիլոգրամ մրոտւած թուղթ:

Երբ ռումբի որոտը լսելի կը դառնայ նաև հակադաշնակցական մոլորաձին – նա կհոգեփոխուի, կլծուի յեղափոխութեան կառքին, կթքի իրեն մոլորեցնող ցեղանէնգ շէյթանի աչքերի մէջ և կթքի զայրոյթի այնպիսի՝ թոյնով, որ նա կուրանայ:

4) Աշխարհը յղի է նոր կարելիութիւններով. մօտենում է փոթորիկի ժամը: Այս աշխարհում իշխում է պարբերակների՝ խմորումների և թռիչքների սկզբունքը: Աստուածը յոգնել է, թմրել, կախել է ականջները և յօրանջում է. աշխարհի անիւր խրել է ցեխում, ճոնջում է և դուրս չի գալիս – **խաղաղութիւն է:**

Աստուածը կայտառացել է. հարբել է գինով և երգում է, երգում է և երկնում, երկնում է և ստեղծագործում, տիեզերքն հեծել է իր երիվարը և սանձակոծում է. պատմութիւնը մի վայրկեանում դարերի վազք է անում, մարդը տենչում է, ձգտում, ուզում է յաղթել-յաղթահարել, բարձրանալ, բնաշրջումի մի նոր պարբերակ է բացում, պտուղն հասել է ու վայր է ընկնում և քաղաքակրթութիւնը նոր, ճակատագրական մի թռիչք է անում – **պատերազմ է:**

Հայութեան ճակատագրական թռիչքի ժամն է մօտենում: Պատրաստ: Մոլեգնօրէն: Տարերայնօրէն: Մեր ցեղի թշնամիների դիակները և հայ ցեղանէնգ շէյթանների եղկելի հոգիները կոխկրտելով՝ մենք պիտի քայլենք դէպի Միացեալ և Անկախ Հայաստանի մեծ գաղափարի յաղթանակի արշալոյսը:



## ՀՈՒՎԱԾՆԵՐ

## ՄԱՅԻՍ 28

*Ստորև կուտանք ամփոփումը Հ. Մաստրեանի ճառից, գոր արտասանեց Սոֆիայի մէջ, Մայիս 28-ի տօնակատարութեան առթիւ:*

«Ձայն են տալիս և չեմ արթնանում, ասում են և չեմ լսում, կանչում են և ոտքի չեմ կանգնում, փող են զարկում և կռուի չեմ պատրաստում»:

Նարեկացու այս հոգեվիճակը երկար ժամանակ կնքեց նաև քաղաքական հայութեան ճակատագիրը:

Հայը չէր տրորում դարերի ճամբան, դարերն էին տրորում նրան: Նա չէր ճնշում պատմութեան սիրտը, պատմութեան ծանր մղձաւանջն էր ճնշում նրա սիրտը: Իր ցաւի և աշխարհի անցքերի հետ՝ հայը քշում էր դէպի յաւիտենական անորոշը:

Մեր երջանկութիւնն ու անբախտութիւնը հենց նրանում է, որ կեանքը գաղտնիքներ ունի, ցաւը՝ թովչանք:

Եղաւ այնպէս, որ մի օր ցաւից ծնունդ առաւ մեր ապրելու խենթութիւնը: Ձայն տուին և հայը արթնացաւ, ասացին և լսեց, կանչեցին և նա ոտքի ելաւ, փող զարկեցին և նա կռուի պատրաստուեց, յարձակուեցին և նա գուպարի մտաւ, բախուեցին և նա յաղթական դուրս եկաւ:

Ի՞նչպէս հասունացաւ մեր կեանքի յղութիւնը, ի՞նչպէս ստեղծուեց հայոց պատմութեան այդ սրտաճմլիկ դէպքը:

Մայիս 28-ը կերպատրոդ գործօններից առաջինը՝ դա ցեղի սպառման վտանգն էր: Ո՛չ մէկ ոյժ կարող է այնպէս խռովել ժողովուրդների ոգին, ինչպէս ցեղորէն սպառուելու վտանգը, որ օրհասական վայրկեաններում դառնում է հաւարի ահարկու աղաղակ: Հնից էր գալիս նա, մեր պատմական կեանքի բոլոր զգացումներն էին կուտակուած նրանում և այդ էր պատճառը, որ նրա թափը Մայիս 28-ին դարձաւ տարերային: Իսկ ուր տարերքն են շարժում՝ այնտեղ ոգիների օվկիանն է ալեկոծւում, ուր ոգիների ալեկոծ խռովք կայ՝ այնտեղ պատմութիւնը նորատիպ փաստեր է արձանագրում:

Երկրորդ գործօնը՝ դա ճակատագիրը յաղթահարելու տենչն էր: Հնից էր գալիս ե՛ւ այս տենչը, որ մեր յեղափոխական շարժման օրերին արդէն վերածուել էր խանդի: Կա՛ր ինքնայաղթահարումի ճիգը: Գեղջուկ Մերոբը Նեմրութի վրայ - դա հայ մարտական ոգու տիտանացումն էր: Մեր պատմութիւնն արձանագրել էր այդ փառքը և կրկին չէր կարող մրոտուել: Մայիս 28-ին վտանգը բորբոքեց ինքնագերազանցումի կրակը: Իսկ ինքնագերազանցումը հոգու ա՛յն երկունքն է, որից միայն մի բան կարող է ծնել – **յաղթանակը**:

Երրորդ գործօնը դաշնակցական ամենաբարձր առաքինութեան՝ նուիրումի, որդեգրումն է՝ լայն զանգուածների կողմից: Նուիրումը ա՛յն հոգեվիճակն է, որում անհատը յանգում է իր բացարձակ ոգու յայտնութեան: Դա ցեղի կամքի շղթայագերծումն է անհատի մէջ: Յաւիտենականութեան կարօտի գերապրումն է դա, որ անհատին մոռացնել է տալիս ամէն անցաւոր բան և առաջին հերթին իր անձը: Ամէն նուիրում լինում է ցեղը յաւիտենականացնելու մտահոգութեամբ և ամէն նուիրուածի մէջ խօսում է ցեղի ձայնը:

Յե՛ղը: Դա մշեցի Ճիրօն է, որ թշնամու անակնկալ յարձակման պահին իր ձին տալիս է Սմբատին և ասում. «Ազատուի՛ր դու, որովհետև գործի համար աւելի՛ անհրաժեշտ ես»: Մնում է և մեռնում: Դա հայ աշակերտն է, որ Արագածի գլխին 4.000 մէթր բարձրութեան վրայ Հայաստանի դիրքն է պահում, գիշերուայ տեղատարափ ձիւնից և լուսաբացի պարզկայից դառնում է մի սառցակոյտ և առաւօտուն, երբ մրրկախաղ ամպերի մէջ թշնամու հետախոյզներն է տեսնում հանդիպակաց կատարին՝ կանչում է իր պատանի ընկերներին. «Տղե՛րք, սառած ենք և շարժուելու անընդունակ, փայտացած մեր ձեռքերով չենք կարող կրակել, բայց ոտքի ելնե՛նք և թուրքը թո՛ղ տեսնէ, որ Հայաստանը ապրում և շարժում է Արագածի գագաթին»:

Դա հայ գեղջուկն է, որ մտնում է Թալինի տաճարը, վառում է հոգու մոմերը և դուրս գալով՝ դառնում է գիւղական վաշտի կազմակերպիչը և առաջապահ մարտկուռին:

Ա՛հ, նուիրումի ի՛նչ սրտառուչ դէպքեր պատահեցին այդ օրերին հայոց աշխարհում:

Երբ նուիրումն է դառնում զանգուածային հոգեբանութիւն՝ ցեղը մտրակում է իր նժոյգը դէպի յաղթանակ:

Մայիս 28-ի յաղթանակով հայր իր պատմութեան մէջ արձանագրեց մի քանի փաստեր, որոնք վճռական նշանակութիւն ունին մեր ապագայի համար:

1. Դէպքերի պարտադրումով հայերը ազգագրորէն ամփոփուեցին իրենց հայրենիքի բնակենտրոնում:

2. Նրանք համոզուեցին, որ իրենց փրկութիւնը ազգային ճիգերի համադրութեան և միակամութեան մէջ է:

3. Նրանք տեսան, որ հայր միակամ և մարտունակ կարող է դառնալ միմիայն դաշնակցական հոգեբանութեան և զգացումի որդեգրումով:

4. Նրանք զգացին, որ վտանգի ժամանակ իրենց վիճակուած է մենակ մնալ, իսկ մենակութեան ողբերգութիւնը միշտ էլ կարող է հերոսականի վերածուել, երբ ժողովուրդը ուղղամտօրէն քայլում է ցեղի մատնանշած ճամբով:

*Բանախօսը համեմատելով Մայիս 28-ի և այսօրուան հայութեան հոգևոր և քաղաքական դրութիւնը, ըսաւ.*

«Այնժամ, մեր առջև կար իտէալը, այժմ՝ անորոշութիւնը: Այնժամ, մենք ունէինք ինքնակալ դառնալու կամք, այսօր՝ հայութեան մէկ մասը համակուած է աշխարհին հպատակ մնալու հոգեբանութեամբ: Հայը ուզում է տիեզերական ծառայ դառնալ և աշխարհն այդ «պատիւ»-ն անգամ զլանում է նրան: Նա աշխատանք է փնտռում և նրան ասում են՝ «դու աշխատելու իրաւունք չունես»:

Պատի՞ժ է սա, թէ՞ անարգանք՝ չգիտեմ:

Գիտեմ, սակայն, որ ամօթի զգացումը մի օր պիտի ցնցի զանգուածները:

Բացուած է մեր կեանքի բնական ուղին, և հայր, որ զուրկ չէ հպարտանքի զգացումից՝ մի օր կրկին պիտի կանգնի նրա վրայ:

Այդ ուղին նոր Մայիս 28-ի ուղին է:

Այդ ուղին նոր յաղթանակի ուղին է:

*«Ազատ խօսք», Սոֆիա, 1935, Յունիս 8, թ. 28:*

## ԳՈՐԾԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԸ

Քրիստափորի մահուան 30-ամեակի առթիւ

Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ,  
որ առաքեացն զիս, մինչ որ կայ, գայ  
գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել,  
մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի:

**Աւետարան**

Քի՛չ անհատներ, անգամ առաջնորդներ կարողանում են իրենց պատմական դերը ճշտել ըստ Աւետարանի այս պրագմատիստական (գործնապաշտական) ըմբռնումի:

Այդ քչերից մէկն եղաւ Քրիստափոր Միքայելեանը - մեր ժամանակների հայոց պատմութեան ամենաազդու դէմքը:

Աշխարհի իրականութեան հանդէպ նա համակուրեց յիսուսեան տառապանքով և իր գործն ապրեց յիսուսեան հաւատով:

Տառապանքը նրան դարձրեց իր ցեղի առաքեալը, լաւատեսութիւնը՝ իր ժողովրդի առաջնորդը:

Կարճ ապրեց, ինչպէս ճակատագրօրէն վտանգի հետ գործունեցող բոլոր մարտիկները:

Իր գործի ճամբին մեռաւ, ինչպէս բոլոր նուիրուածները:

Անմահ ժառանգութիւն թողեց, ինչպէս յաւիտենականութեան լեզուն հասկացող մարգարէատիպ բոլոր ոգիները:

Գործի գաղափարախօսն էր նա, և իր գործը մեր կեանքում եղաւ աւելի քան վիթխարի - Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Երկու խօսք նրա հոգևոր դիմագծութեան կործի մասին:

Քրիստափոր Միքայելեանի ոգին ահեղանքի մի խռովարան էր, և իր ստեղծած կազմակերպութիւնը դարձաւ աշխարհի ամենա-ահաւոր ոյժերից մէկը:

Գործը նա պատկերում էր իբր նուիրում, և ազգերի պատմութեան մէջ չկայ գաղափարական այլ շարժում, որի մարտիկների համար այս հոգեբանութիւնն այնքան սովորական առաքինութիւն

դառնար, որպես վկայեցին Քրիստափորի շնչով վարակուած հայ-  
դուկները:

Քրիստափոր Միքայէլեանն իր ցեղի գայրոյթի մարմնացումն էր  
և բացի իր կազմակերպութիւնից՝ հազիւ թէ գոյութիւն ունենայ այլ  
մի հոսանք, որի կեանքում **«սրբազան գայրոյթ»**-ի գործօնն այնքան  
նշանակալից դեր խաղայ:

Նա հայ ոգու գաղափարապաշտական գծի ներկայացուցիչն էր, և  
ն'չ մի հասարակական կազմակերպութեան դաւանաբանութիւն չի  
կրում մշտանորոգ գաղափարապաշտութեան այն անեղծանելի  
դրոշմը, որով կնքուել է դաշնակցական հաւատամքը:

Յարատև կռուի պատգամախօսն էր նա, և քիչ ժողովուրդներ  
ընդունակ են իրենց ողբերգութիւնից յոյս ստեղծել, իրենց պարտու-  
թիւնից ոյժ ստանալ, խորտակումի մէջ նորակառուցումի կարօտով  
վառուել, լքումի պահերին կրկին կռուի յաղթական վախճանին  
հաւատալ, ինչպէս անում է դաշնակցական հայութիւնը:

Առաջին գործնական համահայն էր նա, և դաշնակցականութիւնը  
այլ բան չեղաւ, քան հայոց պատմութեան բոլոր ժամանակների  
ամենալայնածաւալ և ամենախոր համահայկական շարժումը:

Իր գաղափարախօսութիւնը այլ բան չեղաւ, քան հայ ազգային  
մտածողութեան գիտական բանաձևումը, հայ ոգու դարաւոր տեն-  
չերի համադրութիւնը - **դաշնակցական համադրական աշխարհա-  
յեցողութիւնը:**

Իր գործն այլ բան չեղաւ, քան հայոց պատմութեան բոլոր մաքա-  
ռումների, բոլոր խորտակուած իդէերի վերարժարծումը, վերակեն-  
դանացումը - **Ռաշնակցութեան համահայկական քաղաքական  
ուխտը:**

Այսպէս եղաւ նա - հայոց պատմութեան գործի գաղափարախօսը:

\* \* \*

Անցաւ 30 տարին իր եղերական մահից: Ապերջանիկ եղաւ իր  
կեանքում, բայց երջանիկ իր մահից յետոյ:

Քրիստափորը նրանցից է, որոնք իրաւամբ ապրում են իրենց ցեղի յաւիտենականութեան հետ: Նրանցից, որոնք հեռանալով ներկայից խորացնում են պաշտամունքն իրենց հանդէպ՝ դառնում են կենդանի հաւատի խորհուրդ:

Նրանցից՝ որոնք դադարում են պատմական անձնաւորութիւն լինելուց և դառնում են ոգիները շարժող ոյժ, որոնք իշխում են ոչ թէ մարդոց յիշողութեան, այլ գոյզացութեան վրայ:

Այդպէս, որովհետև նա հայ կեանքի համար հանգրուան չէ, այլ ուղի, կուռք չէ, այլ ստեղծագործ գորոյթ, յիշատակ չէ, այլ հաւատ, քարացած արժէք չէ, այլ **«յարատև կռուի»** խորհրդանշան:

*«Ազատ խօսք», Մոֆիա, 1935, Օգոստոս 18, թ. 85:*

## [Հ. ԱՄՍՏՐՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ Ս. ՎՐԱՅՅԱՆԻՆ]

Հայրենակցական միությունները օգտակար չեն: Պէ՛տք է քաջալերին, թէ ոչ: Այս մասին տարբեր կարծիքներ կան: Ումանց համար «հայրենակցական»-ները ազգը պառակտող, ազգային ոյժերը ցանու ցիր անող, վնասակար կամ լուսագոյն դեպքում մեծ ոյժ կլանող, բայց քիչ արդիւնք տուող անօգուտ կազմակերպություններ են: Ուրիշներ, ընդհակառակը, դրական գնահատություն են տալիս: Մեզ թուում է, որ ճիշտը այն է, որ կան ե՛ւ օգտակար «հայրենակցական»-ներ ե՛ւ վնասակար: Իրատեսութեամբ մօտենալով խնդրին՝ պէտք է առնենք լաւը և յետ մղենք վատը:

Օւաւալուն ու համակրելի կազմակերպություն է Տարօն-Տուրութեան Հայրենակցական Միությունը, որի Կենտրոնական վարչությունն էլ գտնուում է Ամերիկայում: Ապրիլից սկսած լոյս է տեսնում նրա օրգանը, որ խմբագրուում ու տպւում է Սոֆիայում, 32 էջոնց ամսական տետրակների ձևով: «Հայրենակցական» շարժման հետ, ըստ էութեան, կապ չունեցող գործ է այս, այլ գուտ քաղաքական ձեռնարկ: Եւ Կենտրոնական վարչութեան «Պաշտօնական յայտարարութեան» մէջ (թ. 1) այսպէս էլ բացատրւած է. «Տ.-Տ. Հ. Միությունը սովորական Հայրենակցական Միություն մը չէ: Թէև ան կրթական, բարեսիրական և մշակութային գործեր կը կատարէ իր բնագաւառի հայ ժողովուրդի նկատմամբ, ինչ որ կընեն միւս հայրենակցականները, բայց ատոնք Միությունս գոյութեան կոչող ազդակներ չեն եղած»:

Որո՞նք են հապա այդ ազդակները: Զուտ քաղաքական. «քաղաքական բնոյթ կրող հայրենասիրական կազմակերպություն մը՝ հին ասպետական ուխտերու տիպարով»: «Մենք կը հաւատանք, որ տարօնականութեան ոգին փրկարար դեր պիտի կատարէ հայությունը իր ներկայ անկերպարան վիճակէն դուրս բերելու և իր պատմական Հայրենիքին տէր դարձնելու համար»: Այսինքն՝ գուտ քաղաքական գործ: Եւ թէև Կենտրոնական վարչությունը վճռականապէս յայտարարուում է, թէ՛ «կուսակցություն չենք և չպիտի ալ ըլլանք», բայց իրա-



պէս բռնած ճամբան անխուսափելիօրէն տանում է դէպի քաղաք-ականություն և կուսակցություն: Տ.–Տ. Հ. Միությունը անշուշտ առանց այդ մասին մտածելու՝ եղել է նոր քաղաքական կազմակերպություն ստեղծելու:

«Տարօնի Արծիւ»-ի երկրորդ համարում այս խնդիրը արդէն աւելի որոշ է դրւած. «Կայծակը ժայթքեց, բայց խոտոր անցաւ – ձախողեցաւ հայ յեղափոխությունը: Եկաւ տարագրությունը՝ սպանիչ մղձաւանջ: Բայց գործեց նաև ոգիի դինամիկան՝ ցաւի հետ խորացաւ իմացական տառապանքը, զգացումներու փոթորիկը: Հայ յեղափոխութեան ողբերգութենէն յղություն ստացաւ հզօրանքի նորատենչությունը՝ տարօնականությունը»: Եւ աւելի որոշ. «Մամիկոնեան ոգիի պաշտամունքէն ծնունդ առաւ հայ յեղափոխությունը, վերջինէն՝ տարօնականությունը»: Այսինքն, հայ յեղափոխութեան տեղը բռնելու է տարօնականությունը:

Իսկ ի՞նչ է «տարօնականություն» ասւածը. «Յեղի ոգիի յատկություն է տարօնականությունը՝ ռազմախանդ մշակոյթ և կուլտուրաստեղծ հերոսականություն, հոգևոր Մեսրոպականություն և սրտաւոր Վարդանականություն՝ միաժամանակ»:

Իսկ ու տհաս մտքեր կարող են յափշտակել նման դատարկաբանություններով, բայց Տ.–Տ. Հայր. Միությունը ի՞նչ կապ ունի դրանց հետ, որ բաղկացած է տարբեր քաղաքական ըմբռնումների տէր անհատներից և անհրաժեշտօրէն ապաքաղաքական է ու անկուսակցական, ինչպէ՞ս կարող է լինել «**հայրենակցական**» ու պահել իր միությունը՝ դառնալով քաղաքական կազմակերպություն: Էլ չենք խօսում այն մասին, որ «Տարօնի Արծիւ»-ը, իբրև քաղաքական մի նոր կազմակերպութեան բերան, անխուսափելիօրէն բախման մէջ պիտի մտնէ ուրիշ քաղաքական կազմակերպութիւնների հետ, և հետևա՞նք...

Անշուշտ, տարօնցի մեր հայրենակիցները թիրիմացութեան մէջ են՝ նրանք ծառերի յետևից չեն տեսնում անտառը: Շլացած «տարօն-

ականություն», «Մամիկոնեան», «Վարդանանք» բառերից՝ չեն նկատում, թե ի՞նչ վտանգաւոր ճանապարհի վրա են կանգնել: Նախ, տարօնականությունը, եթէ այդպիսին գոյություն ունի, չի կարող փոխարինել հայությունը, որովհետև հայությունը ամբողջություն է, իսկ տարօնականությունը՝ մասնիկ: Երկրորդ, հայրենակցականը դարձնելով քաղաքական կազմակերպություն՝ հենց տարօնցիներն իրենք կը պառակտուին ու կը քայքայուին: Հայրենասէր տարօնցիներ, որ միշտ եղել են ընդհանուր հայկական շարժման առաջին շարքերում, չեն կարող, չպէ՛տք է այդպիսի սխալ ու վնասակար գործ կատարեն: Հայրենակցականը հայրենակցական Միություն է - աւելին՝ ի չար է:

Ս. Վրացեան  
«Վեմ», 1938, թ. 2, էջ 101-103:

## ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Երկու խօսք մեր ա՛յն բարեկամներին, որոնք ինչ որ մտահոգություններով աւելորդ կամ վնասակար են համարում տարօնականությունը: Անմիջապէս ասենք, որ մեր խօսքը վերաբերում է Միմոն Վրացեանին և աւելացնենք, որ հայ առաջաւոր մտաւորականութեան գերագոյն մտահոգությունը պիտի լինէր ցեղի հոգևոր-բարոյական վերանորոգումը:

Ցաւ է պատճառում մեզ թե՛ Վրացեանի ելոյթը, թե՛ հարկադրական մեր այս պատասխանը:

Ի՞նչ է ասում Վրացեանը:

«Վեմ» հանդէսի ԻԲ. թում գրախօսելով ո՛չ թէ «Տարօնի Արծիւ»-ի բովանդակութեան, այլ միայն Տ. Տ. Հ. Մ-թեան Կ. Վարչութեան պաշտօնական յայտարարութեան (Ա. թիւ) և մի խմբագրականի (Բ. թիւ) մի քանի խօսքերի մասին՝ նա հասկացնում է.

Ա. «Տ.Տ.Հ. Մ-թիւնը եկել է նոր քաղաքական կազմակերպություն ստեղծելու», ինչ որ պիտի նշանակէ «տարօնցիների պառակտում» և բաղխում «ուրիշ քաղաքական կազմակերպությունների հետ»:

S.S.Ն. Մ-թեան պաշտօնական յայտարարութեան մէջ ասած է - «թէն ան (S.S.Ն. Մ-թիւնը) կրթական, բարեսիրական և մշակութային գործեր կը կատարէ... իրականութեան մէջ (անոր) գոյութեան հիմքը կազմած են հայրենիքի կորստեան ցաւը և անոր տոչորող կարօտը... սոյն միութիւնը... դարձած է մի հոգևոր Տարօն, ուր տարօնցին կապրի ու կը գործէ յայրենի յուշերով, սովորութիւններով, ցաւերով ու տառապանքներով ու նաև զինքը այրող հայրենիքի ազատութեան պահանջով... թերևս ցեղային ժառանգական ոգու ազդեցութեան տակ (ան) ունեցաւ իր ուրոյն ուխտը... (Մամիկոնեաններու) «քաջութեամբ մեռցուք»-ը: Հայրենիքի և ազգի համար մեռնելու այս ուխտը... աւելի կը պատշաճի քաղաքական բնոյթ կրող հայրենասիրական կազմակերպութեան մը, հին ասպետական ուխտերու տիպարով: ... S.S.Ն.Մ-թիւնը նման բնոյթ և հանգամանք է ստացած, միայն այն տարբերութեամբ, որ մենք հայ ներքին կեանքին մէջ քաղաքականութեամբ չենք զբաղիր, առաջնորդ ըլլալու, դիրքի և պաշտօնի չենք ձգտիր և ո՛չ ալ հատուածական իրարամերժ ձգտումներ ունինք: Կուսակցութիւն չենք և չպիտի ալ ըլլանք: Տարօնականութիւնն է մեր նշանաբան... որ անվերապահ, առանց նկատումի, առանց պայմանի հայրենասիրութիւն կը նշանակէ: Մենք կը հաւատանք, որ տարօնականութեան ոգին փրկարար դէր պիտի կատարէ հայութիւնը իր ներկայ անկերպարան վիճակէն դուրս բերելու և իր պատմական հայրենիքին տէր դարձնելու համար: Որովհետև տարօնականութիւնը պիտանի ոյժեր ստեղծելու և անպիտանները, որոնցմով աւա՞ղ շատ է լեցուած հրապարակը, փճացնելու միտում ունի: Որովհետև տարօնականութիւնը պիտանի ոյժերը համախմբելու, միացնելու և անոնցմէ անպարտելի ոյժ կազմելու ձգտում ունի: Որովհետև տարօնականութիւնը անհատին կուտայ քաջութիւն, կորով և ազատութեան համար մեռնելու պատրաստակամութիւնը»:

Ընթերցողը տեսնում է, որ «**քաղաքական**» բառը այստեղ գործածուած է Մամիկոնեան ուխտի կապակցութեամբ - ուխտ, որ մէկ ու կէս հազարամեակի պատմութիւն ունի և երկու տասնամեակից ի

վեր նշանաբանն է S.S.Հ. Մ-թեան: Մինչև այժմ այդ ուխտը չէր համարում «քաղաքականություն», ո՛չ էլ հ. մ-թինը «կուսակցություն»: Ի՞նչ պատահեց այժմ: Պատահեց մի բան՝ այժմ S.S.Հ. Մ-թինն ասում է, որ այդ ուխտը դատարկ խօսք, մեռած յիշատակ չէ, այլ ապրուն իմաստ և կենդանի ոգի, որ դա վերանորոգչական գործօն է և պատմական զգացումի հետ՝ հայ մարդին տալիս է քաջություն, կորով և ազատութեան համար մեռնելու կամք:

Իրո՞ք, սրանք «քաղաքական-կուսակցական» գործեր են: Դեռ այսօ՞ր էլ հասկանալի չէ, որ տարբեր բաներ են բարոյական յեղաշրջումը, հոգեւորոգչական ոգորումը, վերածնական շարժումը և քաղաքական կուսակցությունը:

Քաղաքական կուսակցությունները թշնամանո՞ւմ են ոգու շարժումներին, թե՞ ձգտում են օգուել նրանց արդիւնքներից:

Այս ի՞նչ հասկացողություն է քաղաքականութեան և կուսակցութեան մասին: Հայ վերածնունդի ռահվիրաները, նրանց տարածած ոգին, կրթական և կրօնական մի շարք հաստատությունները, հէնց նախայեղափոխական շրջանում նոր թափ և բովանդակություն ստացած Մամիկոնեանների պաշտամունքը՝ այս բոլորը կուսակցություններ՞ են, բայց առանց դրանց հնարաւոր էր Հ.Յ.Դաշնակցությունը: Քաղաքական կուսակցությունները կեանքի են կոչում կամ եթէ կան՝ հզօրանում են շնորհիւ վերածնական շարժումների: Նրանք պատճառ չեն, այլ արդիւնք, եզրակացություն որևէ հոգևոր շարժումի:

Յետոյ, մի թե՛ «հայրենիքին տէր դառնալու» պահանջը միայն քաղաքական կուսակցություններին է յատուկ: Չկան անգամ հայրենիքի գաղափարը ժխտող քաղաքական կուսակցություններ: Հայրենասէր որևէ կուսակցութեան գործն է օգուել ժողովրդի խռովքից, կազմակերպել հայրենիքի փրկութեան պահանջը առաջադրող ոյժերը, ե՞րբ է քաղաքական մի կուսակցություն զօրաւոր - այնժա՞մ, երբ ժողովուրդը համակւած է բարոյական անտարբերութեամբ՝ դէպի հայրենիքի ճակատագիրը շօշափող հարցերը, թե՞ այնժա՞մ, երբ դա հայրենաստէր դառնալու խռովք ունի: Ողբալի չէ՞ քաղաքական մի

կուսակցություն, եթե դա գաղափարավախ է, սուկում է վերանորոգչական շարժումներից և գործում է յախտենականի լեզուն չհասկացող ժողովրդի հոգևոր անապատում:

Ի՞նչ է ասում տարօնականությունը: Դա քաղաքական կուսակցություններին ասում է - **«պահեցե՛ք ձեր քաղաքական դիմագիծը, ստեղծեցե՛ք մարտական կազմակերպություն և ես Մամիկոնեան ոգու վերակոչումով կաշխատեմ ձեզ տալ քաջ, կորովի և հայրենիքի համար մեռնելու կամք ունեցող մարտիկներ»:**

Այս խօսքի իմաստը կարող են չհասկանալ նրանք, որոնք մոռացել են Հայաստանի դատը, խորտակել են պարտադրականությունից և ինքնամխիթարելու համար քաղաքական գործը բացատրում են՝ «մշակութային աշխատանք»:

Այս է քաղաքական կուսակցությունների գործը, պարտականությունը, նպատակը: Ո՞չ, բայց միայն այդ դեպքում կարելի է եզրակացնել, որ S.S.Z. Միությունը ելել է քաղաքական կազմակերպություն ստեղծելու և գուշակել, որ դա «անխուսափելիորեն բախման մեջ պիտի մտնե ուրիշ քաղաքական կուսակցությունների հետ», այսինքն՝ ընդունի, որ հայությունը բարոյապես այնքան է ցած և քաղաքականապես այնքան յիմար, որ կարող է «ճառի և անտառ»-ի վեճից ամեն բան իրար շփոթել և երկուսն էլ կրակի տալ:

Սարսափելի գուշակություններ վիժելու փոխարեն՝ հայ մտածողների գլուխը պետք է որ կենսանորոգ մտքեր ստեղծե: Տարօնականությունը բարոյապես բաւականաչափ զօրաւոր ոյժ է և դա կարող է ներքին հրձիգությունը ո՛չ միայն անկարելի, այլև նգովելի դարձնել: Դա միաժամանակ ո՛չ թե սովորական իմաստություն, այլ սրտի իմաստություն ունի հաւասարապէս գուրգուրալ ե՛ւ ճառի ե՛ւ անտառի վրայ: Դա նաև բարոյական հրամայական է՝ «պատմական զգացումը, որով և՛ պատասխանատուութեան առաքինությունը պարտադրական պիտի դառնայ բոլորին, որոնք զբաղւում են քաղաքական գործով»: Դա ինքը քաղաքականություն չէ, այլ Մամիկոնեան բարոյականը և ոգին հայ քաղաքականութեան ու ռազմավար-

ուրթեան մէջ ներարկելու պահանջ: Դա անգամ վերահսկումի յաւակ-  
նութիւն չէ, այլ պարզ նւիրում, եթէ կուզէք՝ ծառայութիւն քաղաք-  
ական բոլոր այն կազմակերպութիւններին, որոնք պիտի պայքարեն  
Հայաստանի համար:

«Վէմ»-ում ասած է՝ հայրենակցական մամուլի գործն է տալ  
հայրենակիցների կյանքը. «ծնունդ, ամուսնութիւն, մահ, զանազան  
տօներ, հանդէսներ»: Մէկը, որ Դեր-Ջօր տեսած, այրածների ճենճե-  
րումից իւելագարելու գերմարդկային տագնապն ապրած մի ժողո-  
վրդի հայրենակցական միութիւնների գործունէութիւնն այս սահ-  
մաններում է պատկերում, նմանը ընդհանուր գծերի մէջ՝ տարբեր  
պատկերում չի կարող ունենալ ե՛ւ կուսակցական-քաղաքական  
գործունէութեան մասին:

Մենք ասում ենք - նախ՝ իւրաքանչիւր ոք իր դերում: Այդպէս  
ասելով՝ մենք հասկանում ենք, որ ամեն կուսակցութիւն պիտի վեր-  
ստանձնէ պատմական իր դերը, իսկ ամեն հայրենակցական պիտի  
գործի ըստ իր հայրերի ոգու հրամայականի:

Ժխտե՛լ, որ հայրենակցականները ամեն բանից առաջ պիտի  
հանդիսանան յիշատակների կրակարան:

Ի՞նչ է տարօնականութիւնը՝ հայոց պատմութեան արժեստեղծ  
դարերի (դիցո՛ւք Դ. կամ Ե.) ոգու պաշտամունքը և մի անհուն՝  
պատմականօրէն ծանօթ ժամանակներից առաջ և մի յաւիտենակա-  
նութիւն՝ մեր օրերից յետոյ: Ներկայում, ուրեմն, դա ստեղծագործ  
մի ոգի վերակոչելու ճիգ է:

Ո՞ր հային հարազատ չէ այդ ոգին: Դա ուրեմն՝ նաև միացուցիչ  
գործօն է օրւայ պառակտուած հայութեան համար: Բայց ինչո՞ւ «գուշ-  
ակել», որ սերնդից սերունդ, հոգով ու մարմնով, եկեղեցիով ու ժողո-  
վրդով Մամիկոնեանների կամ Սահակ-Մեսրոպների պաշտամուն-  
քով ապրող հայութիւնը, տարօնականութեան պատճառով պիտի  
պառակտուի ինչպէս ուրիշներն են քարոզում: Տարօնի ո՞ր արժեքը,  
ստեղծագործութիւնը «հատուածական» է եղել, դրանցից ո՞րը չի կրել  
համահայկական դրոշմ, ո՞րը չի դարձել ազգային ոգու բովանդակ-

ութիւն: «Պատմութեան և մշակոյթի» մի հանդէսի խմբագրի համար դժուար էր մի քիչ իմաստասիրաբար մօտենալ մեր կեանքը շարժող, նրան բովանդակութիւն տող հոգևոր ոյժերին:

Բայց աւելի հասկանալի է, թէ ինչո՞ւ տարօնականութեան պատճառով պիտի պառակուեն «տարբեր դաւանանքի տեր տարօնցիները»: Այդ ո՞ր տարօնցին է, ինչ քաղաքական հոսանքի էլ պատկանի դա, որ պիտի չհասկանայ, թէ իր գոյութեան իմաստը և հայոց պատմութեան մեծագոյն յուշը տարօնականութիւնն է, այն բանը, որ մենք անւանում ենք «Մամիկոնեան ուխտ» և «այրւածների կտակ»: Այդ ո՞ր տարօնցին է, որ Վարդանի, Մեսրոպի կամ իր նոր նահատակների անունը լսելիս պիտի խռովի և քաշի Տ. Տ. Ն. Մ-թիւնից:

Ինչէ՞ր էք ասում ընկ. Վրացեա՛ն, թերևս դուք գիտէք մարդիկ, որոնց գլխում առօրեայի մանր հաշիւներն են փոթորկում: Բայց նմանները անձանօթ են հայ ժողովրդի հոգեգծերին, ընդհանրապես ոգու մարդիկ չեն և մասնատրապէս չգիտեն մի բան - ա՛յն, որ տարօնցի հայը, նախ և առաջ, պատմական զգացումի էակ է:

\*\*\*

**Բ.**«*Հայ յեղափոխութեան տեղը բռնելու է տարօնականութիւնը*»:

Այս եզրակացութիւնն է հանում Վրացեանը «Տարօնի Արծիւ»-ի Բ. թւի խմբագրականից արած իր մէջբերումներով:

Ի՞նչ է ասւած այդ խմբագրականում. «Ստրկութեան դարերու կրաւորականութիւնը չսպանեց մեզ, որովհետև մեր ցեղը գիտցաւ գործի դնել կէնարար զէնք մը՝ Մամիկոնեան Վարդանի հայօրէն կրօնազգաց պաշտամունքը: Ոյժի այս պաշտամունքէն ժայթքեցաւ հայ յեղափոխութիւնը, որու տարերքն յուզողը, արարիչը Մամիկոնեան ոգին էր ու հմայիչ գաղափարատիպը՝ հազարամեակներու հոգևոր իշխան Վարդան Սպարապետը: «Կայծակը ժայթքեց, բայց խոտոր անցաւ» - ձախտդեցաւ հայ հեղափոխութիւնը: Եկաւ տարագրութիւնը՝ սպանիչ մղձաւանջ: Բայց գործեց նաև ոգիի դինամիկան՝

*ցաւի հետ խորացաւ իմացական տառապանքը, զգացումներու փոթորիկը: Հայ յեղափոխութեան ողբերգութենէն յորոթին ստացաւ հզօրանքի նորատենչութիւնը՝ տարօնականութիւնը: Ամուլ է որն է գաղափար, եթէ ընդունակ չէ ծնունդ տալ նորերու, եթէ չունի նորոգումի, ինքնակատարելագործումի ներքին մղում: Մամիկոնեան ոգիի պաշտամունքէն ծնունդ առաւ հայ յեղափոխութիւնը, վերջինէն՝ տարօնականութիւնը: Կը գօրծէ յաւիտենական դարձի օրէնքը: Յեղ էինք և կը ցեղայնանանք: Յեղ էինք և հզօր էինք, կը ցեղայնանանք, որպէսզի կրկին հզօրանանք»:*

Այստեղ խօսուում է ոգու՝ պատմական ոգու, զագացման մասին: Վրացեանը խմբագրում է «պատմութեան և մշակոյթի հանդէս» և պարտաւոր է որոշ պատմագիտական պատրաստութիւն ունենալ, որով՝ հասկացողութիւն պատմական ոգու մասին: Մեր շատ դժբախտութիւնների պատճառն այն չէ՞, որ մարդիկ չեն զբաղում իրանց գիտցած գործերով: Պատմութիւնը յուշ է և հեքեաթ չէ, ո՛չ էլ մշակոյթը՝ սոսկական հետաքրքրութիւն ներքուստ անկապ արժէքների հանդէպ: Այդ երկուսը միասին նախատեսում են իմաստասիրական մերձեցում անցքերին և արժէքներին, որ ասել է նախ իմացութիւն՝ պատմա-մշակութաստեղծ գործօնների, ոյժերի և սրանց զարգացման տրամաբանութեան, ոգու «տագնապի և մղումի» օրէնքների, փոխադարձ ազդեցութիւնների, ներքին կապի, եղելոյթների պատմա-հոգեբանական շղթայակցութիւնների մասին:

Վրացեանի՞ն էլ բացատրենք, թէ կայ կայ մեր այսօրուայ, երեկուայ, հեռաւոր անցեալի միջև, թէ կայ պատմաստեղծ ոգի, պատմական պատճառականութիւն: Եթէ նման բաներ չկան, ինչո՞ւ են սովորում պատմութիւն, ընկերաբանութիւն, ինչո՞ւ գոյութիւն ունեն մանկավարժութիւն, դաստիարակութիւն, ինչո՞ւ են մարդիկ կարևորութիւն տալիս իրենց անցեալի արժէքներին: Մեռեալ չէ՞ որն է ներկայ, որում կենդանիօրէն չի խօսում անցեալը: Առանց Վարդանի պաշտամունքի հնարաւոր էր հայ յեղափոխութիւնը՝ որպէս ոգի, և առ-



հասարակ առանց Մամիկոնեանների՝ մեր հայդուկային շարժումը՝ որպես ռազմական բարոյական և կուլտուրալ: Որի՞ մեթոդն էր փոքրաթիվ ոյժերով, ոգու գերազանցությամբ ոչինչ դարձնել թշնամու թուական գերազանցությունը: Կապ չտեսնել Մամիկոնեան բարոյականի և Քրիստափոր-Ռոստոմ-Զաւարեանի անսահման նւիրումի, Գայլ Վահանի ռազմավարութեան և հայ հայդուկների պարտիզանական կռիւներում յայտնաբերած հերոսական խոյանքների և ռազմական մեթոդի միջև, չի՞ նշանակում չհասկանալ ո՛չ հայոց պատմութիւնը, ո՛չ պատմութիւնը առհասարակ, ո՛չ էլ դաշնակցութիւնը:

Թողենք հայոց ամբողջ գրականութիւնը - Եղիշեից մինչև Ալիշան մինչև Րաֆֆի ու Ահարոնեան և մէջբերենք հենց հոգեբանօրէն շա՛տ հասկանալի պատճառներով տարօնականութեան դէմ ճակատ կազմակերպող Ռուբէն Տէր Մինասեանի խօսքերը. «Յաճախ կը հանդիպինք ծերունիների, որոնք կը յայտնեն, թէ յիսուն տարի առաջ դաշնակցական են եղել, թէն գիտենք, թէ յիսուն տարի առաջ Դաշնակցութիւն չկար: Կամ կը հանդիպենք գիւղական քարոզիչների, որոնք համոզուած կերպով կը յայտնեն, թէ Դաշնակցութեան հիմնադիրը Հայկ Նահապետն էր և դաշնակցական էր քաջն Վարդանը»: («Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը», էջ 19):

Էականն այն չէ, որ մեր կեանքում սկզբունք, բարոյական և երկու օրով ճշմարտութեան արժէք պահող խօսք չկայ, ո՛չ էլ այն, որ հալածանք կազմակերպելով Վարդանների ոգու՝ տարօնականութեան դէմ - այսօր կեղծ Վարդանականները փորձում են միանալ «Վասակեան» ռամկավարներին: Էականը այն է, որ Վրացեանը մինչև երէկ Դաշնակցութիւնը համարում էր Վարդանների հոգևոր արտայայտութիւնը, հինգերորդ դարի հայկական բարոյականի վերապրումը՝ մեր ժամանակներում, իսկ այսօր չի հասկանում տարօնականութիւնը:

«Հայրենիք»-ի իր նոյն յօդուածում Վրացեանը խօսելով Սահակ Մեսրոպի և Թարգմանչաց մասին ասում է. «Նրանց գործով ենք

*ապրում մենք»:* Ուրիշ խօսքով, Վրացեան այստեղ ընդունում է, որ ո՛չ միայն Դաշնակցութիւնը Վարդանանց ոգու մի վերայայտնութիւնն է, այլ և հայ ազգն ու իր մշակոյթը սնւում ու ապրում են Վարդանաների, Մահակ-Մեսրոպյաների գործով:

Տէր Մինասեանին էլ թողնենք հանգիստ, որովհետև նրա համար տեսաբանութիւնը, «անցեալը, բարոյական և մտաւոր արժէքը», ինչպէս ինքն է ասում նոյն գրքոյկի 23-րդ էջում, «գոյութիւն չունին», այսինքն՝ ամէն ինչ հաիշի է և ո՛չ թէ գիտութիւն, բարոյական և ճշմարտութիւն: Բայց ինչո՞վ է բացատրում պատմութեամբ և մշակոյթի հարցերով զբաղող Վրացեանը այս երևոյթը՝ ինչո՞ւ կեղծ եւրոպականութեամբ այլանդակւած հայը դաշնակցականութիւնը, իրաւամբ, համարում է Մամիկոնեան ոգու վերայայտնութիւնը:

Այժմ, հարցնենք 1934 թւականի Վրացեանին՝ ինչո՞վ է նա բացատրում իր հետևեալ տողերը. «... Վարդանանք մեծապէս նպաստեցին հայոց ազգային մշակոյթի պաշտպանութեան: Եթէ հինգերորդ դարում հայերը ենթարկւէին պարսիկների պահանջներին՝ հայ մշակոյթը կը ձուլւեր պարսից մշակոյթի հետ և հայ ժողովուրդը կը ջնջուէր աշխարհի երեսից: Վարդանանց դիմադրութեան գլխաւոր հետևանքը եղաւ հայ մշակոյթը, ուրեմն ե՛ւ հայ ժողովուրդի ինքնուրոյն գոյութեան ապահովումը: Այս տեսակետից Վարդանանց յիշատակը նուիրական է ամենքի համար:... Վարդան-Վասակեան գործելակերպի հակամարտութիւնը այսօր էլ նոյնքան կենդանի է, որքան հինգերորդ դարում էր, պայքարը այդ գործելակերպի շուրջ այսօր էլ շարունակւում է նախկին թափով: Վարդանանք՝ Դաշնակցութիւնը, Վասակը, օրինակի համար, ռամկավարները: Վարդանն ու Վասակը ընդհանուր լեզու չգտան հինգերորդ դարում, դաշնակցականն ու ռամկավարն լեզու չեն գտնում քսաներորդ դարում»... («Հայրենիք», օրաթերթ, 25 փետրուար 1934թ.):

Էականն այն չէ, որ մեր կեանքում սկզբունք, բարոյական և երկու օրով ճշմարտութեան արժէք պահող խօսք չկայ, ո՛չ էլ այն, որ հալածանք կազմակերպելով Վարդանների ոգու՝ տարօնականութեան

դէմ - այսօր կեղծ Վարդանականները փորձում են միանալ «Վասակեան» ռամկավարներին: Էականը այն է, որ Վրացեանը մինչև երէկ Դաշնակցութիւնը համարում էր Վարդանների հոգևոր արտայայտու թիւնը, հինգերորդ դարի հայկական բարոյականի վերապրումը՝ մեր ժամանակներում, իսկ այսօր չի հասկանում տարօնականութիւնը:

«Հայրենիք»-ի իր նոյն յօդաձում Վրացեանը խօսելով Սահակ Մեսրոպի և Թարգմանչաց մասին ասում է. «Նրանց գործով ենք ապրում մենք»: Ուրիշ խօսքով, Վրացեան այստեղ ընդունում է, որ ո՛չ միայն Դաշնակցութիւնը Վարդանանց ոգու մի վերայայտնութիւնն է, այլ և հայ ազգն ու իր մշակոյթը սնւում ու ապրում են Վարդանների, Սահակ-Մեսրոպների գործով:

Բայց երբ մենք ենք նոյնը շեշտում պատմա-հոգեգիտական խորք դնելով իրերի կապակցութեան մէջ, երբ խորհուրդ ենք տեսնում այն բանում, որ ոչ միայն Վարդանները, Սահակները, Մեսրոպները, այլ և հայութեան համար ցեղայաւերժացումի զենք դառնալու ընդունակ բախտորոշ բոլոր ոգորումները՝ խռովքը, խառովածքը, հոգեգիծը, ծնւել և արտայայտութիւն են ստացել Տարօնում: Վրացեանը մոռացութեան է տալիս պատմութեան և մշակոյթի մարդու իր համգամանքը և տարօնականութեան վերագրում ո՛չ միայն «հայ յեղափոխութեան տեղը բռնելու» միտում, այլև պառակտիչի դեր:

Կեանքի իմաստն որպէս «աթոռի ցաւ» ապրող մարդոց միայն ներելի է նման մտավախութիւն: Ի՞նչ է նշանակում «տեղը բռնել» - նոյնաձիւն կամ էակից հոգևոր բովանդակութիւնները և երևոյթները միմեանց «տեղը» չեն բռնում զիրար ժխտելու, հակասելու իմաստով, այլ նրանք փոխադարձաբար լրացնում, ամբողջացնում են իրար: Նարեկացի, Րաֆֆի ասելով ժխտում ենք Մեսրոպը, թե՛ անելի արժեքաւորում սրա ոգին ու գործը: Երբ «հայ յեղափոխութիւն» ասացինք՝ ուրացա՞նք հայոց պատմութիւնը, ժխտեցի՞նք Մամիկոնեան ոգին, Վարդանը, թե՛ անելի՛ կենդանի, անելի՛ խոր դարձրինք սրանց ապրումը: Վրացեանն էլ ընդունում է, որ հայ յեղափոխութիւնը հէնց այդ ոգու մի առարկայացումն է: Այդ առարկայացումն չթաղեց ոգին,

այլ պատմութեան գերեզմանից, բորբոքելով՝ հանեց հին կրակը: Որքա՛ն հուժկու էր Մամիկոնեան ապրումը հայ մարդի մէջ, այնքա՛ն զօրաւոր էր յեղափոխական ոգին նրանում: Վրացեանը կամ սրա հակառակը կը փաստի կամ կընդունի, որ տեսական խղճմտանքով չի շօշափել ոգու և պատմութեան հարցերը:

Եթէ դեռ հասկանալի չդարձաւ, որ տարօնականութիւնը գալիս է ո՛չ թէ ժխտելու հայ յեղափոխութիւնը, այլ նրան նոր շեշտ տալու, ասենք է՛ւ մի ճշմարտութիւն: Մեր յեղափոխութիւնը, հայկական վերածնունդի պակասաւորութեան կամ թերակատարութեան հետևանքով, չստացաւ զանգւածային մեծ շարժի բնոյթ՝ մի պարագայ, որի շնորհիւ Ահարոնեանի խօսքով՝ «կայծակը ժայթքեց, բայց խոտոր անցաւ»: Որ այդ վերածնութիւնը եղաւ Մեսրոպի ստեղծած գրով, Վարդանի և առհասարակ հայոց պատմութեան Ե. դարու ոգու վերակոչումով, ներագդեցութեամբ՝ ո՛չ որ կարող է ուրանալ: Բայց որ նա թերի մնաց, չկարողացաւ հոգեբանօրէն միատարրել հայութիւնը՝ այդ էլ գիտէ ամեն ոք: Որ դրա պատճառները հանդիսացան հայկական միջավայրի քաղաքական պայմանները, թշնամիների հալածանքը, լիապէս չյաղթահարուած ստրկական հոգեվիճակը և հայ մտաւորականութեան մի մասի մակերեսայնութիւնը, երոպականութիւն կապկելու թեթևամտութիւնը՝ այդ էլ կարելի չէ ժխտել: Ասւած է՝ վերածնութիւն նշանակում է պատմական մի ոգու լիազգաց ապրումը, վերակենդանացումը: Այսօր վերածնում է Գերմանիան՝ ցեղի հին ոգու վերակոչումով, Իտալիան որպէս դաստիարակութեան իդէալ և ճակատագիրը խոռովող հոգևոր գործոն՝ ընդունում է հին Հռոմը և Ֆրանսիայում շատերի հետ Էրիոն փրկութիւնը տեսնում է «նախահայրերի նմանելու մէջ»: Ամեն վերածնունդ նախատեսում է նախահայրերի պատմական ոգուն նմանելու ճիգ, իսկ ամեն մեծագործութիւն պայմանաւորում է վերածնական ոգու խոր ներագդեցութեամբ: Վրացեանը գիտէ այս բոլորը, բայց փոխանակ ողջունելու տարօնականութիւնը՝ որպէս համահայկական վերածնունդի հոգե-

գիտական և պատմական հիմք ունեցող շարժում՝ հակասութիւն է տեսնում նրա և հայ յեղափոխութեան միջև: Աւելորդ ենք համարում կրկնել, որ այդ յեղափոխութիւնը հնարաւոր դարձաւ միայն այ՛ն ոգու, վերապրումի շնորհիւ, որին մենք «տարօնական» անուն ենք տալիս, բայց անհրաժեշտ ենք գտնում յայտարարել բոլորին, որ հայոց յեղափոխութեան շարունակումը և մանաւանդ արդիւնաւորումը մենք անկարելի ենք համարում, եթէ ժողովրդին չտրուի վերաքննական ոգի, տարօնական դաստիարակութիւն: Դա արդեօ՞ք նշանակում է ժխտում, թե՞ իմաստաւորում, խորացում: Չգիտենք ինչն է՞ Վրացեանը իր մէջբերումներից դուրս է թողել մեր խմբագրականի հետևեալ խօսքը՝ «*Տարօնականութիւն - այդ ըսել է՝ անիմաստ չէր հայ յեղափոխութիւնը*»: Անիմաստ չէր դա, որովհետև ոգին ստացաւ Վարդաններից: Այդպէս է պատմական կամքի զարգացման օրէնքը: Ամեն ինչ իրար է հիւսւում խորհուրդների անշօշափելի, բայց իմանալի թելով: Մեռած պիտի չհամարէի՞նք Մամիկոնեան ոգին, եթէ դա չվերայայտնէր հայ յեղափոխութեան մէջ և անարժէք, անպտուղ չէ՞ր լինի վերջինը, եթէ ոգու է՛լ աւելի խոր կենտրոնացում, տարօնական լիազգաց մի վերանորոգում չպահանջադրէր: Հայ յեղափոխութիւնը որպէս ազատագրական գործ շարունակւո՞ւմ է, ինչն է՞ չի շարունակւում՝ արտաքին պայմանները, թե՞ ոգու անկում, ազատագրական կամքի տագնապ: Յեղափոխական խմորումների սկզբնաւորման ժամանակ հայ միտքն ու բնագորը դիմեցին Վարդանների ոգուն: Այժմ որի՞ն դիմենք՝ տարօնականութեան՞, թե՞ Վրացեանի որակումով «Վասակացած» տարրերին:

Ինչպէ՞ս վերացնել հայոց պառակտումը, ինչպէ՞ս մշակել քաղաքական կամք: Վրացեանն ինքն է պնդում, որ քսաներորդ դարում կան Վարդանեան և Վասակեան հայեր՝ դաշնակցականներ և ռակալարներ: Իրան ենք թողնում բնութագրել ե՛ւ հնչակեաններին, բոլշևիկներին, չեզոքներին, այլասերւածներին, ինչպէս նաև մի դաւանանքի և երկու եկեղեցու ծառայողներին: Այո՛, պառակտումի

դժոխք է հայ կեանքը: Հենց «Վեմ»-ի ԻԱ. թում «Ազգ»-ից արտատպած իր հին յօդաձով Վրացեանը պահանջում է *«անխնայ լինել դէպի արատաւորում, բարոյագուրկ, զեղծարար, ոչ-յեղափոխական տարրերը, որոնք տեղ են գտել մեր կուսակցութեան շարքերում:* («Վեմ», ԻԱ, էջ 8)»: Այդ ասել չէ՞, որ նկարագրի այլամերժութիւն, սրբի և սրիկայի բնեռացում, այսինքն՝ բարոյական պառակտում կայ ե՛ւ կուսակցութիւններից ներս: Հայ բոլշևիկների իրականութեան փաստը ծանօթ է բոլորին: Միւս «կազմակերպութիւն»-ների մասին կարելի չէ աւելի տխուր չասել՝ ամեն տեղ մէկ եկեղեցի և երկու ժամկոչ: Միայն այդպէ՞ս, ներքուստ պառակտում չէ՞ ե՛ւ հայ մարդու անձնատրութիւնը: Հոգևոր քանդութիւնը, երկմտութիւնը, երկութիւնը ընդհանուր չէ՞ն: Ո՞ր է ամբողջական՝ բնագոյի և մտքի, սրտի և բանականութեան, խօսքի և գործի ներդաշնակութեամբ օժտւած հայը:

Ինչո՞ւ է այդպէս:

Մեր հայեցողութեամբ հայութեան բոլոր դժբախտութիւնների՝ պարտութեան, սրտի անկումի, անհասկացողութեան, բուն պատճառը պատմական ոգու աղօտումն է: Որքա՛ն պակաս է պատմական զգացումը, վերանորոգումի կամքը, այսինքն՝ անցեալի կենսաբանական ապրումը մի ժողովորդի մէջ, նոյնքա՛ն խաթարւած է նրա քաղաքական բնագոյը: Որքա՛ն խոր է տկարութեան, պատմաստեղծումի անընդունակութեան զգացումը, նոյնքա՛ն խոր է ե՛ւ ներքին պառակտումը:

Հոգևոր մոխրացումից մեզ կարող է փրկել միայն, հօգրանքի կամքի վերամշակումը, ցեղային խորք և բովանդակութիւն ունեցող մի վերանորոգում – տարօնականութիւնը:

Հ. Ասատրեան

*«Տարոնի Արծիվ», 1938, թ. 5-6, էջ 76-80, 1939, թ. 7, էջ 34-40:*

ՀՈՒՇԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ  
ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

## **ՔԱՂՎԱԾՔ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ** Ձերբակալված Հայկ Կիրակոսի Ասատրյանի

**Հարց:** Ինչպիսի՞ կոնկրետ նպատակներ էին հետապնդում ապստամբած դաշնակները:

**Պատասխան:** Դաշնակները զինված ապստամբության միջոցով նպատակ ունեին Հայաստանում գրավել իշխանությունը: 1932թ. իմ նախաձեռնությամբ ես սկսեցի հայերեն լեզվով «Խոռովք» փիլիսոփայական ամսագիրը հրատարակել, ուր առաջ քաշեցի իմ վերանորոգչական գաղափարները: Սակայն, կուսակցությունը դրանում ինձ չաջակցեց և որոշ ժամանակ անց այդ ամսագիրը իմ կողմից փակվեց:

Բուլղարիայում կուսակցության Կենտրոնական կոմիտեի ներսում ծագող տարաձայնությունների արդյունքում 1935թ. Բյուրոյի ներկայացուցիչ գեներալ Դրոյի կողմից ես ժամանակավորապես հեռացվեցի կուսակցությունից:

Այդ ժամանակ ես հայտարարեցի, որ կուսակցություն չեմ վերադառնա և իմ նախաձեռնությամբ առանց Բյուրոյի գիտության սկսեցի հրատարակել «Ցեղ և հայրենիք» հանդեսը: Այդ հանդեսում ես քարոզում էի իմ գաղափարները, ինչի արդյունքում հետագայում ձևավորվեց շարժում, որը կոչվեց Տարոնականություն: Այդ ամեն ինչում ինձ աջակցում էր Նժդեհը, այդ պատճառով էլ այդ շարժման առաջնորդները ես և Նժդեհն էինք: Դա առիթ ծառայեց, որպեսզի Դաշնակցություն կուսակցության Բյուրոն իր մամուլում պաշտոնապես հռչակեր կուսակցությունից իմ հեռացման մասին: Այդ ժամանակ Բուլղարիայում դաշնակցական կազմակերպությունները հիմնականում պառակտված էին և հարում էին մեր հոսանքին:

**Հ.:** Ճշգրտեցեք Ձեր և Նժդեհի գլխավորած շարժման անվանումը:

**Պ.:** 1935թ.-ից իմ և Նժդեհի գլխավորած շարժումը կոչվում էր Տարոնականություն:

**Հ.:** Ինչպիսի՞ նպատակներ և խնդիրներ էիք առաջադրել ստեղծելով Տարոնականությունը:



**Պ.:** Իմ հիմնական նպատակը և խնդիրը հետևյալն էր.

1. Հայկական գաղութներում ապրող հայերի հոգևոր և բարոյական կյանքի վերանորոգան անհրաժեշտությունը: Գաղութներում հայկական կուսակցությունների կամ նրանց մնացորդների գոյության ժխտումը:

2. Արտասահմանում հայերը չպետք է մոռանան իրենց հայրենիքը, և անհրաժեշտ է ապահովել նրանց վերադարձը:

**Հ.:** Պատմեցեք Ձեր և Տարոնականության մյուս առաջնորդների կապերի մասին արտասահմանում համանման կազմակերպությունների հետ:

**Պ.:** Տարոնականություն շարժումը իր կազմակերպություններն ուներ բազմաթիվ երկրներում, որոնց ղեկավարներն էին.

Ամերիկայում – Ակրոն

1. Տեր-Իսրայելյան Արիս,
2. Մալոյան Հայկ,
3. Մեմերուշյան:

Նյու Յորքում և Բոստոնում

1. Գեղամյան Գեղակ,
2. Խանիկյան Արաքսի:

Կալիֆորնիայում – Սան-Ֆրանցիսկո

1. Մարգարյան,
2. Աժմարյան,
3. Մամիկոնյան:

Միքիայում

Հարությունյան Արտաշես:

Ֆրանսիայում – Մարսել

1. Բորոյան Սմբատ – խմբապետ,
2. Ներսիսյան,
3. Խորյան,
4. Փոլոյան:

Բուլղարիայում – Սոֆիա

1. Աստվածատրյան:

Պլովդիվում

1. Դավթյան Նշան,

2. Դողրամաջյան Մարտիկ,

3. Թոմասյան Մկրտիչ,

4. Բանգիյան Պետրոս,

5. Փոստանջյան:

Այլ կազմակերպությունների հետ ես կապեր չունեի:

Հ.: Պատմեցեք այն մասին, թե ինչպե՞ս էիք պայքար մղում Խորհրդային Միության դեմ:

Պ.: Դաշնակցություն կուսակցության ներսում պառակտումից հետո ես պայքարում էի վերջինիս դեմ՝ նպատակ ունենալով, որպեսզի նա հրաժարվեր կուսակցամոլությունից և ավելի շատ մտածեր գաղութներում ապրող հայերի մասին: Չեմ ժխտում, որ իմ հրատարակած «Ռազմիկ» թերթում ես բազմիցս տպագրել եմ Խորհրդային Միության և բոլշևիկների դեմ հողվածներ, որոնք վերաբերում էին Հայաստանի սահմանների ընդարձակմանը: Խորհրդային Միության դեմ պայքարի այլ մեթոդներ ես չեմ հիշում: Ընդհակառակն, մենք քարոզում էինք օգնություն Խորհրդային Հայաստանին այն դեպքում, եթե նրա վրա հարձակվեին:

Հ.: Ճիշտ չէ: Դուք որպես Խորհրդային Միության գաղափարական թշնամի, ում դեմ պայքարել էք տասնյակ տարիների ընթացքում, չէիք կարող հայտնվել Խորհրդային Հայաստանի կողմում: Ավելի լավ է պատմեք Ձեր հակախորհրդային գործունեության փաստերի մասին:

Պ.: Չեմ ժխտում, որ երբ ժամանակին ես Դաշնակցություն կուսակցությունում էի, մամուլով պայքարել եմ Խորհրդային Միության դեմ, իսկ գլխավորելով Տարոնականություն շարժումը՝ այդ պայքարը դադարեցրի:

Հ.: Ու՞մ հետ մեկնեցիք Բեռլին:

**Պ.:** Բեռլին ես մեկնեցի միայնակ, իսկ մի քանի օր անց այնտեղ եկան Սեդրակ Ջալալյանը և Ծովասար Պետիկյանը: Նրանք Նժդեհի հետ սկսեցին շրջել ճամբարներում, որտեղ պահվում էին ռազմագերի հայերը:

**Հ.:** Ի՞նչ նպատակով:

**Պ.:** Մենք մտադրություն ունեինք առանձնացնել ռազմագերի հայերին և դրանով իսկ Թուրքիայի դեմ օգտագործման համար ուժ ստեղծել: Իդեալ, հետագայում Բուլղարիայից ժամանող հայերը նախատեսվում էին ռազմագերի հայերի շրջանում քարոզչական աշխատանքի համար:

**Հ.:** Ինչպե՞ս Ձեզ հաջողվեց իրականացնել այդ մտադրությունները:

**Պ.:** Ոչինչ կատարել մենք չկարողացանք, քանզի գերմանական զինվորական իշխանությունները սկսեցին կազմակերպել լեզեռներ:

**Հ.:** Բուլղարիայից Բեռլին երբ և ինչքա՞ն հայ ժամանեց:

**Պ.:** Ճշգրիտ չեմ կարող ասել, բայց ենթադրում եմ, որ 30 հոգի էին: Գերմանիա նրանք ժամանեցին երկու մասով 1942թ. հոկտեմբերին կամ նոյեմբերին և կանգ առան Խոխեն-Բինդե գյուղում:

**Հ.:** Անվանեցեք նրանց անվանապես:

**Պ.:** Այդ խմբի կազմում Բեռլին ժամանեցին ինձ հայտնի հետևյալ անձինք.

Սլիվենից

1. Մարկոսյան Մարկոս,

2. Պետրոսյան Օնիկ,

3. Կասերյան Կարո:

Վառնայից

1. Մինասյան Արամ,

2. Դավթյան Հարություն,

3. Ալթունյան Ջարեհ,

4. Թահմիզյան Արամ:

Բուրզասից

1. Փոստանցյան Գրիգոր,
2. Գյուլագյան Մկրտիչ,
3. Մարտիրոսյան Ժիրայր,
4. Խաչիկյան Մաթևոս:

Պլովդիվից

1. Դոդրամացյան Մարտիկ,
2. Ոսկինարյան Հայկազ,
3. Դավթյան Թագվոր,
4. Մինասյան Ստեփան,
5. Քեովյան Սարգիս,
6. Փափագյան Պողոս:

Ռուշչուկից

1. Սուրեն (ազգանունը չեմ հիշում),
2. Պողոս (ազգանունը չեմ հիշում):

Սոֆիայից

1. Գրիգորյան Աբրո,
2. Ազոնյան Օնիկ:

Մնացածի ազգանունները և անունները չեմ հիշում:

Հ.: Խոխեն-Բինդե նշված խումբը ժամանեց մինչև 1943թ. մայիս: Նրանք անցան մարտական պատրաստվածություն և որոշ ժամանակ՝ պայթեցման գործ: Հետևաբար, այդ խումբը պատրաստվո՞ւմ էր որպես դիվերսանտներ:

Պ.: Այո, այդպես է ստացվում, որ այդ ամբողջ խումբը պատրաստվում էր որպես դիվերսանտներ գերմանացիների օգտին:

Հ.: Ո՞ւմ դեմ էր նախատեսվում տվյալ խմբի օգտագործումը:

Պ.: Ճշգրիտ ասել չեմ կարող, բայց 1943թ. գարնանը հանդիպեցի մայրո Դրումի օգնականներից մեկի՝ կապիտան Շմիդտի հետ, վերջինից իմացա, որ հայերի այդ խումբը պետք է օգտագործվի գերմանացիների կողմից իրենց նպատակների համար: Երբ ես սկսեցի պնդել, թե հատկապես ինչպիսի նպատակներով են գերմանացի-

ները նախատեսում նրանց օգտագործել՝ Շմիդտը հրաժարվեց պատասխանել: Այն ժամանակ ես մտածեցի, որ ամբողջ խումբը Խոխեն-Բինդե գյուղից պետք է տեղափոխվի այլ վայր: Հետագայում պարզվեց, որ նրանց բոլորին տեղափոխեցին գերմանացիների կողմից բռնագրավված Ղրիմի տարածք հավանաբար Խորհրդային Միության դեմ պատերազմում օգտագործելու համար:

Հ.: Պատմեցեք ինչպես էր նախատեսվում օգտագործել նշված դիվերսիոն խումբը Խորհրդային Միության դեմ:

Պ.: Գեներալ Նժդեհի խոսքերից ինձ հայտնի դարձավ, որ այդ խումբը պետք է օգտագործեին Խորհրդային Հայաստանի տարածքում: Այդ հարցում այլ մանրամասնություններ ինձ անհայտ են: Այդ պատճառով Նժդեհի հետևողական պնդմամբ ողջ խումբը բացի որոշ անձանցից՝ 1943թ. դեկտեմբերին վերադարձավ Բուլղարիա:

*Ваче Овсепян, Гарегин Нжде и КГБ, Ереван, 2007, сс. 231-237.*

## ԲՈՒՇԵՒԻԶՄԻ ԶՈՂԵՐԸ ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

(Գարեգին Նժդեհի մահուան առթիւ)

... Նժդեհէն առաջ, նոյնքան և գուցէ աւելի ողբերգական պայմաններուն մէջ մեռած էին Գեորգ Ղազարեանը, Արամ Յակոբեանը, Օննիկ Մխիթարեանը, Ներսէս Աստուածատրեանը և ուրիշներ: Քայքայուած մարմնով հազիւ Պուլկարիա վերադարձած, յանկարծամահ եղաւ նաև «ներման» արժանացած դոկտ. Հայկ Ասատրեանը: Ու տակաւին, Ասատրեանին նման ուրիշներ, ուրիշ երկինքներու տակ:

... Ի՞նչ մեղք ուներ՝ գիտական մտապաշարով հարուստ և իր փիլիսոփայատիպ խառնուածքովը հանրածանօթ դոկտ. Հայկ Ասատրեանը, որուն քաղաքական գործունէութիւնը գրիչ շարժելէն և էջեր սևցնելէն անդին չէր անցած երբևիցէ:

Կարօ Գեորգեան

*«Հայրենիք», Բոստոն, 1957, օգոստոս 11:*

## ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ - ՏՈՔԹ. ՀԱՅԿ ԱՍԱՏՐԵԱՆ

Տասը տարի Խ. Միութեան մէջ արքարուած մնալէ ետք, 1955-ին վերադարձած էր Պուլկարիա: Յանկարծամահ եղած է Սոֆիայի մէջ Յունուար 13-ին: Աւարտած էր Փրակայի համալսարանին փիլիսոփայութեան ճիւղը Տոքթորի տիտղոսով: Կ'ապրեր Սոֆիա նախքան արքարուիլը: Նախկին դաշնակցական:

Կարօ Գեորգեան

*«Ամենուն Տարեգիրքը», Բէյրութ, 1957, էջ 642:*

## ՏՈՔԹ. ՀԱՅԿ ԱՍԱՏՐԵԱՆ

Իր անունը իրմէ առաջ եկած էր Փլովտիվ (Ֆիլիպէ): Բայց եկած էր հակադիր տպաւորութիւններով ու տրամադրութիւններով:

Ոմանք խանդավառուած էին իրմով: Անոր կը վերագրէին շեշտուած նկարագիր, մտաւոր լայն պաշար, դէպքերը դիտելու և վերլուծելու կարողութիւն, խոր ու վարակիչ նուիրուածութիւն դէպի Դաշնակցութիւնն ու անոր գաղափարաբանութիւնը:

Ուրիշներ, ընդհակառակն, զայն կը գտնէին վանողական, ծայրայեղ, նաև միակողմանի իր դատումներուն մէջ, անհանդարտ՝ անկարգապահ ըլլալու աստիճան, ոչ-պայծառ իր հայեցակէտերով և ինքզինքը պարտադրող:

Դրական թէ բացասական՝ այսուհանդերձ Հ.Ասատրեանի մասին արդէն իսկ կը խօսէին ընկերները իր Պուկարիա գալէն քիչ ետք, բոլորը վայրերուն մէջ, ուր կազմեր ունէինք:

Հ. Ասատրեան եղած էր ամէն տեղ ու գրեթէ ամէն տեղ ստեղծած «իր» շրջանակը: Հարկ է ըսել թէ՛ այդ «շրջանակները» լոկ իր անձին հանդէպ որոշ համակրանքի մը արդիւնք չէին, այլ իր ցանկութեամբ թէ իր կամքէն ամկախ՝ «իրեն հետ քալել» նախընտրողներ էին, ինչ որ ինք ոչ միայն չէր անտեսեր, այլ, ընդհակառակն, իր խառնուածքին ու այդ խառնուածքէն բխող գործունէութեան մը համար անհրաժեշտ կը նկատէր, կարծէք: Թերևս ճիշդ պիտի չըլլար ըսել թէ՛ նպատակաւոր էր այդ: Բայց ճիշդ պիտի չըլլար նաև չըսել թէ՛ Հայկը չէր կրնար առանց ստոր ըլլալ:

Մեր, համեմատաբար, փոքր շրջանին մէջ չէինք կրնար անտեսել զիրար՝ հակառակ այն իրողութեան, որ ան Սօֆիա էր, ես՝ Ֆիլիպէ կը բնակէի և անձնապէս դեռ անծանօթ կը մնայինք իրարու: Սակայն, հեռուէն հետևելով անոր՝ ես ունեցեր էի այն տպաւորութիւնը թէ՛ Ասատրեան լճին վրայ սահող կարապի մը նման միշտ «վէտվէտումներ» կը պտտցնէր իր հետ...

Իր անցեալէն ոչինչ զիտէի, երբ կիրակի առաւօտ մը, Ֆիլիպէի «Պետո Սերեմճեան» ընթերցարանին մէջ ես հետևեցայ իր հրապա-

րակային դասախօսութեան: Գրեթէ կիսամութ քեմին առջև, գանկին վրայ սև ու խիտ մազերը թողած անկարգ, թխադեմ, կազմով առոյգ՝ բիրտ ըսուելու աստիճան, գրեթէ անշարժ, բայց բազուկի հատու շարժումներով և դեմքը տեսալես պրկուած՝ երկու ժամ լարուած պահեց սրահը՝ խօսելով մեր բնաշխարհի ու մեր ժողովուրդի էութեանց զուգընթաց գիծերու մասին:

Իր կարգ մը տեսակետներուն հիմքը և միանգամայն իր մէկ քանի բնորոշումները, զորս անճիշդ նկատեր էի, առիթ ստեղծեցին, որ դասախօսութենէն վերջ երկար գրոյց մը ունենայինք երկուքս:

Երկար ատեն ան և ես իրարու մերձեցման եզրեր չունեցանք, ոչ իբրև երիտասարդ մտաւորականներ և ոչ ալ իբրև կուսակցական ընկերներ:

Հ. Ասատրեան անցաւ կուսակցական պատասխանատու դիրքի, լայնցուց «իբ» շրջանակները և մնաց միշտ նոյն «կարապը»՝ հետզհետէ աւելի թնաստարած...

Ու հետզհետէ իր մէջ շեշտուեցաւ այն համոզումը, թէ՛ իր մասին իրաւացի էին թե՞ անոնք, որոնք խանդավառ էին իրմով, և թէ՛ անոնք, որոնք առնուազն վերապահ էին անոր նկատմամբ:

Բացարձակապէս անփոյթ անձին հանդէպ, կենցաղային նախասիրութիւններէ զերծ, անպատասխանատու ըլլալու աստիճան երբեմն անհոգ դէպի իր ստանձնած գործը, անհաշտ յաճախ նոյնիսկ ... ինքն իր հետ, ան տարօրինակ փութկոտութիւն մը ունէր, սակայն ազգային ու կուսակցական ընդհանուր հարցերու նկատմամբ ու շեշտուած նախասիրութիւն մը իր անձնական տեսակետներուն մասին: Նախասիրութիւն ըսի, որովհետև ճիշդ պիտի չըլլար զայն նկատել յաւակնութիւն մը: Ասկէ կը բխէր, ապահովաբար, տարակարծութիւնը, զոր յաճախ կ'ունենար ուրիշներու հետ և որ կրնար յանգիլ անհասկացողութեան:

Ընդոծի՞ն էր իր այդ գիծը, թէ կը բխէր նաև մտաւոր այն պաշարէն, զոր ունէր իրապէս, և այն անժխտելի գաղափարական նուիրուածութենէն, որ մոռցնել ու անտեսել կուտար իրեն ոչ միայն իր շուրջիները, այլե՛ւ իր անձը:



Աւելի վերջ, աւելի մօտէն ճանչնալով զինքը՝ ես եկայ այն համոզման, թէ ինձ նման սխալած էին բոլոր անոնք, որոնք Հայկ Ասատրեանը նկատած էին անձնակեդրոն մէկը: Իր իրապէ՛ս անհանդարտ, միշտ խռովեալ, կարծէք ներքին թաքուն ու անբացատրելի դառնութենէ մը ծնող իր անհաշտ ու անհաշտելի խառնուածքը թերևս արդիւնք էր նաև այն յեղակարծ դէպքերուն, որոնց մէջ գորած ու հասակաւորուած, տառապած ու պայքարած, զրկուած ու միանգամայն ուսած էր ան:

\* \* \*

Ծնած էր Ալաշկերտ, բնիկ Տարօնցի ծնողքէ: Յորձանքէն քշուած՝ ինքը ևս, դեռ պատանի, խուճապին ու մահուան հետ քալած էր մինչև Երևան: Իր տարիքին ու անփորձութեան անհամապատասխան աշխատանքներու էր լծուած յանդգնութեամբ ու վճռականութեամբ և տևապէս եղած էր թոհուբոհին մէջ, իբրև Աշակերտական Միութեան վարիչ: Իր այդ վաղաժամ դերին մէջ իւրացուցած էր հրահանգներ ու վճիռներ արձակելու սովորութիւնը: Ու այդ հանգամանքին բերումով, դեռ այդ տարիքին իսկ համոզուած ու նուիրուած Դաշնակցականի հրայրքէն մղուած՝ տևապէս շփման մէջ էր եղած Դաշնակցական ղեկավար անձերու հետ:

Խորապէս հայրենասէր, համայնավարութեան հանդէպ անհաշտ ու աններող հակամարտութեամբ լեցուած՝ Հ. Ասատրեան չպայթած ռումբի մը տպավորութիւնը թողած էր իմ վրայ: Ու ես կը խորհէի թէ՛ ան աւելի լաւ քան ուրիշներ, ինքզինքն էր բնորոշած, երբ Սոֆիայի մէջ հրատարակած իր պարբերականը կոչած էր «Խռովք»:

Անվիճելիօրէն խռովք մըն էր ան, ինքն իր մէջ ու իրմէ դուրս: Բացասական գիծեր կային, անշուշտ իր մէջ: Կային նաև իր անհանդարտութենէն բխող անգործնական տեսակետներ: Անջատ՝ իր շեշտուած անհանդուրժողութենէն դէպի այս կամ այն անձը և իրմէ բխող վանողականութենէն, որ իրեն նկատմամբ ևս անհանդուրժողութիւն մը կը ստեղծէր այս կամ այն անձին մէջ, իր ոգին նուիրուն

էր, օրինակելի և վարակիչ: Ան հաւասարապէս ե՛լ սիրուած էր, ե՛լ չսիրուած: Եւ հաւասար կերպով ե՛լ առինքնող էր, ե՛լ հեռացնող: Ասիկա արդիւնք էր, ապահովաբար, իր ուժեղ նկարագրին: Ուժեղ՝ իր բոլոր գիծերով, դրական թէ բացասական:

Շեղումը, գոր ունեցաւ ան՝ իրեն հետ առնելով ուրիշներ, հետևանք է աւելի իր խառնուածքին, քան իր մտածողութեան:

Շեղումներ ան ունեցած էր նաև իր անձնական կեանքին մէջ: Եւ, ինչպէս կը խոստովանէր օր մը ինձ իր սէրերուն մէջ իսկ եղած էին պահեր, «երբ յանկարծ խորտակուած էր ամէն ինչ»...

Հակառակ իր այս պոռթկումներուն, հեզ էր Հայկը, չափազանց ընկերական, զոհաբերող: Նիւթը գոյութիւն չունէր անոր համար. զգուանք կը զգար դէպի դրամը: Չունէր նաև կենցաղային նախասիրութիւններ: Տեսակ մը «տէրվիշ» էր, որ աշխարհն ու պայմանները կը յամառէր չտեսնել, ու կ'ապրէր կեանքէն վեր:

\* \* \*

Փրակայի ու Գերմանիոյ մէջ Հայկ Ասատրեան հետևած էր փիլիսոփայութեան: Եւ, յաջողապէս աւարտելէ վերջ համալսարանը, ստացած էր տոքթօր փիլիսոփայութեան տիտղոսը: «Փիլիսոփայ» էր ան այս բառին ռամկական իմաստով, որ նաև «վերացականը» կը բնորոշէ: Մտածող էր՝ այս բառին բովանդակ իմաստով: Կը տրամաբանէր, և իր մտածումները ունէին կշիռ ու խորք: Ընդունակ էր ոչ միայն համոզելու, այլև կախարդելու: Կը նախընտրէր վարել՝ քան վիճիլ: Բայց, օժտուած ըլլալով վիճելու ընդունակութեամբ, հրապարակային կամ լրագրական վեճի մէջ գիտէր «ատամներովը բռնել» ընդդիմախօսը կամ հակառակորդը ու փաստերու և մտածումներու տարափին տակ ճնշել զայն:

Ցեղային ոգին արծարծելու իր տենդը, որ կիրքի մը վերածուած էր իր մէջ զինքը մղեց »Տարօնականութեան» տեսութեան՝ մասը ամբողջէն գերադասելու գնահատումով մը: Անտարակոյս, Տարօնը ծանրութեան կեդրոնն էր Հայաստանեայց աշխարհին: Բայց Ասա-

տրեանի հայեցողութեամբ համահայկական գերագոյն արժէք էր ան, համակեդրոն գանձը, ուժը, ոգին, շքեղանքն ու ներշնչարանը մեր երկրին ու մեր ժողովուրդին:

Իր այդ գնահատումը, սակայն, զինքը չէր մղած նաև իր սէրը կեդրոնացնելու միայն այնտեղ: Ան կը սիրէր Հայրենիքը, անոր ամէն մէկ մթին թէ լուսաւոր անկիւնները, անցեալն ու ներկան: Տառապանքներն ու փառքերը: Ու կը սիրէր պաշտամունքի հասնող ուժգնութեամբ:

Իր այդ հայրենասիրութիւնը լոկ զգացողական չէր: Հայկ Ասատրեան կը ճանչնար մեր Հայրենիքը: Ու կը ճանչնար անսխալ: Մղուած իր սէրէն, ինչպէս և նպաստաւորուած իր արտակարգ յիշողութենէն, ան ուսումնասիրած էր Հայաստանի աշխարհագրութիւնը մանրամասնօրէն: Հայերէն թէ օտար լեզուներով գրուած բոլոր գործերը, որոնք կը խօսին մեր երկրի մասին, ծանօթ էին անոր: Նաև մեր մատենագրութեան մէջ չկար տող մը, որուն վրայ ան տքնած չըլլար: Նարեկացիէն երկար հատուածներ կ'արտասանէր գոց: Իսկ առհասարակ հայերէն լեզուն ան իրեն համար վերածած էր տեսակ մը մասնագիտութեան: Տեսալէս «կը խուզարկէր» բառերը, կը բաղդատէր օտար բառերու հետ ու չէր հանդարտէր, մինչև որ չլուծէր անոնց ծագման կամ արմատի հանգոյցը:

Սեղմ՝ իր մտածումներուն մէջ և ստկէ՝ քիչ մը «թանձր» արտայայտուելու իր ձևով, Հ. Ասատրեան հարկադրուած կ'ըլլար, թէ կը նախասիրէր նոր բառեր կերտել: Իր փոքրաթիւ գրքերուն և բազմաթիւ յօդուածներուն մէջ ունի մեծ թիւով բառեր, որոնք «իրն» են, և զորս կ'արժէ «լոյսին բերել», տրուած ըլլալով որ անոնցմէ շատերը արտայայտիչ են, հեշտալուր և մեր լեզուին օրէնքներուն համապատասխան: Որովհետև այս «տէրվիշը» ոչ միայն հասկացողութիւն և հմտութիւն, այլե՛ւ ճաշակ ունէր: Ճաշակ՝ ամէն բանի մէջ ու գեղեցկագիտական ըմբռնումով: Իրմէ իսկ լքուած բանաստեղծ մը կար իր մէջ: Ունէր նաև աչք: Իրեն ծանօթ կամ մօտիկ անձերուն ամէնէն

աննշան շարժումները կամ գիծերը, ինչպես նաև նկարագրի յատկանիշերը չէին խուսափեր իր տեսողութենէն: Որևէ առթիւ կամ որևէ պահու գիտէր չորս նախադասութիւններով բնորոշել որևէ անձ՝ կենդանի ու հարազատ, ենթակային ներքինն ու արտաքինը զուգորդելով ու իւրայատուկ սրամտութիւնը կցելով:

Ատեն մը Սոֆիայի մէջ խմբագրեց «Ռազմիկ»-ը: Լրագրող մը չէր, անշուշտ: Չէր ալ կրնար ըլլալ՝ այնքա՛ն հեռու էր առօրեայէն ո՛չ միայն մտքով ու հոգիով, այլե՛ւ ապրելակերպով, որովհետև կեանքին լուսանցքին վրայ էր միշտ: Իր յօդուածները, ուր մտածումները զիրար կը հրմշտկէին տեղ գտնելու համար տողերուն մէջ, իր վերլուծումները և քիչ մը տարածուող, բայց թափանցող հայեացքները իր մտքին՝ ոչ միայն իրենց տարողութեամբ, այլե՛ւ իրենց խտացեալ ու նաև մթին լեզուով մատչելի չեղան ընթերցող լայն հասարակութեան. մատչելի եղան միայն մտաւորական դասին, որ չէր բաժնէր, ապահովաբար, իր կարգ մը տեսակէտները:

Շ. Ասատրեանի անժխտելի առաւելութիւններէն մէկն էր նաև այն, որ ան ոչ միայն մեծ գնահատում ունէր մեր ժողովուրդին արժէքներուն մասին, այլե՛ւ մեծ հաւատք դէպի ան: Անխախտելի, նոյնիսկ կրօնական մոլեռանդութեան հասնող հաւատք մը դէպի անոր ապագան:

Շ. Ասատրեան օժտուած չէր հրապարակախօսական տաղանդով: Ճիգն ու ցանկութիւնն ալ կը պակսէին իր մօտ՝ «բեմի մարդ» ըլլալու համար: Աւելի շատ «կը հանէին» զինքը, քան թէ ինք կ'ելլէր: Առհասարակ չէր սիրէր դէմ յանդիման գալ բազմութիւններու հետ, կը նախընտրէր «անկիւնները», թէև ներքին հօգօր մղում մը ունէր վարելու զանգուածը:

Շ. Ասատրեան օժտուած էր պատմելու արտակարգ շնորհով, որուն գիտէր կցել երգիծանքը: Պատահարներու, դէպքերու և անձե՛րու պատկերաւոր նկարագրումով ան թէ՛ համեստ մարդը և թէ՛ մտաւորականը ունկնդիր կը դարձնէր իրեն:

Պուկարիոյ համայնավար յեղաշրջումէն ետք ձերբակալուեցաւ նաև ան: Նախ՝ Հունգարիա էր տարուած ուրիշ ձերբակալեալներու հետ: Հարցաքննութիւնը կատարուած էր այնտեղ: Յետոյ ուղարկուած էր Ուրալի շրջանը:

Տեղեակ էի թէ 1952-ին բերուած էր ճամբար, որ քսան քիլոմէթր հեռու էր այն ճամբարէն, ուր ես կը գտնուէի: Տեղեկութիւն ունէր նաև ան իմ մասիս:

Եւ օր մը, 1955-ի ամբան, ինձ հետ եղող ու իրեն ծանօթ բախտակից մը ինձ լուր տուաւ թէ՝ «Հայկը եկած է»: Գացի՝ գտայ զինքը: Կանգնած էր ճամբարի առողջապահական բաժնի դրան առջև, գրեթէ կքած, մազերը բոլորովին սպիտակացած, երեսը խորշոմած: Կարծէք, ափի մը մէջ ուժգին սեղմեր էին իր դէմքը ու թողեր: Հազիւ կարողացաւ զսպել իր փղձկումը, երբ ջերմօրէն փաթթուեցաւ ինձ և դառն շեշտով մը ձայնին մէջ ըսաւ. «Դու էլ ինձ նման այլանդակուեր ես»:

Հիւանդ էր, կը տառապէր սրտէն: Տարիներ շարունակ կատարած էր մինչճամբարեան երկաթուղին մաքրելու աշխատանքը: Մեր ճամբարին մէջ աշխատանքէ զերծ կացուցին զինքը:

Ամբողջ տարի մը եղանք միասին: Ամէն առաւօտ անպայման՝ ճամբարին դեռ փակ դրան ետնն էր Հայկը, կը սպասէր ինձի: Հոն կը հաւաքուէին բոլոր անոնք, որոնք, զինուորական խիստ հսկողութեան ներքև, աշխատանքի կը տարուէին: Մինչև մեր ելքը, Հայկ ինձ ըսելիքներ ունէր՝ մեր անցեալէն ու ներկայէն, երկրէն ու դէպքերէն, ինչպէս և «շնչուող լուրերէն»: Ու ամէն երեկոյ, մինչև նինջի զանգը, մեր զրոյցը կը շարունակուէր:

Մարմնական տկարութիւնը ոչինչ փոխած էր իր մէջ ու ոչինչ պակսեցուցած՝ իր յիշողութենէն, իր սերէն ու յամառ հետաքրքրութենէն դէպի Հայրենիքը: Գրեթէ ամէն օր, ցերեկուան առանձնութեան պահերուն, բառ մըն էր վերլուծած կամ բառ մը «շինած»: Եւ կը

վիճէինք յաճախ: Իր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուցած էր Հայաստանի վրայ: Կը խանդավառուէր անոր ամէն մէկ յաջողութիւնով ու կը գանգատէր անոր ամէն մէկ ցաւով: Խորհրդային մամուլին մէջ Հայաստանի կամ հայու մը մասին ամենափոքրիկ լուրն իսկ չէր վրիպէր իր ուշադրութենէն:

Աքսորի կեանքին վերջին երկու տարիներուն սկսեք էր գրականութեամբ զբաղիլ՝ միշտ անկիւն մը գտնելով՝ «մրտտելու» համար: Ու մենք առիթներ կը գտնէինք մեր ձեռագիրները կարդալու իրարու: Ինձ կարդաց իր յանգաւոր մէկ վէպը՝ դեռ անաւարտ:

Ես դեռ կանուխէն ունեցած էի այն տպաւորութիւնը թէ՛ Հայկի մէջ գուցէ իրմէ իսկ անծանօթ կամ իրմէ տնապէս անտեսուած գրագետ մը կ'ապրի: Բայց իր վէպը ակնկալածէս աւելին էր: Ինքնեկ, կենդանի, բաբախուն, գունաւոր ու պատկերաւոր: Տիպարներու բացարձակ հարազատութեամբ: Մուշէն Երևան իր հերոսին հետ քալելուց նաև զիս՝ խուճապի, կռուի, սովի ու արեան ճանապարհին վրայ, արցունքն ու ժպիտը գուգորդած իրարու, ցուցադրելով նաև մեր բնաշխարհի գեղեցկութիւնները իր գոյներով ու երանգներով:

Թելադրեցի, որ շարունակէ: «Հազիւ թէ յաջողիմ» ըսաւ՝ սիրտը ցույց տալով: Կը տազնապէր արագ շարժումներէն իսկ:

Օտարահպատակ բանտարկեալները հետզհետէ կը վերադարձուէին: Պուկարիա վերադարձեր էին մէկ քանիներ:

Առաւօտ մը Հայկ եկաւ ինձ մօտ յայտնելու թէ՛ իրեն եղած հարցման մը համաձայն, պէտք է ճշդէ վայրը, ուր կ'ուզէ մեկնիլ: Նախընտրած էր անցնիլ Պարսկաստան՝ իբրև պարսկահպատակ, բայց մերժուած էր: Առաջարկուած էր զինքը ուղարկել Հայաստան, ուր մայր ու քոյր ունէր: Հաւանութիւն չէր ստացած: Քանի մը օր վերջ ըսած էին իրեն թէ՛ «շուտով պէտք է վերադառնայ Պուկարիա»:

Դժգոհ էր, հակառակ անոր որ երկու աղջիկներ ունէր այնտեղ: Իր զօրաւոր բնագոն էր թերևս, որ կը վարանեցնէր զինքը: Եւ նոյն զօրաւոր բնագոյն արդիւնքն էր ապահովաբար որ գիշեր մը «գէշ

երազ էր տեսեր»: Հետաքրքրուեցայ, թէն զարմացայ՝ իր հզօր իմացականութեան հետ անհաշտ գտնելով երազի մասին իր նախապաշարումը: Այսուհանդերձ, գիտէի թէ՛ «մարդկային էակի համար անիմանալի խորհուրդներ կան նաև հէնց մարդկային էակի մէջ», ինչպէս կը խորհէր ան:

- Երագումս,- ըսաւ,- ազատուել էի: Բայց հազիւ ոտք էի դրել ազատ հողի վրայ, յանկարծ մահացայ...

Նկատեցի, որ խորապէս ազդուած էր: Կատակեցի: Ջանացի փոխել տրամադրութիւնը:

Քանի մը օր վերջ, երեկոյան, աշխատանքէ վերադարձիս մուտքի դրանը ետնն էր կրկին: Մօտեցաւ ինձ ու ըսաւ.

- Ինձ հաղորդեցին թէ՛ երկու օրից մեկնելու եմ:

Ուրախացայ: Շնորհաւորեցի: Դառնացած էր:

- Ես պետք է ամենայետին մարդը լինեմ, որ թողնեմ քեզ,- ըսաւ,- ամենքը վերադարձան: Մնացինք դու և ես: Մի՞ թէ ինձ ներելի կը լինի քեզ թողնել այստեղ մենակ ու վերադառնալ...

Յայտնեցի թէ մեր կամքէն անկախ է այդ: Եւ թէ՛ ինքը կը կարօտի հանգստի: Անկարող եղայ հանդարտեցնել զայն:

- Պիտի մերժեմ,- կը կրկնէր,- թո՛ղ տանին սուինի տակ...

Երկու օր տնեց մեր այս տարակարծութիւնը: Ի վերջոյ, տեղի տուաւ: Ուրիշ կերպ ալ կարելի չէր: Ու վերադարձաւ՝ «հոգին թողած իմ մօտ», որովհետև «սիրտս հազիւ թէ կարենայ ինձ տանել մինչև տուն», - ասելցուց:

Մեկնումին օրը համբուրուեցանք՝ առանց ունենալու վերստին զիրար տեսնելու յոյսը: Եւ արցունքի երկու կաթիլներ զլորեցան այտերն ի վար...

Այս աննկուն, անզիջող, յամառ ու կորովի տղան առաջին անգամ կը տեսնէի պարտուած: Պարտուած՝ ոչ թէ տարիներու ծանրութենէն, հազիւ յիսունըհինգ էր իր տարիքը, այլ՝ ինքն իրմէ, իր ընկերական բոլորանուէր ու պատրաստակամ ոգիէն:

Ու ես, մնալով այլևս բոլորովին մինակ, թէև խորապէս ուրախ էի, որ նաև Հայկը կը վերադառնայ, Բայց նոյնքան ցաւեցայ՝ իր արցունքի կաթիլներուն մէջ տեսնելով «ընկեր մը տառապանքին մէջ առանձին թողելուն» համար զգացած և զգեսնելու չափ խոր ամօթը՝ ինքն իր առջև...

Այսպէս էր Հայկը՝ խորքով: Այսպէս էր, սակայն հակադիր երևոյթի մը ներքև: Եւ այդ էր պատճառը, որ շատեր, որոնց կարգին նաև ես, սխալ ճանչցանք զայն, կամ սխալ ճանչցուց ան ինքզինքը:

Անցեալին մէջ նաև ես յաճախ մեղադրած էի զայն: Ու չծածկեցի իրեն այդ, երբ, վերջին տարին, երկուքս ալ կեանքին վերադառնալու յոյսէն գրեթէ զուրկ, սրտաբաց կերպով կը խօսէինք իրարու հետ:

Իր մեկնելէն վերջ միայն անդրադարձայ թէ՛ իբրև կուսակցական ընկեր իրմէ ունեցած դժգոհանքներս ոչ միայն ան յաջողեր էր ջնջել մէջս՝ պարզելով կարգ մը թիրիմացութիւններ, այլե՛ւ ստեղծեր էր մէջս սէր մը հայրենապաշտ մտաւորականի մը և լաւ ընկերոջ մը հանդէպ:

Մէկուկէս տարի վերջ, Գերմանիա վերադարձիս, պատահաբար տեղեկացայ թէ՛ իրականացած էր իր կեանքին ամենէն անողոք երազը՝ Հայկ, հազիւ ոտք կոխած Սոֆիա, յանկարծամահ էր եղած...

Մխիթարութիւնը չունեցայ ասի մը հող դնելու նաև իր գերեզմանին վրայ: Բայց իր վաղաժամ մահէն վերջ, մխիթարանքս մնաց այն խոր համոզումը թէ՛ Հ. Ասատրեան մինչև իր վերջին րոպէն եղաւ ու մնաց գերազանցօրէն հայրենասէր հայ և հաւատաւոր Դաշնակցական:

Սօսեաց տղան  
*«Հայրենիք», 1958, թ. 5, էջ 79-84:*



## ՏՈՔԹ. ՀԱՅԿ ԱՄԱՏՐԵԱՆ

Օնած է Տարօնի Ալաշկերտ գիւղը 5 Փետրուար 1900ին:

Հայրը՝ Կիրակոս Տաճատ Ասատրեան, իսկ մայրը՝ Հեղինէ Տէր Կարապետեան՝ քահանայի աղջիկ էր: Ունէին չորս զաւակներ՝ Տաճատ, Հայկ, Արաքսի և փոքր քոյր մըն ալ, որ կը մեռնի 95ի ջարդին:

Կիրակոս գիւղի երևելիներէն ըլլալով, գիւղացիք զինք գիւղապետ կ'ընտրեն ու ան կը ճգնի ծառայել իր ժողովրդին: Անկախ իր գիւղապետի հանգամանքէն, կը նուիրուի ազգային գործունէութեան ալ: Իր շուրջը կը հաւաքէ գիւղին երիտասարդութիւնը ու կը խանդավառէ ազգային ոգիով:

Գիւղապետի այս քայլը հաշտ աչքով չի դիտուիր շրջակայ քիւրտ ազգաբնակչութենէն, և օրին մէկը քիւրտի մը միջոցաւ ահաբեկման կ'ենթարկուի Կիրակոսը: Այն ատեն Հայկ տակաւին 8 տարեկան էր: Հօրը մահէն ետք իրենց ընտանեկան կեանքը կը դժուարանայ:

Այդ տարին մայրը զինք դպրոց չի դնէր, քանի որ իրենց սեփական կենդանիները արածող մը պէտք էր, և յարմարագոյնը ինքն էր: Եղբայրը պիտի շարունակէր դպրոցը՝ մինչդեռ Հայկ տակաւին նո'ր պիտի սկսէր: Այս կարգադրութեամբ թէ՛ դրամ վճարելու տաղտուկէն կ'ազատէին և թէ՛ ալ մեծ եղբայրը չէր գրկուեր ուսումէն:

Պատանի Հայկ ակամայ կը համակերպի առժամապէս ու կը սկսի արածել իրենց փոքրիկ հօտը: Իր մէջ սակայն արթնցած ըլլալով ուսման սերը՝ կը դիմէ դպրոց յաճախող ընկերակիցներուն ու կը հետաքրքրուի անոնց դասերով: Վերադարձին կը խնդրէ եղբորմէն, որ դաս տայ իրեն: Տաճատ սիրով կ'ընդառաջէ: Հայկ եղբորմէն կը սորվի Այբուբենը:

Բայց այս երկար չի տներ: Գիշեր մը Հայկ կը թողու իր ծննդավայրը ու կ'ապաստանի մօրեղբօրը՝ Տէր Սարգիս Կարապետեանի քով, որ կը բնակէր իրենցմէ քիչ հեռու գիւղաքաղաք մը:

Տէր Հայրը հաճութեամբ կը լսէ փոքրիկին խօսքերը, որոնք սրտին կը դալին... Ան կ'ըմբռնէ կացութիւնը ու չ'ուզեր նիւթականի

համար քրոջը զուգահեռ զրկել ուսումէ, ուստի կ'որոշէ գոհացում տալ Հայկի փափաքին:

Երկրորդ օրը Տէր Սարգիս քահանայ պգտիկը կը տանի տեղւոյն դպրոցը արձանագրելու: Տնօրէնը սակայն կը մերժէ առարկելով, որ կրթարանը իր դուռը բացած է երեք ամիսներէ ի վեր և տեղ ալ չունին:

Քահանան տակաւին բերանը չբացած՝ Հայկ կը դառնայ տնօրէնին ու կ'ըսէ անոր.

- Ես կրնամ կարդալ ու գրել և շուտով հասնիլ ինծի ընկերացողներուն: Յետոյ ոչ մէկ բանի պէտք ունիմ, կը գրեմ ծունկերուս վրայ:

Պատանեակի սոյն խօսքերը խորապէս կ'ազդեն տնօրէնին թէ քահանայի վրայ: Տնօրէն կ'ընդունի զինքը: Շատ չանցած, Հայկ կը սիրուի բոլորէն ու կը դառնայ դասարանի առաջին աշակերտը:

Վարժարանի ազգային մթնոլորտը իր բարերար ազդեցութիւնը կը ձգէ պատանի Հայկի սրտին ու մտքին վրայ: Հո'ն կը լսէ անունները Գէորգի, Հրայրի, Անդրանիկի, Գալէի, Չոլոյի, Մանուկի և այլոց: Կը ծանօթանայ նաև անոնց գործունէութեան:

Հայկ հետզհետէ կ'ոգևորի հայ ֆետայիներու գործերէն, որոնք իր ուսման հետ կ'արծարծեն անոնց հանդէպ ունեցած սերը:

Տեղւոյն Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարները տեսնելով Հայկի ուսման մէջ ունեցած յառաջադիմութիւնն ու զարգացումը՝ դպրոցը աւարտելէն ետք զինք կը նշանակեն Աշակերտական Միութեան անդամ:

Ան կը շրջի զանազան վայրեր՝ դրապէս իր օժանդակութիւնը բերելով Աշակերտական Միութեան: Որմէ յետոյ երկրորդական ուսումը շարունակելու համար կը մեկնի Երևանի թեմական դպրոցը:

Իր մասին Անտրէ Ամուրեան կ'ըսէ. «Առաջին անգամ Հայկի հանդիպեցայ 1917 թուի Ռուսական Յեղափոխութեան սկզբնական ամիսներուն: Հայկ Երևանի «Թեմական Դպրոց»-ի աշակերտ էր: Էջմիածին եկաւ «Կուսակցական-Աշակերտական Միութեան» կողմէ՝ պատգամաւոր հրաւիրելու Երևան, ուր պիտի խօսուէր Կուսակցա-

կան Աշակերտական կազմակերպութեան մասին ու կապ պիտի ստեղծուէր մասնաճիւղերուն հետ»:

Այդ օրերուն Ա. Ամուրեան կ'աշակերտէր Էջմիածնի Գեորգեան Ճեմարանին: Ուսանողներու յանձնարարութեամբ Ամուրեան՝ Հայկի հետ Երևան կ'երթայ ժողովին մասնակցելու համար: Հոն Հայկ կ'ընտրուի իբր գործօն և ապա «Ուսանողական Պիւրո»-յի անդամ:

Հայաստանի Հանրապետութեան օրերուն Հայկ Ասատրեան լիով կը կատարէ իր վրայ դրուած բոլոր պարտականութիւնները: Ան կը մասնակցի Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ ընդհանուր ժողովին, որ տեղի կ'ունենայ 1919-ին Երևանի մէջ: Պատգամավոր ընտրուած էր Աշակերտական կազմակերպութենէն:

1921-ի Փետրուարեան Ապստամբութեան ևս կը բերէ իր մասնակցութիւնը: Երբ Կարմիր Բանակը Հայաստան մտաւ, ուզեց ձերբակալել ապստամբութեան մասնակցողները: Գիշեր մը, իրեն ծանօթ և դպրոցի նախկին դասընկերներէն քանի մը հոգիներ կու գան յայտնելու, թէ կառավարութիւնը զինք ևս պիտի ձերբակալէ, լաւ է որ հեռանայ: Որով նոյն օրն իսկ Հայկ Ասատրեան հրաժեշտ կու տայ մօրը, քրոջը, եղբօրն ու մօրեղբօր և ընկերներու հետ ձիերը նստած, կը հասնի պարսկական սահման ու կ'անցնի Թաւրիզ: Ատեն մը հոն մնալով, կը ստանայ պարսկական անձնագիր:

Թաւրիզի մէջ իրարու կը միանան Հայաստանի ուսանողներն ու մտաւորական դասը: Շատ չանցած Զօր. Գարեգին Նժդեհ ևս Թաւրիզ կը ժամանէ ու երկուքը միասին կ'անցնին Եւրոպա:

Հ.Յ.Դաշնակցութիւնը ուսանողներ ղրկեց Չեխոսլովաքիոյ մայրաքաղաք Փրակայի համալսարանը ուսանելու՝ անոնցմէ մէկն ալ ինքն էր:

Ա. Ամուրեան կ'ըսէ.

«Հայկ մեծ եռանդով նուիրուցեալ փիլիսոփայութեան ճիւղին: Կարդալու և պարապելու հետաքրքրական և ինքնօրինակ կերպ մը ունէր: Նախ՝ վերարկուն երբեք չէր հագներ, այլ՝ կը նետէր ուսերուն: Յաճախ կը նստէր յատակին ու Ֆրիդրիխ Նիցշէի և կամ Կան-

տի գիրքը առջևը դրած՝ կը կարդար եղանակով, ճիշդ տերվիշի տպատրութիւն ձգելով: Արդէն կենցաղով ալ Հայկը տերվիշ էր, աննիւթասէր, կեանքի հաճոյքներուն վրայ քամահրանքով նայող, սակաւակեր ու սակաւապէտ, շատ ուտելիքներէ զզուող, ե՛ւ վանականի, ե՛ւ աշխարհականի տիպ: Ունէր ճշդորոշ և խիստ սկզբունքներ, կ'ատէր սուտն ու կեղծիքը, շողոքորթութիւնն ու քծնանքը, մարդոց թերութիւնները կ'ըսէր իրենց ճակտին: Իր ունեցածը ոչ միայն կը կիսէր ուրիշին հետ, այլ նոյնիսկ կու տար ամբողջովին, յաջորդ օրը անօթի մնալու պայմանով»:

1924-ի վերջերը Շէյխ Սայիտ երբ Թուրքիոյ մէջ ապստամբութեան դրօշը կը բարձրացնէր, Հայկ արտակարգօրէն կը հետաքրքրուի այս հարցով և այդ օրերուն դասախօսութիւն մըն ալ կու տայ ուսանողական տան մէջ, դաշնակցական ուսանողներուն:

1930-ին Ասատրեան կ'աւարտէ Փրակայի Կառլով Համալսարանի փիլիսոփայական ճիւղը, դոկտորայի աստիճանով:

Ապա կ'անցնի Պուլկարիա, ուր կը մնայ Գարեգին Նժդեհի մօտ: Ան իբր կուսակցական գործիչ կը շրջի Փլովտիւ, Մդարազակորա, Վառնա, Ռուջուկ, Պուրկազ, Յունաստան, Ռումանիա, Գերմանիա և այլ վայրեր:

Հայկ Ասատրեան 1933-ին կ'ըլլայ խմբագիրը Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ հրատարակուող «Ռազմիկ» թերթին, ուսուցիչ՝ Գեորգ Մեսրոպ ճեմարանին և միաժամանակ քարտուղար՝ կուսակցութեան Կեդր. Կոմիտէին: Ան գործած է միշտ Զօր. Գարեգին Նժդեհի հետ:

1942-ին փիլիսոփայ Տոքթ. Հայկ Ասատրեան վերջացնելով իր «ARMENIAN VOR POSTEN» անունը գիրքը, փութով կը մեկնի Պերլին, զայն գերմաներէնի թարգմանել տալու և անմիջապէս հրատարակելու համար: Այս բանը շատ կարևոր էր, անոր համար, որ կարգ մը գերմանացի և ֆրանսացի գիտնականներ սխալ տեղեկութիւններ տուած էին հայ ցեղի ծագման մասին: Հետևաբար հարկ էր գրմանացիներուն հասկցնել, թէ Հայը **սեմական** ծագում չունի, այլ՝ **արիական**:

1943-ին Հայկ կը վերադառնայ Սոֆիա ու կրկին կ'անցնի իր խմբագրութեան պաշտօնին: Այն ատեն գրած էր ուրիշ գիրք մը ևս, որ տակաւին լոյս չէ տեսած:

1944-ին համայնավարները գրաւեցին Պուլկարիան ու ձերբակալեցին 32 դաշնակցականներ: Նոյեմբեր 20-ին Գարեգին Նժդեհ, իսկ 30-ին ալ Հայկ Ասատրեան կը ձերբակալուին: Ապա Ներսէս Աստուածատուրեանը և ուրիշներ:

Հայկը նախ կը դրկեն Գիշնի բանտը, ուր շատ կը չարչարեն զինքը նոյնիսկ ջուրէ գրկելով: Ապա, Ուրալի բանտը, ուր կը մնար իր միւս ընկերներուն մէկ մասը, գրեթէ ամէն օր անօթի ու ծարաւ: Օրէ օր բանտերը կը լեցուին բանտարկեալներով: Մնունդի զգալի պակասն ու խոնաւութիւնը և ցուրտը պատճառ կ'ըլլան, որ մարդիկ մեռնին բանտի մէջ:

Հայկ կ'ունենայ սրտի տագնապ մը ու կը մնայ անկողին:

Օր մը բանտակիցներէն մէկը կու գայ և կ'իմացնէ Հայկին՝ թէ Ներսէս Աստուածատուրեան մեռած է և զինք գերեզմանատուն պիտի տանին թաղելու:

Հայկ հազիւ հազ կրնայ գլուխը անկողինէն վեր հանելով պատուհանէն տեսնել իր սիրելիին դիակը, որ դուրս կը հանէին: Այդ գիշեր աւելի կը ծանրանայ ու ամիսներով պառկած կը մնայ:

Ասատրեանի հիւանդութեան ծանր օրերուն էր, որ իրեն ձուկ կը բերեն ու կը կերցնեն առանց փուշերը մաքրելու: Անոր փուշերը կը մտնեն լինտերուն ու ծանրօրէն կը վնասեն իր առողջութեանը: Այս անգամ ա'լ աւելի ծանրանալով կը բռնուի **ցինգա** հիւանդութեան:

Փիլիսոփայ Տոքթ. Հայկ Ասատրեանի բանտարկութենէն ատեն մը ետք կը ձերբակալեն նաև իր ընտանիքն ու երկու աղջիկները և կ'աքսորեն Փլիվէնտ, ապա՝ Փաւլիքիսի:

Տեղացի համայնավարներ Հայկ Ասատրեանի տան դուռին վերևը գրած էին. «Այս տան մէջ կ'ապրի կառավարութեան **թշնամի** կին մը, որուն ամուսինը բանտը կը գտնուի, պէտք է միշտ հետապնդել

զինք»։ Իսկ Չեկան ստիպած էր Հայկի կնոջ ու աղջիկներուն, որ ամեն առաւօտ ու իրիկուն երթան ստորագրելու ներկայութեան թուղթերը։

Այսպէս կը սահին օրեր, շաբաթներ, ամիսներ... Ոչ մէկ լուր Հայկէն։ Մինչդեռ Չեկայի պաշտօնեան ամեն օր գրեթէ կու գար իրենց և սուտ գրպարտութիւններ գրելով կը ստիպէր տիկնոջը ստորագրելու զանոնք։ Տիկինին կ'արգիլուի նոյնիսկ աշխատանքը, որ կարենայ պահել իր երեխաները։

1947-ին Չեկայի կողմէ տիկին Ասատրեան կը ստանայ երկտող մը, որ կը գուժէր մահը Տոքթ. Հայկ Ասատրեանի։

Տոքթ. Հայկ Ասատրեանի մահուան սև լուրը հաղորդելէ ետք Չեկայի պաշտօնեան այս անգամ տիկնոջը կը մօտենայ Յուդայի ձևով, նոր մեքենայութեամբ...։ Կը խրատէ զինք ամուսնանալ, որպէսզի կարենայ աշխատանքի իրաւունք ստանալ և պահել իր զաւակները, հակառակ պարագային կը նկատուի հակակառավարական անձ մը։

Տիկին Ասատրեան ճարահատ 1951-ին ստիպուած կ'ըլլայ ամուսնանալ պուլկարացիի մը հետ, որուն շնորհիւ կը կարողանայ պահել երկու աղջիկները։

Քանի մը տարի ետք, 16 ապրիլ 1955-ին, Հայկ Ասատրեան ծանր հիւանդ կը վերադառնայ Սոֆիա և կը մնայ իր մեծ աղջկան՝ Հեղինէի քով։ Ան ցաւով կը լսէ Չեկայի խաղերը իր ընտանիքի գլխուն, և կը ստիպուի հաշտուիլ ողջ իրականութեան հետ։ Կինը գրեթէ ամեն օր կ'այցելէ իրեն, տանելով խնամատարական աշխատանք։

Հայկ հազիւ թէ ոտքի ելած՝ առաջին գործը կ'ըլլայ այցելել կորսուած կամ բանտերու մէջ մեռած իր ընկերներու ընտանիքներուն ու զաւակներուն։

Բանտարկութեան տասը տարիներու ընթացքին Ասատրեան կը գրէ «Դիւցազներգութիւն» մը՝ հայ ժողովուրդի մասին։

\* \* \*

13 յունուար 1956-ի երեկոյեան, փիլիսոփայ Տոքթ. Հայկ Ասատրեան անկողնէն ելլելով տաք բաղնիք մը կ'առնէ ու ապա իր Հեղինէ աղջիկը կանչելով կ'ըսէ անոր.

- Պատրաստ եմ մահը դիմաւորելու, բայց չեմ ուզեր, որ զիս մերկացնեն ու լուան:

Մահուան այդ մէկ-երկու ժամերուն ան կ'ապրի իր սիրելի անհետացող ընկերներուն հետ, յարատւօրէն յիշելով Ներսէս Աստուածատուրեանն ու Զօր. Գարեգին Նժդեհը: Եւ երեք անգամ երկինք նայելով կ'ըսէ.

- Ա՜խ Հայաստան, ա՜խ Հայաստան, ա՜խ Հայաստան:

Ու կը կնքէ իր մահկանացուն սրտի կաթուածով:

Այսպէս կը վերջանայ կեանքը ինքնօրինակ, ինքնանոտիպ, արտակարգ նկարագրի տէր կարող մտաւորական Տոքթ. Հայկ Ասատրեանի, որ միշտ մնաց սոսորտուն ազգային ջերմ զգացումներով:

\* \* \*

Լոս Անճելըսէն ընկեր Սարգիս Սարունիի «Յեղափոխական Ալլաով»-ին ուղղած 13 Յունիս 1970 թուակիր նամակէն կ'արտագրենք այն մասը, որ կը վերաբերի Տոքթ. Հայկ Ասատրեանի:

«Երբ, 1955 Ապրիլին, վերջացուցած ըլլալով տասնամեայ պատժամանակաշրջանը մեզ դէպի տուն դրկելու պատրաստութեան մէջն էր, Սիպերիայէն բերին, Մոսկուայի մօտիկ Պըքրովա կայանը: Այս կայանին մէջ արդէն կիսանկախ էինք: Ահա հող, այդ վերջին կայանին մէջ հանդիպեցայ լեհ բախտակիցի մը, որ գուրգուրանքով պահած էր Հայկի մէկ ձեռագիրը: Ահա թէ ինչպէս: 1955 ապրիլի սկիզբները, երբ դէպի տուն ճամբու ընթացքին Հայկը ևս կը բերեն այդ վերջին կայանը, վախնալով, որ պուլկարական սահմանին վրայ խիստ քննութեան կ'ենթարկուի աքսորավայրին մէջ իր գրած մէկ դիւցազներգութիւնը, Հայկը ձեռագիրը կը յանձնէ այդ լեհին, խնդ-

րելով, որ տանի իրեն հետ Լեհաստան և պահէ մինչև որ լաւ օրերը գան և կարենայ Հայկին վերադարձնել այդ գրութիւնները: Ձեռագիրը անձնապէս կարդացի և վերադարձուցի լեհ բանտարկեալին: Թերթի լուսանցքներուն վրայ, Հայկ գրած էր ընդարձակ դիւցագներգութիւն մը, որով կու տար հայ ժողովուրդին ամբողջ պատմութիւնը, սկիզբէն մինչև մեր օրերը: Թուղթի չգոյութեան հետևանքով, **թերթերու լուսանցքներուն վրա** գրուած Հայկի այդ հոյակապ դիւցագներգութիւնը, ով գիտէ ո՛ր անձանօթ այդ լեհին մօտ կը մնայ այժմ, կամ արդէն իսկ անյայտացած անձանօթ այդ մարդուն կողմէ:

Այս ալ քեզի տեղեկութիւն ահա Հայկի մասին: Եթէ քեզի անձանօթ է, ըսեմ նաև, որ Հայկը աջ բագուկն էր Նժդեհին, երբ «Յեղակրօնութիւն» գաղափարաբանութիւնը կը խմբագրէր»:

Տոքթ. Ասատրեանի մահով Դաշնակցութիւնը կորսնցուց անձնուէր գործիչ մը և մեր ժողովուրդը՝ կարող մտաւորական անձնաւորութիւն մը:

ԱԼՕ

*«Յեղափոխական Ալպոս», 1971, թ. 11, էջ 283-291:*



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուշեղ Լալայան, *Հայկ Ասատրյան (Կենսագրական ակնարկ)* ..... 3

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ,  
ՀԱՅ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՅԻՍ 28-Ի ՄԱՍԻՆ ..... 10

ՑԵՂԱՆԵՆԳ ՇԷՅԹԱՆԸ. *ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ*  
*ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ* ..... 41

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

Մայիս 28 ..... 99

Գործի գաղափարախոսը ..... 103

[Հ. Ասատրյանի պատասխանը Ս. Վրացյանին] ..... 106

### ՀՈՒՇԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿ ԱՄՍՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Քաղվածք հարցաքննության արձանագրությունից ..... 122

Կարօ Գեորգեան, *Բոլշևիզմի զոհերը Պայքաններու մէջ* ..... 128

Կարօ Գեորգեան, *Մահագրորթին* ..... 128

Սօսէաց տղան, *Տոքթ. Հայկ Ասատրեան* ..... 129

Աւօ, Տոքթ. *Հայկ Ասատրեան* ..... 139

Շուհի՛ր այրուղի թղթի պէս եւ գալարուիք որքան ուզում ես, մարմնի մոխիր եւ ոգու ստուեր կը դառնաս դու, եթէ յաւիտենականը իր ողջ խանդով չի արձագանքում մէջդ - «Գոյ ես, որովհետեւ այնքան ես հին, որքան՝ նոր»:

Ունայնութեան մնացորդ է որեւէ երամակ, նախիր կամ ժողովուրդ, եթէ դա իր գոյութեան պատճառներից դէպի ճակատագրի հարցերը չի անցնում նպատակի կամուրջով, եթէ արշալոյսին չի զգում, որ կեանքն աւելի՛ խոր իմաստ ունի, քան ապրելու հաճոյքն ու մահուան ցաւը, եւ վերջալոյսին չի գիտակցում՝ հենց նրա համար կրկին պէտք է արթնանալ, որ վաղուայ մէջ նո՛յնքան իմաստ կայ, որքան երէկուայ:

Հագարամեակների ձայնով մենք կանչում ենք -  
«Արթնացի՛ր, հա՛յ մարդ»:

- Մեր վիշտը նրանում չէ, որ աշխարհում թուրք կա, այլ նրանում, որ թրքատիպ հայ կա:
- Ժողովուրդները ոչնչանում են նաև մյուսների մասին իրենց ունեցած սխալ գիտելիքների և իրենց մասին ուրիշների կազմած թյուր կարծիքի հետևանքով:
- Հայը մի՛շտ էլ զոհ է դառել եվրոպացու ազնվության մասին սնուցած միամիտ իր հավատին:
- Պատմության մեջ ամենաանարժեք բանը դավաճանի հիասթափությունն է, չարագործությունից հետո: